

## «Դէմ Եմ» Շարժումը Անընդունելի Կը նկատէ Կուսակալին Վճարումները Որպէս Խարկ Զեւակերպելու Տարբերակը



«Դէմ Եմ» շարժումի մասնակիցներու բողոքի ցոյցը Երեւանի մէջ

Հայաստանի մէջ գործող «Դէմ Եմ» շարժումը, որ ժամանակէ մը ի վեր կը պայքարի պաշտօնեաներու ամսականին ծերութեան կենսաթոշակի համար պարտադիր կուտակային գումարներ պահելու կառավարութեան որոշումին դէմ, անընդունելի նկատեց իշխանութիւններու նախաձեռնութիւնը՝ այդ գումարները որպէս հարկ ձեւակերպելու կապակցութեամբ:

Ըստ շրջանառուող տեղեկութիւններուն, կառավարութիւնը պատրաստած է օրէնքի տարբերակ մը, որ եթէ Սահմանադրական Դատարանը որոշէ, որ կուտակայինի վճարները հակասահմանադրական են, քանի որ մայր օրէնքով պարտադիր են միայն հարկերն ու տուրքերը, ապա գործադիրը Ազգային ժողով պատրաստ է ուղարկուելու օրէնքի փոխուած տարբերակը՝ վճարները ձեւակերպելով

որպէս հարկ:

«Դէմ Եմ» նախաձեռնութեան անդամ Արսէն Մանուկեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ գրոյցի ընթացքին վստահեցուց, որ այս քայլէն յետոյ իրենց շարժումը նոր թափ պիտի ստանայ:

«Ոչ մի տարբերութիւն չկայ՝ կը վերցնեն դա աշխատողից որպէս կենսաթոշակային վճար, թէ հարկը կ'աւելցնեն» գործատուները վրայ դնելով այդ բեռը: Սա հակասոցիալական է, հակամարդկային է: Եթէ գործատուից աւելի շատ գումար հարկեն, բնականաբար, եթէ նա արտադրող է, արտադրանքի գինն է բարձրացնելու, պէտք է փոխաւտուցի դա: Դա հանգեցնելու է հակասոցիալական երեւոյթներին», - ըսաւ Մանուկեան:

Գէորգ Գորգիսեանի գնահատումը

Շաբ.ը էջ 4

## Եւրոպացի Դէպի Հայաստան Նոր Ցոյց Կու տայ

Ուքրանիոյ իրադարձութիւններու լոյսին տակ, Եւրոպական երկիրները նոր քայլեր կ'առնեն դէպի Հայաստան եւ նախկին Խորհրդային Միութեան այլ երկիրներ: Ինչպէս ծանօթ է, անցեալ Նոյեմբերին Հայաստան եւ Ուքրանիա վերջին պահուն հրաժարեցան Եւրոպայի հետ Արեւելեան Գործընկերութեան Պայմանագիրը ստորագրելէ: Հայաստան յայտարարեց որ պիտի միանայ Ռուսաստանի գլխաւորած Մաքաչի Միութեան, իսկ Ուքրանիոյ մէջ ծայր առին բողոքի ցոյցեր, որոնք փաստօրէն յանգեցան երկրի տարանջատման եւ միջազգային մեծ տագնապի:

Մարտի 12-ին, Եւրոպական Խորհրդարանի նիստին ներկայ պատգամաւորներու 87%-ը ընդունեց Պաւել Կովալի գեկոյցը՝ Եւրոպական Միութեան (ԵՄ) հետ յարաբերութիւններու ծիրէն ներս Արեւելեան գործընկերութեան երկրներու հետ առաջնահերթութիւններու գնահատման եւ կարգաւորման վերաբերեալ:

Եւրոպական Խորհրդարանը (ԵԽ) կոչ կ'ընէ անյապաղ իրականացնել Հայաստանի վրայ դրական ազդեցութիւն ունեցող քաղաքականութիւնները, օրինակ՝ ազատ

տեղաշարժի, ուժանիւթի, փոխադրամիջոցներու, ինչպէս նաեւ քաղաքացիական հասարակութեան ոլորտներէն ներս:

«ԵԽ-ի գեկոյցին մէջ նշուած է, որ ԵՄ-ի ընդլայնման յաջողական ծրագիրները Հայաստանը աւելի կը մօտեցնեն ԵՄ-ին: Այս կը նշանակէ, որ երկրի ապահովութիւնը, կայունութիւնը եւ բարեկեցութիւնը փոխադարձ ազդեցութիւն կը ձգեն Հայաստան-ԵՄ համագործակցութեան վրայ: Զեկոյցը կ'աւելցնէ որ, Հայաստանին եւ Արեւելեան գործընկերութեան միացած երկիրներուն ԵՄ-ի կողմէ ցուցաբերուող ֆինանսական աջակցութիւնը չափազանց կարեւոր է», - մեկնաբանած է Էտուարտո Լորենցո Օշոնան, որ Հայաստանի Եւրոպացի Բարեկամներ կազմակերպութեան տնօրէնն է:

Ըստ Եւրախորհուրդի, Արեւելեան գործընկերութիւնը բաւարար խթան չի ցուցաբերեր բարեփոխումներ եւ փոփոխութիւններ կատարելու համար: Այս պատճառով այդ երկրները Եւրոպական առաւել յստակ հեռանկարներու կարիք ունին:

Ինչ կը վերաբերի սառեց-

Շաբ.ը էջ 4

## Տինքի Սպանութեան Գործով Գլխաւոր Կասկածալը Ազատ Արձակուած Է

Թուրքիոյ մէջ բանտէն ազատ արձակուած է Հրանդ Տինքի սպանութեան գործով ձերբակալուած գլխաւոր կասկածեալը՝ ռազմական ոստիկանութեան նախկին զաղտնի գործակալ Էրհան Թունջէլ: Ազատ արձակուած են նաեւ խումբ մը հակահայ թուրք գործիչներ:

Այսպիսով Տինքի սպանութեան գործի վերաքննութիւնը կրնայ ապարդիւն մնալ: «Ակօս» թերթի նախկին խմբագրապետի ընտանիքի անդամները, ինչպէս նաեւ խումբ մը մտաւորականներ եւ փաստաբաններ համոզուած են կամ առնուազն կասկածներ ունին, որ պետութիւնը մեղաւոր է Տինքի սպանութեան մէջ:

2007-ի Յունուարին, Տինքի սպանութեան անմիջապէս յետոյ յարուցուած գործով մօտ երկու տասնեակ կասկածեալներ կային, սակայն դատարանը հիմնաւորուած չհամարեց կազմակերպուած եւ գինուած յանցաւոր խումբի գոյութիւնը: Դատարանը որոշեց, որ յանցագործութիւնը կատարած են անհատներ, որոնցմէ միայն երկուքը դատապարտուեցան: Տինքի սպանութիւնը գործադրող Օզին Սամասթ եւ յանցագործութեան հրահրող, կազմակերպիչը՝ Եսսին Հայալը:

Սակայն, Տինքի սպանութեան մէջ ապահովութեան ուժե-

րու մասնակցութեան մասին կասկածները երբեք ալ չփարատեցան եւ անցեալ տարի նախ յայտնի դատախազ Մուսթեր Աքքաշ, ապա բարձրագոյն վերաքննիչ դատարանը որոշեցին վերանայիլ գործը, մասնաւորապէս, նորէն հարցաքննել նախապէս արդարացուած բողոք 18 կասկածեալները:

Այս վերաբացուած գործով անցեալ տարի աշնան ձերբակալուած էր նախկին զաղտնի գործակալ Թունջէլ, որ այդ պահուն բաւականին ուշագրաւ յայտարարութիւններ ըրաւ՝ ըսելով, թէ Տինքի սպանութեան գործին մէջ մեծ դեր ունեցած են ոստիկանները եւ որ ինքը, փոքր օղակ է, սպանալով անուններ տալ:

Սակայն ձերբակալութենէն մօտաւորապէս 5 ամիս ետք ան ազատ արձակուած է:

Ամիս մը առաջ պաշտօնէն հեռացուեցաւ Տինքի սպանութեան գործի վերաքննութիւնը նախաձեռնած Մուսթեր Աքքաշ: Թուրքիոյ մէջ ի յայտ եկած կաշառակերութեան սկանտալը ան փորձեց կապել դէպի վարչապետի ընտանիքը, բայց իշխանութիւնները յայտնի դատախազին պաշտօնանկ ըրին, իսկ Տինքի սպանութեան քրէական գործերը փոխանցուեցան դատախազ Մուստաֆա Ինամին:

Շաբ.ը էջ 4

## Զուիցերիա Որոշած Է Բողոքարկել Եւրոպական Դատարանի Որոշումը

Զուիցերիոյ կառավարութիւնը որոշած է բողոքարկել թուրք ազգայնական գործիչ Տողու Պերինչէքի գործով Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանի 2013-ի Դեկտեմբեր 17-ի դատավճիռը: Այս մասին յայտարարեց երկրի արդարադատութեան նախարարը:

Թուրքիոյ Բանուորական կուսակցութեան ղեկավար Տողու Պերինչէք 2005-ին մասնակցելով Զուիցերիոյ մէջ կազմակերպուած քննարկումներուն, ժխտած էր Հայոց ցեղասպանութիւնը, յայտարարելով, թէ՛ «Հայոց ցեղասպանութեան մասին պնդումները միջազգային հանրութեան կողմէ տարածուող կեղծիքներ են»:

«Զուիցերիա - Հայաստան» ընկերակցութիւնը Պերինչէքի դէմ բողոք ներկայացուած էր՝ հիմնուելով Զուիցերիոյ մէջ գործող այն օրէնքին վրայ, որ պատիժ կը նախատեսէ ցեղասպանութիւններու փաստը հրապարակաւ հերքելու համար:

2007-ի գարնանը գուիցերիական դատարանը Պերինչէքին յանցաւոր նկատելով սահմանեց 12 հազար ֆրանքի տուգանք:

Պերինչէք բողոքարկեց վճիռը, բայց վերաքննիչ դատարանը գայն անփոփոխ պահեց: Սակայն անցեալ տարուայ Դեկտեմբերին, Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանը արդարացման վճիռ կայացուց, նկատելով, որ Զուիցերիոյ դատարանը խախտած է Մարդու իրաւունքներու Եւրոպական Ուխտի ազատ արտայայտուելու իրաւունքը:

Հայաստանի արտաքին գործերու նախարարութիւնը ողջունեց Եւրոպական Դատարանի դիմելու զուիցերիոյ որոշումը:

Տողու Պերինչէք մինչեւ վերջերս կը գտնուէր թրքական բանտի մէջ՝ էրտողանի կառավարութեան դէմ յեղաշրջում կազմակերպելու մեղադրանքով: Ան ազատ արձակուեցաւ այս շաբթուայ ընթացքին:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՀԱԿ-ի մեսիջը (պատգամը) Ծառուկեանին

ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ

Մտկոլեան «Միաբանութիւն» կենտրոնի ղեկավար, վերլուծաբան, ՀԱԿ-ի բարեկամ եւ մտկոլեան պրոտեժէ Սմբատ Կարախանեանը ինչպէս եւ սպասուում էր անարձագանք չթողցնէ Մարտի 1-ի հանրահաւաքը եւ յատկապէս ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը, կոնկրետ դրանում Գազիկ Մառուկեանին արուած հերթական ռեկերանսների հատուածները:

Մարտի 1-ի հանրահաւաքից եւ Տէր-Պետրոսեանի Գազիկ Մառուկեանի իւանիշվիլութեան մասին յայտարարութիւնից յետոյ քաղաքական, եւ ոչ միայն, շրջանակները ակտիւ քննարկում են ծաւալել եւ արձանագրել, որ Տէր-Պետրոսեանը ընդդիմութեան առաջնորդի գահը այդ օրը յանձնել է Մառուկեանին: Մինչդեռ ՀԱԿ-ի խօսափող Կարախանեանի հիմնական ասելիքն ուղղուած է այս տեսակէտի եւ Մառուկեանի համապատասխան ամբիցիաների դէմ, աւելին Կարախանեանը համոզմունք է յայտնում, որ այսօր

իրեն մոբիլիզացնող միակ ուժի մասին տեսակէտը, որովհետեւ ի տարբերութիւն ԲՀԿ-ի, որը որեւէ կերպ չի պոկուում իշխանութեան փէշերից, ՀԱԿ-ը մէկ-երկու մարտավարական քայլերից յետոյ կրկին կարող է ելման դիրք դուրս գալ: Մառուկեանին յստակ մեսիջ ուղարկելուց բացի Կարախանեանը հաւատարիմ մնալով համ եղելու, համ դադելու հայկական խօսքին շատ չի հեռուանում առաջին նախագահի յայտարարութիւնները եւ իր հերթին փաստում առողջ ուժերի միաւորման անհրաժեշտութիւնը, որոնք կարող են ժողովրդին ոտքի հանել, կարող են կազմակերպել զանգուածային հանրահաւաքներ, հասարակական-քաղաքական միջոցառումներ եւ պայքարը տանել այդ հարցերի լուծման ուղղութեամբ: Նա առաջ տանելով ՀԱԿ-ի գիծը եւ պատասխանելով հանրային դժգոհութեանը ԲՀԿ-ի նախկինում իշխանութիւն լինելու եւ հաւասարապէս պատասխանատուութիւն կիսելու հարցում նկատում է. «Անկախ այն հանգամանքից, թէ այդ չորս քաղաքական ուժերից, որը անցեա-

ՀԱԿՈՐ ԲԱԴԱԼԵԱՆ

Հայաստանում ինտեսիլ շարունակում են դատողութիւնները Ղրիմի նախադէպայնութեան մասին: Թուում է, որ Արցախի պատերազմում չաղթանակ տարած հայութեան համար աշխարհում նախադէպի փնտրուողը պէտք է որ վաղուց լինէր անցած փուլ, տեղը գիջելով այն զիտակցմանը, որ աշխարհը դատարան չէ, որտեղ նախադէպային իրաւունքի ուժով կայացուեն որոշումներ:

Գոնէ Արեւելեան թիմորից, Հարաւային Սուդանից, Կոսովոյից, Աբխազիայի ու Օսիայից յետոյ այդ համոզումը պէտք է լինէր: Դրանից բոլորի դէպքում Հայաստանում ծոր էին տալիս նախադէպի մասին դատողութիւնները: Որեւէ մի դէպքում դրանք որեւէ կերպ չառարկայացան: Ընդ որում, այստեղ խնդիրն ամենեւին էլ Հայաստանի դիւանագիտական անկարողութիւնը չէ՝ օգտագործել չարմար պահը որպէս նախադէպ Արցախի համար:

Օրինակները երեւի թէ բաւարար են հասկանալու համար, որ աշխարհում հակամարտութիւնների նոյնականացման չափանիշներ չկան, որովհետեւ հակամարտութիւնները պատճէներ չեն: Դրանցից ամէն մէկն ունի բազմաթիւ հանգամանքներ, շահերի արտաչափման տարբերութիւններ, նրբերազներ, որոնք էլ որոշիչ դեր են խաղում դրանց հանդէպ աշխարհաքաղաքական կենտրոնների վերաբերմունքի մէջ:

Յաճախ այդ ամէնը ներկայացուում է որպէս երկակի ստանդարտ: Այդ ընկալումը ոչ այլ ինչ է, քան միջազգային քաղաքականութեան հանդէպ անհամարժէքութեան սեփական մտաւոր տկարութեան վկայութիւն: Հակառակ դէպքում, պէտք է որ պարզ լինի՝ չկան երկակի ստանդարտներ, կայ շահերի բազմազանութիւն: Եւ եթէ չես հասկանում այդ բազմազանութիւնը, ունակ չես ընկալել շահերն ու ձեւակերպել քո շահը՝ համարելով այն աշխարհաքաղաքական գերակայ միտումներին, մնում է միայն յղում անել երկակի ստանդարտներին եւ տրտնջալ:

Դրա այլընտրանքը քաղաքակրթական արդիականացումն է, որը ազգային մշակոյթի պահպանման լաւագոյն ճանապարհն է, քանի որ ազգայինը կարող են պաշտպանել նրանք, ովքեր ուժեղ են համամարդկային մրցակցութեան մէջ: Իսկ համամարդկային մրցակցութեան մէջ անհնար է ուժեղ եւ դիմադրունակ լինել առանց քաղաքակրթական արդիականացման:

Արցախի համար նախադէպ փնտրելու փոխարէն, պէտք է մտածել Արցախի ու Հայաստանի քաղաքակրթական արդիականացման մասին: Ժամանակակից աշխարհում որեւէ բանի տէր դառ-

նում են ոչ թէ նախադէպով, այլ ինքնիշխանութեամբ, կամ քով, մտաւոր ներուժով, սեփական շահին տէր կանգնելու կարողութեամբ:

Այն, ինչին Արցախն ու Հայաստանը հասան 1988-ի համաժողովրդական շարժման, իսկ յետոյ պատերազմի արդիւնքում, եւ այն, ինչ կորցրին դրանից յետոյ մօտ երկու տասնամեակի ընթացքում:

Այդ կորստից յետոյ փնտրում է նախադէպ: Կամ զիտակցաբար՝ գողացածը արդարացնելու համար, թէ խնդիրը ոչ թէ գողութիւնն է, այլ աշխարհի անարդարութիւնը եւ երկակի ստանդարտները, կամ էլ ուղղակի գողնի քարոզչական ազդեցութեամբ շահարկող անկեղծ մոլորութեամբ:

Միթէ դժուար է նկատել նաեւ Ղրիմի հարցում առկայ հական տարբերութիւնն Արցախի խնդրի համեմատ: Արցախի պարագայում ակներեւ է միջազգային կոնսենսուսը դէ ֆակտօ անկախութեան կամ ինքնորոշման մասով:

Հայաստանի միջազգային սուբիեկտութիւնից ինքնահրաժարման եւ բոլոր իրաւունքները Ռուսաստանին փոխանցելու գործընթացը սպառնում է այդ իրավիճակի փոփոխութեամբ, ինչն էլ կը հանգեցնի իսկապէս այն բանին, որ Ղրիմը վերջապէս կը դառնայ շատերի համար այդքան սպասուած նախադէպը, երբ Արցախն էլ կը վերածի հասունացող սառը պատերազմի պլացդարմի եւ Արեւմուտի ու Ռուսաստանի՝ միմեանց վրայ նետուող քարի:

«ԼՐԱԳԻՐ»

Մարտի 1-ի հանրահաւաքից եւ Տէր-Պետրոսեանի Գազիկ Ծառուկեանի իւանիշվիլութեան մասին յայտարարութիւնից յետոյ քաղաքական, եւ ոչ միայն, շրջանակները ակտիւ քննարկում են ծաւալել եւ արձանագրել, որ Տէր-Պետրոսեանը ընդդիմութեան առաջնորդի գահը այդ օրը յանձնել է Ծառուկեանին

էլ «Միակ քաղաքական ուժը, որն ի վիճակի է հաւաքել ուժերին կամ կազմակերպել նման հանրահաւաք, նման մոբիլիզացիա, քաղաքականութեան մէջ ռազմավարական դաշնակիցներ ձեւաւորել, ինչ էլ որ ասեն, մնում է ՀԱԿ-ը:

Իհարկէ, ակնկալիքներ կային, թէ նոր ուժեր կը ծնուեն, հասարակական-քաղաքական նոր շարժում կ'առաջանայ, բայց չեղաւ», - նկատում է Ս. Կարախանեանը «Առաջին լրատուական»-ի հետ զրոյցում եւ չի համաձայնում Հայաստանի քաղաքական դաշտում ստեղծուած այն տեսակէտի հետ, թէ ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը վերջին հանրահաւաքում «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան մասին արած իր յայտարարութիւններով ոչ իշխանական ուժերի շարքում նրան առաջին պլան է մղում, իսկ Գազիկ Մառուկեանին էլ ընդդիմութեան առաջնորդ կարգում:

Ինչ խօսք, առանց Կարախանեանի փաստաբանութեան էլ դժուար է պատկերացնել, որ Տէր-Պետրոսեանի խարիզմայի, ամբիցիաների եւ առանձնապատուկ ինտելեկտի տէր մարդը ընդդիմութեան առաջնորդի թագով կը թագադրի իշխանութեան երբեմնի հիմնասիւններից մէկի կուսակցապետին: Ակնյայտ է, որ Տէր-Պետրոսեանն ընդամէնը տակտիկական ժեստի է դիմել, որովհետեւ բազմիցս է խօսուել այս պահին երկու կուսակցութիւնների շահերի համընկման եւ ԲՀԿ-ի ֆինանսական ռեսուրսի ՀԱԿ-ի համար մեծ դերակատարութեան մասին: Օբիեկտիւ են նաեւ ՀԱԿ-ի

լում ինչ է արել, ամէն դէպքում, պէտք է դէպի առաջ նայել: Կարելի է այդ չորս ուժերից բոլորին էլ քննադատել, կան թերութիւններ, դրական եւ բացասական կողմեր: Բայց Լ. Տէր-Պետրոսեանի ասածի իմաստն այն է, որ մենք պէտք է առաջ գնանք: Եւ եթէ այսօր այդ քաղաքական ուժերը օգնում են ժողովրդավարական իշխանութեան ձեւաւորմանը, օգնում են ազատուել աւագակապետութիւնից, քրէ-աօլիգարխիկ համակարգից, ապա պէտք է առաջժամ առաջ նայել»:

Աղուհանդերձ ՀԱԿ-ը ի դէմս Կարախանեանի ԲՀԿ-ին պոչն իր ոտքի տակ պահելով չի պատրաստուում մինչեւ վերջ սրբագրել ԲՀԿ-ի անցեալը. «Ես դէմ չեմ, որ պէտք է վերադառնալ անցեալի նետ կապուած բոլոր հարցերին՝ սկսած Մարտի 1-ի դէպքերից մինչեւ այն, թէ ինչով են զբաղուել նախկինում, բայց դա առանձին հարց է» նկատում է Կարախանեանը: Իհարկէ, կարեկցել կարելի է Կարախանեանի այն մտայնութեանը, որ եթէ «այդ քաղաքական ուժերը օգնում են ազատուել աւագակապետութեան քրէ-աօլիգարխիկ համակարգից»: Որովհետեւ նման ցանկութեան դէպքում առաջին քարը պէտք է հենց սեփական անձի ուղղութեամբ նետուէր, բայց ընդհանուր առմամբ մոսկովեան խօսափողը վերահաստատում է Տէր-Պետրոսեանի քաղաքագիտական վերլուծութեան թէզը եւ հանրային ընկալումներում արդարացնելով չորս անցեալը, փորձում է յատկապէս Մառուկեանին դէպի ՀԱԿ-ի կողմը ձգել:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
SOPH. UNCLY GALVANIAN
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Զեյր Ծանուցումները
Վստաեցեք
«Մասիս»
Շաբաթաթերթին
T: (626) 797-7680
F: (626) 797-6863

### ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## «Ոչ Մի Կուսակցութիւն Միայնակ Չի Կարող Իշխանափոխութիւն Կատարել

Հայաստանի ոչ մի կուսակցութիւն միայնակ չի կարող փոխել ներկայիս ապօրինի իշխանութիւնը, Մարտի 11-ին ԱԺ-ում յայտարարել է Հայաստանի ժողովրդական կուսակցութեան նախագահ Ստեփան Դեմիրճեանը:

Ըստ նրա՝ կառավարութեան մեխանիզմները փոփոխութիւնը արմատական փոփոխութիւններ չի խոստանում: «Նոր կառավարութիւնը չի կարող աւելի արդիւնաւէտ աշխատել քրէատլիզացիայի համակարգի պայմաններում, երբ մարդկանց մի խումբ պարբերաբար զաւթում է իշխանութիւնը եւ կամքը թելադրում ողջ ժողովրդին», - ընդգծել է Դեմիրճեանը:

Ըստ նրա՝ Հայաստանում իշխանափոխութեան համար անհրաժեշտ են ոչ միայն քաղաքական կուսակցութիւնների համատեղ ջանքերը, այլեւ հասարակական-քաղաքական լայն շերտերին: Իսկ օրինական իշխանութեան ձեւաւորումը կ'ամրապնդի վաղուայ օրուայ նկատմամբ մարդկանց հաւատարմութիւնը:



Հայաստանի ժողովրդական կուսակցութեան նախագահ Ստեփան Դեմիրճեան

տը եւ կ'ապահովի երկրի կայուն զարգացումը: Դեմիրճեանը նշել է, որ գործող կառավարութեան հրաժարականն անհրաժեշտ, սակայն բաւարար պայման չէ: «Պէտք է կեանքի կոչել Սահմանադրութեան երկրորդ յօդուածը՝ ժողովուրդն իր իշխանութիւնն իրականացնում է ազատ ընտրութիւնների, հանրաքուէների միջոցով», - նշել է պատգամաւորը:

## Ազատամարտիկները Կրկին Պահանջում Են Ազատ Արձակել Վոլոդիա Աւետիսեանին

Ղարաբաղեան պատերազմի մասնակիցներն ու նրանց համակիրներն ի պաշտպանութիւն կալանքի տակ պահուող ազատամարտիկ Վոլոդիա Աւետիսեանի նախ հաւաք անցկացրեցին Ազատութեան հրապարակում, իսկ յետոյ շարժուեցին դէպի նախագահական նստավայր՝ նամակ յանձնելու Սերժ Սարգսեանին: Նրանք կրում էին նախագահ Սարգսեանին քննադատող եւ Աւետիսեանին պաշտպանող պատառներ:



Ազատամարտիկները կը պահանջեն Վոլոդիա Աւետիսեանի ազատ արձակումը

Ի պաշտպանութիւն վեց ամիս առաջ խարդախութեան մեղադրանքով կալանաւորուած պահեստազօրի գնդապետ Վոլոդիա Աւետիսեանի հաւաքը ուղղուած էր նաեւ Շանթ Յարութիւնեանի ու այդ գործով կալանաւորուածների պաշտպանութեանը: Ազատութեան հրապարակումը ազատամարտիկները յայտարարեցին, թէ Հայաստանի իշխանութիւնների անօրինական գործողութիւնների արդիւնքում են թէ՛ Վոլոդիա Աւետիսեանը եւ թէ՛ Շանթ Յարութիւնեանը յայտնուել ճաղերի հետեւում:

«Մենք չեն կարող տարանջատել Վոլոդիա Աւետիսեանի կալանաւորումը Շանթ Յարութիւնեանի եւ նրա ընկերների դէպքից: Որովհետեւ երկուսն էլ ընդվզում էին: Մէկը հարց էր բարձրացնում կառավարութեան դէմ, միւսն էլ, համոզուելով, որ դա անհնար է, ընդամէնը ելան ու կոչ արեցին յեղաշրջման», - ասաց ազատամարտիկ Գագիկ Սարուխանեանը:

Ազատամարտիկներն իրենց ելույթներում սուր քննադատութեան ներթափանցեցին իշխանութիւններին, յայտարարեցին, թէ իշխանութեան ղեկին կանգնածները անօրինական ճանապարհով են

այդտեղ յայտնուել: Ազատամարտիկների գայլոյթն աւելի է մեծացել յատկապէս վերջին օրերին, երբ Վոլոդիա Աւետիսեանի գործի նախաքննութիւնն աւարտուեց՝ հաստատուած համարելով նրա նկատմամբ առաջադրուած մեղադրանքը:

Ելույթներից յետոյ ազատամարտիկներն ու Շանթ Յարութիւնեանի համախոհները շարժուեցին դէպի նախագահական նստավայր:

Հաւաքն ու երթն անցան առանց բախումների: Յուցարարները նախագահական նստավայրի դիմաց ընթերցեցին նախագահին յանձնուող նամակը: Նամակում նրանք պահանջում են ազատ արձակել ազատամարտիկին, յորդորում անօրինականութեան փոխարէն արդարութիւն ապահովել: «Որպէս Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան երաշխաւոր, Դուք պարտաւոր եք ապահովել երկրում օրէնքի գերակայութիւնը, դատարանների արդար վճիռ կայացնելը եւ իրաւապահ մարմինների անաչառութիւնը: Վոլոդիա Աւետիսեանի նկատմամբ հետապնդումը պէտք է դադարեցնուի եւ նա ազատ արձակուի: Այս անօրինականութիւնների մասին տեղեակ լինելով եւ միջոցներ չձեռնարկելով՝ Դուք դառնում եք այդ ապօրինութիւնների մեղսակիցը»:

## Գագիկ Ծառուկեանը Հանդիպեց ՀԱԿ-ի Ներկայացուցիչների Հետ

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) առաջնորդ Գագիկ Ծառուկեանի հետ Մարտ 10-ին կայացած հանդիպմանը ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) ներկայացուցիչները խօսել են իշխանափոխութեան եւ նախագահի հրաժարականի անհրաժեշտութեան մասին, հանդիպումից յետոյ լրագրողներին տեղեկացրեց ՀԱԿ խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը՝ ընդգծելով, որ արտահերթ նախագահական ու խորհրդարանական ընտրութիւնների անցկացման մէջ են իրենք տեսնում երկրի առջեւ ծառայած խնդիրների լուծումը:

ԲՀԿ-ի կենտրոնական գրասենեակում փակ դռների հետեւում մօտ մէկ ժամ տեւած հանդիպմանը կոնգրէսից մասնակցում էին Լեւոն Զուրաբեանը, խմբակցութեան քարտուղար Արամ Մանուկեանը եւ Լեւոն Տէր-Պետրոսեանի գրասենեակի ներկայացուցիչ Աւետիս Աւագեանը, ԲՀԿ-ից՝ կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանից բացի ներկայ էին խմբակցութեան քարտուղար Նաիրա Զոհրաբեանը, պատգամաւորներ Վարդան Օսկանեանն ու Ստեփան Մարգարեանը:

«Մենք կարծում ենք, որ երկիրը գտնուում է խորը ճգնաժամում, որի միակ լուծումը Սերժ Սարգսեանի ռեժիմի հեռացումն է եւ երկրում արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնների անցկացումը, որի արդիւնքում պէտք է ձեւաւորուի լեգիտիմ, ժողովրդի կողմից ընտրուած իշխանութիւն, որը կը լինի նրա առջեւ հաշուետու: Նա մէջ ենք մենք տեսնում երկրի խնդիրների լուծումը», - ասաց Լեւոն Զուրաբեանը: «Դա մեր միանշանակ դիրքորոշումն է, որը մենք բաց

միշտ յայտնել ենք եւ այս հանդիպման ժամանակ էլ յայտնեցինք, որ մենք այլ կերպ չենք տեսնում երկրի առջեւ ծառայած խնդիրների լուծումը»:

«Ազատութեան» յաջորդ հարցին, թէ ինչպէ՞ս է Սերժ Սարգսեանի հրաժարականը պահանջելու մասին իրենց դիտարկմանն արձագանքել Գագիկ Ծառուկեանը, Լեւոն Զուրաբեանը միայն պատասխանեց, որ ԲՀԿ-ի, ինչպէս նաեւ միւս երեք ընդդիմադիր ուժերի հետ առայժմ փոխըմբռնում կայ կառավարութեանն անվստահութիւն յայտնելու հարցում: Կոնգրէսը դա դիտարկում է որպէս ամբողջական իշխանափոխութեան առաջին փուլ:

«Ազատութիւն» հարցին, թէ հնարաւոր է Գագիկ Ծառուկեան-Լեւոն Տէր-Պետրոսեան հանդիպում լինի, Լեւոն Զուրաբեանը պատասխանեց. «Բայց ինչո՞ւ հնարաւոր չէ: Նման հարց չի քննարկուել, բայց ես ասում եմ՝ որեւէ խոչընդոտ կամ խնդիր չեմ տեսնում, որ նման հանդիպում ապագայում ինչո՞ր պահի, երբ դրա անհրաժեշտութիւնը լինի, կայանայ»:

Գագիկ Ծառուկեանը Սերժ Սարգսեանի հրաժարականի մասին երբեւէ չի խօսել, իսկ ԲՀԿ վերջին համագումարում իր ելույթում «անպտուղ» որակելով հանրապետութիւնում իրականացուող անտեսական ու սոցիալական քաղաքականութիւնը, երկրի հիմնական քաղաքական ուժերին, հասարակական ակտիվ շրջանակներին առաջարկել էր կազմել միասնական օրակարգ եւ դրան հասնելու յստակ ճանապարհային քարտեզ: Նա չէր յստակեցրել, թէ որ ուժերին նկատի ունի, բայց այժմ ԲՀԿ առաջնորդը կոնսուլտացիաներ է անցկացնում ընդդիմադիրների հետ:

## «Ապահով Հայաստան» Ծրագիրը Ամէն Օր Դեպի Անապահով Հայաստան Է Տանում Մեզ

Հայաստանը ստեղծուած այս ծանր իրավիճակից դուրս գալու լաւագոյն տարբերակն այն է, որ իշխանութիւնը ճիշդ գնահատէր ստեղծուած իրավիճակը, լայն քաղաքական կոնսուլտացիայի միջոցով անկեղծ ձեւաւորէր քաղաքական օրակարգ, արմատական փոփոխութիւններով կարողանար Հայաստանը դուրս բերել այս վիճակից: Այս մասին ա խորհրդարանական յայտարարութիւնների ժամին ասաց Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ռուբիկ Յակոբեանը:

«Բնականաբար, այդ օրակարգը չպէտք է կրեր իմիտացիոն բնոյթ եւ պէտք է հիմնականում լուծումներ տար հետեւեալ հարցերին՝ ինչպէ՞ս կարողանալ կասեցնել կոռուպցիայի այս յաղթարշաւը, որը կայ պետական կառավարման համակարգում, որը համակարգային բնոյթ է կրում, եւ ինչպէս ամբողջ աշխարհում, մեզանում նոյնպէս ղեկավարում է բարձրագոյն իշխանութեան կողմից: Ինչպէ՞ս կարողանալ իշխանութեանը բացատրել, որ ունենալ իշխանութիւն՝ չի նշանակում դա դիտել որպէս սեփական տնամերձ, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման համակարգը խցկել սեփական բարեկամներով»:

կամներով, քաւոր-սանիկներով, իսկ հարիւրաւոր նորմալ, դաստիարակուած, կրթուած երիտասարդներ հեռանան Հայաստանից եւ իրենց ինտելեկտուալ կարողութիւնները փորձեն իրացնել հարեւան պետութիւնների փողոցներում ասֆալտ փռելով: Ինչպէ՞ս կարողանալ բիզնես մշակոյթը փրկել փայտէրեքից, եւ կարողանալ եղած միջոցները մղել հարկային դաշտ», - հարցադրում արեց Ռուբիկ Յակոբեանը:

Ըստ նրա՝ մեր իշխանութիւնները միտք ունեն շարունակելու «Ապահով Հայաստան» կառուցելու վերոնշեալ ծրագիրը, որն ամէն օր դէպի անապահով Հայաստան է տանում մեզ, աւելին՝ փորձում են ամէն կերպ խոչընդոտել այն քաղաքական ուժերի համախմբումը, որը նպատակ ունի իսկապէս այս արատները վերացնելու համար ստեղծել միասնական օրակարգ:

«Լաւ չէք անում, ձեր այդ պահուածքով պետութեանը մղում եք քաոս, անորոշութիւն: Քանի դեռ ուշ չէ, պէտք է ճիշդ գնահատել ստեղծուած իրավիճակը եւ նորմալ քայլեր իրականացնել պետութիւնն այս վիճակից դուրս բերելու համար», - յայտարարեց «Ժառանգութիւն» խմբակցութեան ներկայացուցիչը:

**ԼՈՒՐԵՐ**

**«Հայաստանը Շահագրգռուած է ԼՂ  
Հիմնախնդրի Խաղաղ Կարգաւորմամբ»**

ՀՀ արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանի հետ Մոսկուայում կայացած հանդիպմանն անդրադառնալով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջէյմս Ուորլիքը Twitter-ի իր էջում գրել է, որ դրական ակնկալիքներ ունի ԼՂ հիմնախնդրի նկատմամբ Հայաստանի դիրքորոշումից:



ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջէյմս Ուորլիք

ջանքերին աջակցելու համար», - նշել է նա:

«Արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանի հետ բանակցութիւնները փաստում են, որ Հայաստանը ձգտում է խաղաղ կարգաւորման Լեռնային Ղարաբաղի հարցում: Մենք կը շարունակենք ուղիներ փնտռել երկխօսութեան համար», - գրել է նա:

Աւելի ուշ կատարուած գրառման մէջ ամերիկացի դիւանագէտն ասել է, որ Ղարաբաղեան հիմնախնդրին կ'անդրադառնան նաեւ ռուսական կողմի հետ կայանալիք հանդիպմանը (չի նշուած մասնաւորապէս ում հետ):

«Մենք անհամբեր սպասում ենք Լեռնային Ղարաբաղի շուրջ այսօր կայանալիք բանակցութիւններին: Մենք վճռական ենք համագործակցել նաեւ Ֆրանսիայի հետ՝ խաղաղ կարգաւորման ուղղութեամբ»

Յիշեցնենք, որ Ջէյմս Ուորլիքը հերթական գրառումն էր արել Twitter-ի իր էջում:

«Ես մտահոգութիւններ եմ լսել, որ մինչ ուշադրութիւնը կենտրոնանում է Ուկրաինայի վրայ, Հայաստանի եւ Ադրբեյջանի միջեւ բռնութիւնը կարող է աճել: Պէտք է մտահոգուենք», - նման բովանդակութեամբ գրառում էր արել ամերիկացի համախաղաղը:

**Թուրքիայում Հայոց Ցեղասպանութեան  
Ճանաչման Դէմ Պայքարի  
Յանձնաժողով է Ստեղծուել**

Թուրքիայում Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ ստեղծուել է Ցեղասպանութեան ճանաչման դէմ պայքարի յատուկ յանձնաժողով:

Թուրքական Hurriyet-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի վարչապետի անմիջական հսկողութեամբ ստեղծուած Հայոց ցեղասպանութեան ճանաչման դէմ պայքարի յանձնաժողովն արդէն առաջին քայլն է արել՝ գրութիւն ուղարկել

լով բոլոր նախարարութիւններ եւ պահանջելով Ցեղասպանութեան ճանաչման դէմն առնելու համար առաջարկութիւններ ներկայացնել:

Նշուած է, թէ Թուրքիայի ԱԳՆ-ի, Եւրամիութեան հարցերով նախարարութեան եւ վարչապետի խորհրդակցանքերի գլխաւորութեամբ ընթացող աշխատանքները նպատակ ունեն հակազդել Հայկական սփիւռքի աշխատանքներին:

**«Դէմ Եմ» Շարժումը**

Շարունակուած էջ 1-էն

մամբ, իշխանութիւններու առաջարկած այս լուծմամբ եւս, միեւնոյնն է, պիտի խախտուի ժողովուրդի նորմալ ապրելու իրաւունքը, իսկ օրէնքի սահմանադրականութեան հարցը չէ լուծուած:

«Մինչեւ հիմա բոլոր պետական կառույցներից միայն լսում ենք՝ ինչ ուզում է լինի, օրէնքը անցնելու է: Հիմա փաստօրէն իրենք էլ են կասկածում, որ օրէնքը սահմանադրական է: Բայց թէ նոյնիսկ սա մտնի որպէս հարկատեսակ, դա

իրեն է նշանակում: Եթէ գործելու է նորից 1974 թուականի շեմը, իսկ հարկը չի կարող մէկի վրայ մի ձեւով ազդել, միւսի վրայ մէկ այլ ձեւով: Սա նոյնպէս հակասահմանադրական կը լինի», - ըսաւ Գորգիսեան:

«Դէմ Եմ» շարժումը կը պնդէ, որ կը պայքարի ոչ միայն աշխատավարձերու, այլ հիմնականին մէջ երկրի տնտեսութեան համար, ըլլալ ան պարտադիր վճար թէ հարկ՝ միեւնոյնն է կուտակային համակարգը պիտի նպաստէ արտագաղթին:

**Եւրոպայի Դէպի Հայաստան**

Շարունակուած էջ 1-էն

ուած հակամարտութիւններուն, որոնց շարքին Լեռնային Ղարաբաղի հարցին, ԵՄ-ն կոչ կ'ընէ փոխնախագահին-գերագոյն յանձնակատարին եւ Արտաքին Գործերու Եւրոպական Մարտիկութեան (ԱԳԵՄ) մշակելու վստահութեան ձեւաւորման ծրագիրները՝ հասարակութեան միջեւ երկխօսութիւն խրախուսելու նպատակով:

ԵՄ-ն նաեւ կոչ կ'ընէ Եւրոպան յանձնաժողովին դիտարկել առեւտ-

րային հետագայ խոչընդոտները կանխելու կարելիութիւնները:

Անցեալ շաբաթ Եւրախորհուրդի նախագահը յայտարարեց, որ Ուքրանիան կարելիութիւն ունի առաջին հերթին ստորագրել Ընկերակցութեան համաձայնագրի քաղաքական մասը, իսկ առեւտրայինը ձգելով ապագային:

Այս յայտարարութիւններէն ետք, Հայաստանի մէջ եւս ձայներ բարձրացան՝ առայժմ Եւրոպայի հետ ստորագրելու Ընկերակցութեան քաղաքական բաժինը:

**Քեթրին Էշօն Այցելել է Նոր Զուղայի  
Հայկական Եկեղեցին**



Եւրամիութեան ներկայացուցիչ Քեթրին Էշօնը Նոր Զուղայի հայկական եկեղեցիէն ներս

Շաբաթուայ սկզբին Եւրամիութեան արտաքին քաղաքականութեան եւ անվտանգութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշօնը Իրան կատարած այցելութեան ժամանակ միջուկային ծրագրի շուրջ բանակցութիւնները գատ հասցրել է այցելել նաեւ հայկական եկեղեցի:

Իրանահայ լրագրող Վարդան Դաւթեանը «Ազատութեանը» փոխանցեց, որ էշօնը երկօրեայ այցի վերջին օրը մեկնել է Սպահան քաղաք, որտեղ շրջել է պատմական վայրերում: Այնուհետեւ Եւրամիութեան բարձր ներկայացուցիչը գնացել է Սպահանի՝ հայերով բնակեցուած Նոր Զուղայ թաղամաս, որտեղ էլ եղել է Սուրբ Ամենափրկիչ հայկական վանքում:

«Վանքում իրեն դիմաւորեց Տէր Բաբգէն եպիսկոպոս Չարեանը, այնուհետեւ այցելեցին 350-ամեայ պատմութիւն ունեցող Սուրբ Յովսէփ Արեմաթացի եկեղեցի», - պատմեց իրանահայ լրագրողը:

Դաւթեանի փոխանցմամբ՝ Բաբգէն եպիսկոպոս Չարեանը

չնորհակալութիւն է յայտնել Եւրամիութեան խորհրդարանին Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու կապակցութեամբ

Սրբազան հայրը իր խօսքի շարունակութեան մէջ կարեւորութեամբ ընդգծեց, որ Իրանի պետութիւնը միշտ զօրակցել է մեզ՝ մեր եկեղեցիներին ու մշակութային կոթողներին պահպանման գործում, մինչդեռ սրանից մի քանի տարի առաջ հարեւան Ադրբեյջանում ադրբեյջանցիները աւերեցին Հին Զուղայի պատմական արժէք ներկայացնող խաչքարերը, որն ինքնին մշակութային ցեղասպանութիւն է: Թեմակալ Առաջնորդը յոյս չայտնեց, որ Եւրախորհրդարանը կը բարձրաձայնի այս մասին, կը ճանաչի մարդկային իրաւունքները եւ կը դատապարտի նման արարքները, որպէսզի այլեւս չթույլատրուեն նման ցեղասպանութիւնների շարունակութիւնը»:

Քեթրին էշօնը վստահեցրել է, որ անպայման հետեւելու եւ պաշտպանելու է մարդկային իրաւունքները եւ ներկայացուած խնդիրները:

**Կասկածեալը Ազատ Արձակուած է**

Շարունակուած էջ 1-էն

Ազատ արձակուածներուն մէջ է նաեւ պաշտօնաթող զօրավար Վելի Քիւչուք, որ յայտնի է իր խիստ հակահայկական գործունէութեամբ: Անոր անունը եւս կապուած է Հրանդ Տինքի սպանու-

թեան կազմակերպման հետ: Յայտնի է, որ ան Հայաստանի դէմ յատուկ գործողութիւններ ծրագրող կառույց ղեկավարած էր:

Ազատ արձակուած է նաեւ Պոլսոյ Հայոց պատրիարքի եւ Սվազի հայերու առաջնորդի դէմ մահափորձ կազմակերպած Իպրահիմ Շահինը:

**Ուղեւորութիւն Դէպի  
Պատմական Հայաստան**

Նոր Սերունդ Մշակութային Միութեան հիմնադրութեան 60-ամեակի տօնակատարութեանց շարքին, ծրագրուած է ուղեւորութիւն դէպի պատմական Հայաստան, Յուլիս 17էն մինչեւ Յուլիս 31, 2014:

Արձանագրութեանց եւ յաւելեալ մանրամասնութեանց համար կապ հաստատել՝ հեռաձայնով 818/590-9293 եւ կամ իմակոպով norserount54@gmail.com

### ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՅՑ

«Հայաստանի ազգային մրցունակութեան զեկոյցի» հեղինակները Առաւօտ օրաթերթին իրենց տուած ասուլիսին յայտնած են Հայաստանի տնտեսական աճին առջեւ ծառայած հիմնական խոչընդոտները:

Այդ արգելքներուն առաջինն է տեղական շուկայի սահմանափակ ըլլալը: Հայաստանը բնակչութեան թիւով տնտեսական մեծ շուկայ մը չէ եւ բնակչութեան զնելու կարողութիւնը սահմանափակ է: Երկրորդ արգելքը բարձր որակի արհեստաւորներու բացակայութիւնն է: Երկրորդ ունի բարձր որակի համալսարանաւարտներ, սակայն ցած աշխատավարձի պատճառով շատ մը արհեստաւորներ չեն աշխատիր իրենց մարզին մէջ: Երրորդ խոչընդոտը հարկային-մաքսային դրութիւնն է, որ պէտք է պարզեցուի: Իսկ չորրորդը պարտքի առնուած գումարներու բարձր տոկոսն է որ չի քաջալերեր ներդրումներ կատարել տնտեսութեան մէջ:

### ԱՆԳԱՐԱ Կ'ԱՍԲԱՍՏԱՆՈՒԻ ՓԱՐԻՁԻ ՄԷՋ ՔԻԻՐՏ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՍՊԱՆՆԵԼՈՒ ՅԱՆՅԱՆՔՈՎ

Քրտամէտ խաղաղութիւն եւ ժողովրդավարութիւն կուսակցութեան համանախագահ ու Տիրանակերտի քաղաքապետութեան թեկնածու Կիւլթան Քըշանաք, Մարտ 8-ի Կանանց տօնին առիթով կազմակերպուած հանրահաւաքի մը ընթացքին խիստ քննադատութիւններ ուղղեց Թուրքիոյ կառավարութեան հասցէին ու պնդեց, որ Փարիզի մէջ ահաբեկուած Քիւրտիստանի Բանուորական կուսակցութեան երեք կին ղեկավարներուն սպանութիւնը կազմակերպուած էր կառավարութեան ու «գուզահեռ պետութեան» միացեալ ջանքերով: «Անոնց նպատակն էր վախցնել քիւրտները», ըսաւ ան:

Ընտրական հաւաքի հրապարակին վրայ կախուած էին Ապտուլլահ Օճալանի ու Փարիզի մէջ սպանուած երեք քիւրտ կիներուն նկարները: Քըշանաք այդ նկարները ցոյց տալով ըսաւ, որ անոնցմէ իւրաքանչիւրը մեծ նպաստ բերած է քրտական հարցին՝ աւելցնելով. «Անոնք այս ոճիւրը գործեցին մեզ վախցնելու համար, բայց ազատութեան մեր պայքարին մէջ ոչ մէկը կրնայ մեզ վախցնել: Մի՛ մտահոգուիք, օր մը այս ոճիւրներուն ալ «քասեթ»ները հրապարակ պիտի հանուին: Մենք շատ լաւ գիտենք, թէ ինչպէ՛ս կառավարութիւնն ու «գուզահեռ կառուցը» ձեռք ձեռքի տուին ու միասնաբար կազմակերպեցին Փարիզի սպանը: Անոնք իրենց գողցած դրամները չլրացան բաժնել եւ մէկգմէկու գողութեան «քասեթ»ները հրապարակ հանեցին: Բայց տակաւին ո՛չ մէկ «քասեթ» մեր ժողովուրդին դէմ գործուած անիրաւութեանց կապակցութեամբ: Մենք օր մը զանոնք եւս երեւան պիտի հանենք: Այս ոճիւրներուն հաշիւը պիտի պահանջենք: Այս ոճիւրներուն հաշիւը պիտի տան»:

### ՅԻՐՐԻՅԵԹ.

### «ԱԶՆԱԿՈՒՐԸ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ Է ՅԱՅՏՆԵԼ ԲԱՑ ՏԵՍՆԵԼ ԶԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՅՄԱՆԸ»

Համաշխարհային հռչակ վայելող ֆրանսահայ երգիչ Շարլ Ազնաւուրը իտալական «Corriere della Sera» թերթին տուած հարցազրոյցում ցանկութիւն է յայտնել բաց տեանել 1992-ից ի վեր Անքարայի կողմից միակողմանիօրէն փակուած հայ-թուրքական սահմանը: Մեծանուն շանտիէի սոյն հարցազրոյցին անդրադարձել է թուրքական «Հիւրիյէթ» պարբերականը, որն ուշադրութիւն է հրաւիրել հարցազրոյցից որոշ դրուագների վրայ:

«Ազնաւուրը համոզմունք է յայտնել, որ եթէ Հայաստանն ունենար Ատրպէյճանի նախապիս պաշարները, ապա այսօր գոյութիւն ունեցող խնդիրները բնաւ չէին լինի»:

Նա նաեւ նշել է, որ մինչեւ այժմ էլ համերգներ տալու բազմաթիւ առաջարկներ է ստանում Թուրքիայից, բայց չի կարողանում փակ սահմանների պարագայում դրանց ընդունել, քանի որ չի ցանկանում «գործիք ծառայել որեւէ խողի»:

«Հիւրիյէթը» լիչեցնում է, որ Ազնաւուրը մշտապէս պայքարում է Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման համար: Իսկ ցեղասպանութիւն եզրից այդպէս խուսափող Թուրքիոյ նոյնիսկ կոչ է արել թէկուզ այլ բառով բնութագրել 1915-ի կատարուածը, միայն թէ հարկաւոր է ընդունել նախորդ դարասկզբին հայ ժողովրդի կրած ողբերգութիւնը:

### ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

### ՍՈՒՐԻԱ

### 13 ՄԱՅՐԱՊԵՏՆԵՐ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԱԾ

Անցեալ Նոյեմբեր ամսուան ընթացքին Սուրիոյ Մաալուլա աւանի Յոյն Ուղղափառ Մար Թագլա վանքէն առեւանգուած 13 մայրապետները ազատ արձակուեցան: Արդարեւ անցնող ամիսներուն կատարուած միջազգային մակարդակի միջամտութիւններն իրենց դրական արդիւնքը տուին: Մայրապետներն ազատ արձակուելէ ետք՝ 30 ինքնաշարժերու կառաշարով մը փոխադրուեցան Դամասկոս: Անոնք տեղույն յոյն ուղղափառ եկեղեցւոյ պատրիարքարանը ժամանելէ եւ իրենց ուրախութիւնը յայտնելէ ետք հաստատեցին թէ կալանքի տակ ենթարկուած շրջանին իրենց հանդէպ եղած է յարգալիւր վերաբերմունք:

Այժմ հերթը եկած է երկու եպիսկոպոսներուն, որոնք ցարդ առեւանգուած կը մնան: Կան նաեւ լիբանանցի այլ առեւանգեալներ Սուրիոյ եւ Նիկիերիոյ մէջ:

Այս առթիւ Լիբանանի Հանրապետութեան նախագահը շնորհակալութիւն յայտնած է Քաթարի իշխանին եւ բոլոր այդ կողմերուն, որոնք միջամտած են առեւանգեալներու ազատ արձակման համար:

### ԵՄԵՆ

### ՆԱԻ ՄԸ ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՊԱՏՃԱՌԵԼՈՎ 42 ՄԱՅ

Խռովայոյց վիճակը կը շարունակուի Եմէնի գլխաւոր քաղաքներուն մէջ: Այս կապակցութեամբ նաւ մը խորտակուած է հրկիզուելէ ետք: Փախստականներ փոխադրող նաւուն մէջ մահացած են 42 անձեր, որոնց մէջ կան կիներ եւ երեխաներ:

### ԼԻԲԱՆԱՆ

Ուսանողները կը զօրակցին հանրապետութեան նախագահին Լիբանանի տարբեր համալսարաններու ուսանողներ իրենց զօրակցութիւնը յայտնած են երկրի Հանրապետութեան նախագահ զօրավար Միշէլ Սլէյմանին: Անոնք բարձր գնահատած են նախագահ Սլէյմանի որդեգրած քաղաքականութիւնը, որուն համար ծանր քննադատութիւններու ենթարկուած էր: Յուսալի կը նկատուի որ Լիբանանի հայութիւնն ալ իր զօրակցութիւնը յայտնէ երկրի քրիստոնէայ նախագահին:

Ներկայիս պետական կարգ մը շրջանակներու առաջարկն այն է, որ հանրապետութեան նախագահի պաշտօնավարութեան ժամանակաշրջանը երեք տարիով եւս երկարաձագուի: Քանի որ ինք կը նկատուի յարմարագոյն անձը երկիրը դուրս բերելու ներկայի տագնապալի իրավիճակէն:

### ԵԳԻՊՏՈՍ

### ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱՆ ԿԸ ՄԵՐԺԷ ԳԱՆՉՆԱԸ ԻՍՐԱՅԷԼԸ ՈՐՊԵՍ ՅՐԷԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Գահիրէէն ստացուած լուրերուն համաձայն վերջերս հոն գումարուած արաբական Լիկայի հերթական նստաշրջանին առթիւ իսրայէլ պահանջած է, որ իր երկիրը ճանչցուի որպէս հրէական պետութիւն: Այս առնչութեամբ արաբ արտաքին գործոց նախարարները միասնաբար մերժած են ընդունիլ նման առաջարկ մը, քանի որ այդ պարագային լրիւ պիտի անտեսուին պաղեստինցի գաղթականներու իրաւունքները:

Պաղեստինեան պետութեան նախագահ Ապպաս, մարտ 17ին, Ուաշինկթընի մէջ պիտի խորհրդակցի ԱՄՆ-ի նախագահ Օպամայի հետ, բացառապէս այն իրողութիւնը, որ 1993ին Պաղեստինի Ազատագրական կազմակերպութիւնը ճանչցած էր իսրայէլը որպէս պետութիւն եւ այսքանը բաւարար պէտք է համարուի, չի խոչընդոտելու համար խաղաղութեան գործընթացը: Նշենք նաեւ որ ԱՄՆ-ի պետական քարտուղար ձօն Քերին, եօթ ամիսներ առաջ, խաղաղութեան բանակցութեանց սկսած էր, սակայն ապարդիւն դուրս եկաւ:

### ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ

### ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿ ՔԱԹԱՐԻ ԵՒ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ՄԻՋԵՒ

Վերջեւ քաղաքական սուր տագնապ մը ծայր տուած է Սէուտական Արաբիոյ եւ Քաթարի միջեւ: Այս առթիւ Սէուտական Արաբիա, Միացեալ Արաբական Իշխանութիւնն ու Պահրէյնը իրենց դեսպանները ետ քաշած են Քաթարէն: Այս միջոցառումին պատճառն այն է, որ Քաթար զօրավիզ կը կանգնի եւ կը քաջալերէ «Մահմետական Եղբայներ» կազմակերպութեան գործունէութիւնը, որ իր հերթին ոտնահարում կը համարուի չափաւորական մահմետականներու գործունէութեան: Վերոյիշեալ պատճառով եւս Եգիպտոս իր դեսպանը ետ կանչած է Քաթարի մայրաքաղաքի Տոհայէն:



**ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ**  
**ՀԱՅՈՅ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ**  
**ԳՅՐԴ ՏԱՐԵԴԱՐՅԻ ԱՌԹԻ**

Կազմակերպեա՞մք Փաստիմայի Գայ Գամագաղութային Մարմինի

**Յինգշաբթի, Ապրիլ 24, 2014**  
**Փաստիմայի Քաղաքապետարանին Առջեւ**  
 100 N. Garfield Ave., Pasadena, CA 91101 • Ժամանակը ժամը 10:00-ից

**COMMUNITY COMMEMORATION**  
**FOR THE 99TH ANNIVERSARY**  
**OF THE ARMENIAN GENOCIDE OF 1915**

Presented by Armenian Community Coalition of Pasadena

**Thursday, April 24, 2014, at 10:00am**  
 In front of Pasadena City Hall – 100 N. Garfield Ave., Pasadena, CA 91101

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

ՍԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆԵՐ՝  
**ԸՆԴԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

# ՊԱՏԵՐԱԶՍ ԵՒ ... ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏԵՐԱԶՍ

## ԷՏՈՒԱՐՏ Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ

### ՄԵԾ ՃԱՄԲԱՆԵՐՈՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՒԱԶԱԿՆԵՐԸ

Առաջին աշխարհամարտը, որուն հարիւրամեակն է այս տարի, միլիոնաւոր զինուորներու եւ խաղաղ բնակչութեան մահուան պատճառ դարձաւ, սակայն այսօր բոլորիս աչքերուն առջեւ այդ պատերազմի պատճառներուն եւ հետեւանքներուն խեղաթիւրման ամենաքստմնելի փորձը կը կատարուի: Այսօր կարգ մը ծախու պատմաբաններ եւ սուտ վաւերագիրներ կը փորձեն քանի մը հոգիի վրայ բարդել պետական բարբարոսութեան, ազատութեան ու մարդկային ստորութեան աննախադէպ մրցավազքին ամբողջ պատասխանատուութիւնը:

BBC-ի նոր նկարահանած վաւերագրական ֆիլմի մը շնորհիւ "լոյս" կը սիւտուի պատերազմի դրոյսապատճառներուն վրայ: Ինչպէս նշած է Daily Mail-ը, կը պարզուի, թէ Առաջին Աշխարհամարտին արմատները միահիւսուած են թագաւորական ընտանիքներու ղեկավարներուն՝ Մեծ Բրիտանիոյ միապետ Գէորգ 5-րդի, Ռուսիոյ կայսր Նիքոլայ 2-րդի եւ Գերմանիոյ կայսր Վիլհելմ 2-րդի բարդ փոխյարաբերութեանց հետ:

Այսպէս կոչուած փաստագրական այդ ֆիլմէն յտակ կը դառնայ, թէ Առաջին Աշխարհամարտը գուտներընտանեկան հողի վրայ սկսուած հակամարտութիւն էր:

Արիւնակցական սերտ կապեր ունեցող այս երեք միապետներէն երիցագոյնը Վիլհելմն էր, որ փոքր տարիքէն աչքի ինկած է իր տկար առողջութեամբ եւ անգլիոսէի մօր հետ ունեցած իր բարդ ու լարուած յարաբերութիւններով: «Թագաւորական գարմիկները ռազմի դաշտին վրայ» խորագրեալ ֆիլմը կը պատմէ, թէ ինչպէս երիտասարդ Վիլհելմի անգլիացի մօր ու անգլիական ծագում ունեցող ամէն ինչի հանդէպ տածած ատելութեան զգացումը յանգեցուցած է Առաջին Աշխարհամարտի սկիզբին:

Երբ Վիլհելմ լոյս աշխարհ եկած է, անոր մայրը եղած է տասնեօթ տարեկան: Մտնդաբերութիւնը այնքան դժուար եղած է, որ վնասած է նորածինին ձախ ձեռքը՝ փոքրիկը դարձնելով հաշմանդամ: Այս հանգամանքը մեծապէս մտահոգած է Վիլհելմին մայրը, որ թէեւ կը փորձէր հոգատար մայր ըլլալ, սակայն զաւակին հաշմանդա-

մութիւնը անընդհատ կը ջղայնացնէր զինք:

Ի տարբերութիւն Վիլհելմի՝ անոր երկու գարմիկներ Նիքոլայ 2-րդն ու Գէորգ 5-րդը սիրուած էին իրենց մայրերուն՝ Ալեքսանդրա եւ Տակմար դանիացի քոյրերու կողմէ, որոնք ամուսնացած էին Եւրոպայի ամենահզօր թագաւորական տոհմերու ժառանգորդներուն հետ:

Նիքոլայի եւ Գէորգի մանկութեան մէկ մասը Դանիա անցած է՝ իրենց մեծ հօր տան մէջ, ուր ապագայ միապետներուն սորվեցուցած էին չվատահիլ պրուսներուն ու գերմանացիներուն:

Մինչդեռ բրիտանացի ու ռուս բարեկամները չէին սիրեր փոքրիկ Վիլհելմը՝ նկատի առնելով անոր մօր հանդէպ ունեցած վերաբերմունքը: Երբ 1888-ին Վիլհելմին հայրը կը մահանայ, անոր վերաբերմունքը մօր հանդէպ աւելի կը վատթարանայ եւ այդ պատճառով ալ մօրեղբայրը՝ Մեծ Բրիտանիոյ միապետ էտուարտ 7-րդը, ընդմիջտ կը իզգէ իր կապը Վիլհելմին հետ:

Վերջիվերջոյ գարմիկներու միջեւ բարեկամական յարաբերութիւնները այնքան կը լարուին, որ նոյն ձեւով կը զարգանան նաեւ անոնց ղեկավարած երկիրներու յարաբերութիւնները:

Միակ մարդը, որ կը զիտակցէր, թէ ինչ աղէտալի հետեւանքներու կրնայ յանգեցնել այդ վիճակը, Բրիտանիոյ Վիքթորիա թագուհին էր՝ Նիքոլայ 2-րդի, Գէորգ 5-րդի ու Վիլհելմ 2-րդ-ի մեծ մայրը: Այդ դժուարին կացութեան մէջ թագուհին խաղաղարարի դեր կը ստանձնէ՝ թոռները համոզելով, որ պահպանեն լաւ յարաբերութիւնները: Մեծ մայրը շատ սիրելուն, Վիլհելմ կը կատարէ անոր խնդրանքը:

Սակայն Վիքթորիա թագուհիի մահէն ետք Ռուսիոյ, Բրիտանիոյ եւ Գերմանիոյ միջեւ գոյութիւն ունեցող փխրուն խաղաղութիւնը եւս կ'անհետանայ, Եւրոպան մօտեցնելով Առաջին Աշխարհամարտին, որու ընթացքին Նիքոլայ 2-րդն ու Գէորգ 5-րդը կուռեցան իրենց գարմիկ Վիլհելմ 2-րդին դէմ:

Ահա այսպիսի չուզական հեքիաթ մը, որուն տակ մեծ ճամբաներու քաղաքակիրթ աւազակներուն արժանի ժառանգորդները կը փորձեն քողարկել իրենց շնագայլային էութիւնն ու զազանային

նկրտումները, որոնց զոհ դարձան տասներկու միլիոնէ աւելի անմեղ մարդիկ, քսան միլիոնէն աւելի դարձան հաշմանդամ՝ խեղուած եւ այլեւս իրենց աննախադէպ ճակատագիրներով ոչ մէկը հետաքրքրող:

Ակամայ կ'ուզես պոռալ, ընդզվզիլ եւ Շէքսպիրեան Համլետի շուրթերով բացագանչել՝ "Դուռը վրանիդ ամուր գոցեցէք, պարոնայք սրիկաներ, որպէսզի չիմարի դերը միայն ձեր տան մէջ կարենաք խաղալ...":

### ԳԵՐՄԱՆԻԱ

Պատերազմին սկիզբը Եոհաննէս Լեփսիուսը գերմանական կառավարութեան յանձնարարութիւն ստացաւ հանդարտեցնելու «իր» հայերը: Ան այնպէս պէտք է ընէր, որ Օսմանեան տէրութեան հայերը չըմբոստանային: Սակայն 1915-ին Լեփսիուսը միայն կարճ ժամանակ մը մնաց խաղաղարարի իր առաքելութեան մէջ: Երբ ան ռազմական գործերու նախարար էսվերի շուրթերէն կը լսէ կոնստանդնուպոլսէն տեղահանումի դադրեցման անկարելիութեան մասին, կը հրաժարի արդարացնել Գերմանիան եւ այդ օրէն ի վեր կը սկսի հրապարակայնօրէն դատապարտել գերմանական երեսպաշտութիւնն ու ցեղասպանութիւնը: Սակայն բոլոր իշխող ռազմական գործիչներու կողքին դեռեւս անձեր կամ հասարակական ուժեր կային, որոնք բաւական ուժ ունէին դադրեցնելու Հայոց ցեղասպանութիւնը եւ կամ գոնէ մեղմելու անոր աղէտալի վիճակը:

Ըստ Լեփսիուսի այդպիսի անհատներէն էր, օրինակ, կայսրը եւ այդպիսի կազմակերպութիւն էր յատկապէս եկեղեցին: «Ի վերջոյ կայսրը ոչ միայն հաւատացեալ քրիստոնէայ, այլեւ գերագոյն եպիսկոպոս էր»: Ահա այսպիսի անկեղծ միամտութեամբ կը մտածէր մեծ մարդասէր Լեփսիուսը պատերազմի առաջին շրջանին: "Եկեղեցին ինքզինք որպէս հիմնարկ կը դրսեւորէ: Ան նիւթական միջոցներ կը ներգրաւէ միմիայն իր շահերը յառաջ տանելու համար: Ասիկա սարսափելի է":

Այս խօսքերը ոչ թէ եկեղեցատեաց մարդ, այլ Պերլինի բողոքական եկեղեցուց կին բարձրաստիճան հոգեւորական Քոնսթանց Քրաֆթը արտասանած է:

Անշուշտ Վիլհելմ կայսրը մէկ հրամանով կրնար դադրեցնել արիւնալի ցեղասպանութիւնը: Այսօր գերմանական աղբիւրները միտում նաւոր կը փորձեն խեղաթիւրել իրականութիւնը, Վիլհելմը ներկայացնելով որպէս մեծ ու գործ-

նական քաղաքականութենէն հեռացած միապետ, որ էնվերէն խաբուելու միամտութիւնը ունեցաւ:

Այո, պատմութեան մէջ այդպիսի դրուագ կայ, որ սակայն ցեղասպանութեան կապուած է: Անգէն հայերն ու միւս քրիստոնէայ ժողովուրդ ներք մինչեւ իրենց ակունները զինուած վայրենի բարբարոսին դէմ մինակ ձգելը թուրքերուն նուէրն էր՝ հլու-հնազանդ Գերմանիոյ Արեւելեան ծրագրերը կատարելու դիմաց: Հիմա գանք Վիլհելմի խաբուելուն...

Պալքանեան պատերազմներէն ետք Թուրքիան պէտք ունէր միանալու կեդրոնական հզօր տէրութիւններէն որեւէ մէկուն, որը առաջին հերթին Գերմանիան եղաւ, ապա Աւստրո-Հունգարիան: Նախաձեռնողը ռազմական նախարար էնվերն էր, որ որպէս նախկին ռազմական կցորդ (Պերլինի մէջ) իշխող երիտթուրքերու մէջ ամէնէն գերմանամէտն էր: Որքան Առաջին Աշխարհամարտին սկիզբը մօտենար, այնքան Թուրքիան աւելի կը փորձէր շահիլ գերմանական կայսրութեան վատահոլութիւնն ու դաշնակցութիւնը: Ի վերջոյ ան կ'առաջարկէ թուրքական բանակին մէկ քառորդը յանձնել գերմանական հրամանատարութեան ենթակայութեան, սակայն այդ ցանկութիւնը անարձագանգ կը մնայ:

Դեսպան Վանկենհայմը խորհուրդ չի տար, պատճառաբանելով, թէ այդպիսով Գերմանիոյ ծախսերը կրնային աւելնալ: Արտաքին գործոց նախարար Եակովը նոյնպէս որեւէ դրական բան չի տեսներ այդ առաջարկին մէջ: Էնվերը այս անգամ կ'առաջարկէ ոչ թէ իր բանակին քառորդը, այլ ամբողջ թուրքական բանակը յանձնել գերման բարձրագոյն հրամանատարութեան: Կայսրը, որ մինչ այդ զսպուած վերաբերմունք ցուցաբերած էր այդ հարցին նկատմամբ, տեղի կու տայ եւ կոստանդնուպոլիս գտնուող իր դեսպանին կը հրամայէ ընդունիլ առաջարկը: Վանկենհայմը կը հնազանդի, սակայն բանակցութիւններու ընթացքին պարբերաբար կը մոլորեցնեն գայն:

Պատմութիւնը առայժմ կը լուծէ միտումնաւոր էր արդեօք դեսպանին մոլորութիւնը եւ ինչ որ բան ստացաւ արդեօք իր մոլորութեան դիմաց: Կասկած չկայ, որ օր մը այդ փաստերն ալ երեւան կու գան:

Ի վերջոյ, գերմանացի դեսպանը պայմանագիր մը կը ստորագրէ, որը բաւականին մեծ խօս-

Շարք էջ 18

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909



**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

|  |   |   |
|--|---|---|
| <p>6300 Wilshire Blvd, Suite 1900<br/>Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul> | <p>805 East Broadway<br/>Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul> | <p>300 N. Lake Ave, Suite 500<br/>Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403b</li> </ul> |
|--|---|---|



**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաճեղաւ է

*Coverage & Protection should be on the top of your priority list.*



**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

### ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԲԱՐՁՐԱՑԱԾ ԱՂՄՈՒԿԸ ԿՐՆԱՅ ՎԵՐՋ ԴՆԵԼ ԷՐՏՈՂԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶԻՆ

**ՅԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**  
«Քալիֆոռնիա Քուլթիբլ» թերթի հրատարակիչ եւ խմբագիր

Անցեալ շաբաթ բացայայտուած շարք մը գաղտնախուռած հեռաձայնային գրոյցներու մէջ լսուած է, թէ ինչպէս Թուրքիոյ վարչապետ Ռեճեպ Թայիպ Էրտողան իր որդիին կը յանձնարարէ ոստիկանութեան թաքցնել Սթամպուլի իր տան մէջ պահուած տասնեակ միլիոնաւոր տոլարներու կանխիկ գումարը:

Այս ցնցող բացայայտումը պատճառ դարձաւ համատարած կոչերու՝ Էրտողանի հրաժարականի պահանջով, որ կը պնդէ, թէ ձայնագրութիւնները կեղծ են կամ մոնթաժուած: Սակայն պարզուած է, որ վարչապետին եւ անոր որդիին խօսակցութիւններու ձայնագրութիւնները իսկական են, ըստ ամերիկեան «Guarded Risk» համացանցային ընկերութեան, որ իրականացուցած է հեռաձայնային գանգերու մանրամասն դատափորձագիտական հետազոտութիւնը:

Չաւեշտալի է, որ Էրտողանը, որ իշխանութեան եկած էր իբրեւ իսլամական նպատակ հռչակելով կաշառակերութեան վերացումը թրքական քաղաքականութեան, զոհ գնաց «իշխանութիւնը կը փճացնէ. բացարձակ իշխանութիւնը բացարձակապէս կը փճացնէ» ասոյթին...:

Հեռաձայնային գանգերը գաղտնի ձայնագրուած էին այն օրը, երբ ոստիկանութիւնը ներխուժած էր նախարարներու, յայտնի գործարարներու եւ պետական դրամատան կառավարիչի տուները: Անոնք բոլորն ալ կը մեղադրուին կաշառակերութեան եւ փտածութեան այլ դրսեւորումներու մէջ ներգրաւուած ըլլալուն մէջ:

Կը ներկայացնենք հատուածներ Էրտողանի եւ անոր որդիին՝ Պիլալի, գաղտնախուռած հինգ հեռախօսագրոյցներէն.

Առաջին հեռախօսագանգը, 2013-ի Դեկտեմբեր 17-ին, ժամը 8:02-ին:

Էրտողան. ...Հանէ քու տունէդ այն ամէնը, ինչ ունիս, լա՛ւ:

Պիլալ. Ի՞նչ է որ ունիմ, հայրիկ: Քու փողդ չհրկիզուող պահարանին մէջ է:

Էրտողան. Ճիշդ ատոր մասին կը խօսիմ...:

Պիլալ. Ի՞նչ պէտք է ընենք ատոր հետ, հայրիկ: Ո՞ւր պիտի տեղաւորենք զայն:

Էրտողան. Յատուկ տեղերու մէջ, որոշ յատուկ տեղերու...:

Ըրէ այդ մէկը:

Երկրորդ հեռախօսագանգը, ժամը 11:17-ին:

Պիլալ. ...Իմ եղբայրս (փեսայ) Պերաթը այլ բան կ'առաջարկէ: Ան կ'ըսէ, որ մենք ատոր մէկ մասը տանք Ֆարուքին (Կալիֆոռնի, շինարարական ընկերութեան նախագահ) այլ աշխատանքի համար, որպէսզի ան կարենայ զանոնք գործի մէջ դնել նախորդներուն պէս: Այդպէս ընենք: Այդ ձեւով մենք կրնանք մեծ գումար մը դասաւորել: Էրտողան. Թերեւս:

Պիլալ. Լաւ: Միւս մասին համար, քանի որ պիզնես համագործակցութիւն սկսած ենք Մեհմետ Կիւրի հետ (շինարարական խումբի ղեկավար), կը մտածենք ատիկա տալ անոր, ըսելով. «Պահէ՛

ասիկա, դուն կրնաս զայն օգտագործել հետագայ ծրագիրներու համար»: Այս ձեւով մենք կրնանք կրճատել այն, իսկ մնացածն ալ տեղափոխել մէկ այլ տեղ:

Էրտողան. Լաւ, շատ լաւ, քանի դեռ կ'ընես...: Լաւ կ'ըլլայ, եթէ ընես...: Եթէ դուն կարենաս բոլորը վերացնել:

Պիլալ. Այո, Աստուծոյ կամքով, այսօր բոլոր հաշիւները կը մաքրենք...:

Երրորդ հեռախօսագանգը, ժամը 15:39-ին:

Էրտողան. Կատարեցի՞ր բոլոր առաջադրանքներս:

Պիլալ. Երեկոցեան կ'աւարտենք: Մէկ մասը դասաւորեցինք. մենք դասաւորած ենք Պերաթի մասը, հիմա, առաջին հերթին կը կարգաւորենք Մեհմետ Կիւրի մասը, իսկ յետոյ մնացածը. անոնք կ'ընենք միջնալէն ետք...:

Էրտողան. Ի՞նչ ըրած է Սուլթան (դուստրը):

Պիլալ. Ան դուրս բերած է, հանած է գանոնք, մենք խօսած ենք, եւ այլն:

Էրտողան. Մի խօսի՛ք հեռաձայնով իրարու հետ:

Չորրորդ հեռախօսագանգը, ժամը 23:15-ին:

Պիլալ. Ողջոյն, հայրիկ, կը հեռաձայնեմ, որ... մենք հիմնականօրէն ըրինք (այդ): Դուն հիմա ինծի հեռաձայնեցիր, հայրիկ:

Էրտողան. Ոչ, ես քեզի չհեռաձայնեցի, դուն ինծի հեռաձայնեցիր:

Պիլալ. Ինծի հեռաձայնած են գոց թիւէ մը:

Էրտողան. Երբ կ'ըսեն «հիմնականօրէն», արդեօք դուն ամբողջովին մէջտեղէն հանած ես զայն:

Պիլալ. Դեռ ամբողջական չէ, հայրիկ: Թոյլ տուր բացատրեմ:

Մենք դեռ ունինք 30 միլիոն եւրօ, որ մինչեւ հիմա չենք կրցած վերացնել: Պերաթը առաջարկ մը ունի: Կար լրացուցիչ 25 միլիոն տոլար, որ պիտի ստանար Ահմետ Չալիքը (գործարար):

Իրենք կ'առաջարկեն ատիկա տալ (անոր): Երբ փողը ստանանք, բան մը կ'ընենք, կ'ըսեն իրենք: Իսկ մնացած գումարով կրնանք բնակարան գնել Շահրիպարէն, ըստ ան: Ի՞նչ կ'ըսես, հայրիկ:

Էրտողան. Ինչ որ է, մենք կը դասաւորենք:

Պիլալ. Այսպէս պիտի ընենք: Էրտողան. Լաւ, այդպէս ըրէ:

Պիլալ. Կ'ուզես ատոնք բոլորը վերացնե՞մ, հայրիկ, կամ կ'ուզես որոշ գումար մը քեզի համար:

Էրտողան. Ոչ, ատիկա կարելի չէ ձգել, որդիս: Դուն պիտի փոխանցես գանոնք ուրիշներուն, կրնաս գանոնք փոխանցել Մեհմետի հետ:

Պիլալ. Այո, անոնց տուած ենք: Մենք անոնց տուած ենք 20 (միլիոն) տոլար:

Էրտողան. Ի սէր Աստուծոյ, առաջին հերթին դուն ատոնք պիտի փոխանցես: Դուն կրնաս յետոյ ատոնք ընել...:

Պիլալ. Այս պահուն մենք կրցանք այսքանը տալ: Դժուար է արդէն, ան շատ տեղ կը զբաղեցնէ: Մէկ մասը տեղաւորած ենք մէկ այլ տեղ, մէկ մասը տուած ենք Թունճին, եւ յետոյ...:

Էրտողան. Ամբողջը փոխանցած էիր Թունճի՞ն:

### ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱՅՍՕՐ ՊԱՏԱՍԽԱՆ Է ՏԱԼԻՍ ԽԱՅՍ ՍԻԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**ՅՈՎԻԿ ՎԵՐԱՆԵԱՆ**

1917 թուականից սկսած ցարական Ռուսաստանի փոխարէն սկսեց ձեւաւորուել մէկ այլ պետական միաւորում, որը կոչուեց խորհրդային միութիւն: Այդ պետական միաւորման մէջ գտնուում էին 15 պետութիւններ, տարբեր կրօնական, լեզուական ու ազգային պատկանելութեան պետութիւններ: Այդ պետութիւնների մի մասը նոր էր ստեղծուած, իսկ մի մասն էլ ունէր բազմադարան պատմութիւն: Ինչեւէ, խորհրդային միութիւնն ստեղծուեց բուն ուժի կիրառմամբ եւ ունեցաւ 70 տարուայ պատմութիւն:

1991 թուականին խորհրդային միութիւնը փլուզուեց ու դրսեւորուեց առաջացան 16 անկախ պետութիւններ: Խորհրդային միութեան կորիզը կազմում էր Ռուսաստանը եւ նա պէտք է շարունակէր ու կրէր այդ գերհսկայ երկրի ժառանգութիւնը: Դարեր ի վեր Ռուսաստանը եւ իՍՂՄ-ը եղել էին աշխարհի երկրորդ բեւեռը, ի հակադրութիւն Արեւմտեանի: Անկախ Ռուսաստանը սակայն, պէտք է կանգնէր մի շարք խնդիրների առաջ, քանի որ իՍՂՄ-ը նրա համար շատ ծանր ու դաժան ժառանգութիւն էր թողել:

ԻՍՂՄ տարիներին կատարուել էին քարտէզի այնպիսի վերաձեւումներ, որոնք ՌԴ-ի համար դարձան պատուհաս: Առաջին պատուհասը եղաւ Վրաստանը, որը եթէ չիչենք, կազմուել էր Աբխազիայից, Բաթումից, Հարաւային Օսեթիայից, Չաւախից, Թբիլիսիից: Մի խօսքով իՍՂՄ-ը հայերի, արեւմտեաների, օսերի, քարթվեղները եւ այլ ժողովուրդների տարածք-

ների վրայ հետաքրքիր մի «բերդուձ» էր սարքել ու անուանել Վրաստան: Վրաստանն սկսեց ձգտել դէպի Արեւմուտք եւ իր քաղաքականութեամբ փաստացիօրէն ՌԴ դէմ դուրս եկաւ, իսկ ՌԴ-ն էլ ստիպուած եղաւ ռազմական գործողութիւններ իրականացնել եւ ուղղել իՍՂՄ սիւսլը՝ Վրաստանից պոկելով Աբխազիան ու Հարաւային Օսեթիան եւ դրանք անկախ պետութիւններ հռչակելով, որը սակայն, կարելի էր անել հենց իՍՂՄ տարիներին:

Ռուսաստանի համար երկրորդ պատուհասը դարձաւ արիւնակից սլաւոնական ժողովուրդը՝ ուկրաինացիները: Եթէ չիչուեմ ենք, նախքան իՍՂՄ ստեղծումն Ուկրաինան այնքան հզօր ու մեծ չէր, որքան դրանից յետոյ: ԻՍՂՄ տարիներին, մասնաւորապէս 1954 թուականին Ռուսաստանը Ղրիմն ու այլ տարածքներ յանձնեց Ուկրաինային, իսկ այսօր ստիպուած է ուղղել սխալները եւ ետ վերցնել այդ տարածքները, մինչդեռ կարելի էր դրանք ուղղակի չտալ:

Մի՞թէ Ռուսաստանն այսօր կը կանգնէր այսպիսի խնդիրների առաջ, եթէ ժամանակի նպատակաշարմարութիւնից ելնելով իՍՂՄ իշխանութիւնները թոյլ չտային նմանատիպ սխալներ: Անցնենք առաջ ու փորձենք բացայայտել այն հնարաւոր պատուհասները, որոնք կարող են զալ Ռուսաստանի գլխին:

Շղթայի միւս ծայրը մեր երկրում է՝ Հայաստանում: ԻՍՂՄ-ն ստեղծուելիս, մասնաւորապէս Թուրքիային հաճոյանալու համար մասնատեց ու կտոր-կտոր արեց

Շարք էջ 18

*Զմեքրայիւ*  
**ԽՐԱԽՆՈՒՆԵՐ**  
*tu*  
**ՉՈՒԿԵՆԵՐՈՅԹ**

Կազմակերպութեամբ՝  
**ՎԷՆՏԷՅԼԻ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ**  
**ՄԱՍՆԱԺԻՂԻ**

**Շաբաթ, 22 Մարտ 2014**  
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ  
1060 N. Allen Ave. • Pasadena, CA 91104



Տոմսերու համար դիմել՝ (818) 913-9311  
**ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ \$30.00**

# ԵՐԿՐՈՐԴ ԾՆՈՂՆԵՐԸ Ի ՊԱՏՈՒԻ՞ (ՈՒՍՈՒՑՉԱՅ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

## ԱԻՆՏԻՍՈՒԱԶՄԻԿ

Այսօր, շոյուած պիտի զգան ուսուցիչները: Գովասանական, ոգեկոչական եւ բարեմաղթական խօսքերը պիտի չուզեն զիրենք՝ անկասկած: Յոգնաբեկ դաստիարակներ, շնչասպառ ուսուցիչներ թէ սկսնակ դասատուներ պիտի լսեն ուսուցիչի խօսքեր, ստէպ՝ անկեղծ ու սրտաբուխ, ստէպ՝ գուտ քաղաքավարական ու պաշտօնական կանոններէ մղուած:

Ո՞վ է ուսուցիչը եւ յատկապէս հայ ուսուցիչը:

Դիպուկ համեմատականով մը ուսուցիչը կը բնութագրեն որպէս երկրորդ ծնողը: Թոթովախօս մանուկը, իր տան անդամները ունենալով իբրեւ կեանքի առաջին օրինակներ, աւելի ուշ դպրոց յաճախելով, ինքնընտանեացի, առաջին ուսուցիչները կը դառնան երկրորդ օրինակներ, ուրեմն՝ երկրորդ ծնողներ: Ահա այստեղ, ուսուցիչը դուրս գալով սովորական պաշտօնագլխի տարազէն, իր վրայ կամայակամայ կը ստանան սերունդներու օրինակ եւ ուղղորդիչ հանդիսանալու խիստ էական պարտականութիւնները: Ան որ կը կարծէ թէ ուսուցիչին աշխատանքը սոսկ գիտելիքի, տեղեկութեանց եւ նորութիւններու փոխանցումն է աշակերտներուն, ապա՝ չարաչար կը սխալի: Արդարեւ, աշակերտին ուղղութեան առանցքը հանդիսանալով, անոր նոր հերոսը ըլլալով, ուսուցիչը կը դառնայ անոր հոգեմտաւոր աշխարհին կերտիչը, մարդակերտման անգուզական մշակը, պատանիի ներաշխարհին ամենաազդեցիկ տիպարը:

Իսկութեան մէջ, ինչ խորիմաստ եւ պատասխանատու պաշտօն է ուսուցչական ասպարէզը, քանի ուսուցիչը իր ամբողջ վաղուան քաղաքացիներուն դաստիարակութիւնը, յետնորդ սերունդներուն նկարագիրն ու առանձնայատկութիւնները, ան է որ կը պատրաստէ երկրին ու մարդկութեան պիտանի տարրերը: Բանաստեղծ Դանիէլ Վարուժանի բառերով.

Վրսեմ կոչում: Հոգեակնբու մէջ հըրու,  
Ըզգուշաւոր հրպուսներով՝  
Կը գրբէ գութն էջերու վրայ ապահով,  
Կը ցանէ սէրն՝ անձնուիքութիւն քաղելու:  
Անոնց կոկոն ուղեղին մէջ կիսարաց  
Կը գետեղէ մառազայթներ,  
Եւ կը լցնէ խաւերն անոր՝ բարեբեր  
Իր գիտութիւնն Աստուծոյ մէջ ամփոփած:

Մինչ, այսօր, փաղաքշական խօսքերը կը համեմուրին միութարական ու քաջալերիչ տարրերով, անդին՝ ամբողջ տարի մը ուսուցիչը կը մնայ ստուերի մէջ՝ հոգաբարձուներու, ազգային ջոջերու եւ փարթամ մեծամեծներու քմահաճոյքին ենթակալ: Կ'ապրի արդար վարձատրութեամբ գոյատեւելու տուայտանքը, օրապահիկ ապահովելու մղձաւանջը: Երգիծաբան Յակոբ Պարոնեանի օրերէն մնացած «վարժապետ»ի նուաստացուցիչ կարգավիճակէն ի՞նչ փոխուած է այսօր, դժուար է դրական պատասխան մը ակնկալել:

Սփիւռքի կազմակերպուածութեան մասին կը ճառուի յաճախ.

հայերէնախօսութեան եւ հայեցի դաստիարակութեան թմբկահարներ միալար կ'աղաղակեն լեզուի կարեւորութեան եւ ազգային ոգիի հրամայականին շուրջ. կ'ահագանգեն հայերէնի վտանգուածութեան եւ սպառնալից կացութեան մասին, սակայն կարծէք անոնք կ'ուզեն անգիտանալ, թէ սփիւռքահայութեան կեանքին ենթակառուցը դպրոցական ցանցն է, իսկ այդ ցանցին ամուր պահպանման հիմնական գրաւակներ՝ հայ ուսուցիչը: Հետեւաբար, անտեսելով ուսուցիչը՝ ինչպէ՞ս պիտի պահպանենք կրթական ցանցը. եթէ տարրական պայմաններ չստեղծենք ուսուցիչին համար՝ ի՞նչ իրաւունքով պիտի նշենք ուսուցչաց սօնը: Խճճուած հանելուկի կը նմանի հետեւեալ փաստը՝ երբ հայ ուսուցիչն կը պահանջուի առաւելագոյնը, սակայն՝ հայ ուսուցիչին կը տրուի նուազագոյնը:

Գաղանիք մը բացայայտած էնք ըլլար կարծեմ, եթէ գրենք, թէ մանկավարժութիւնը կը դասուրի անհրապօք ասպարէզներու

չարքին, եթէ ոչ՝ առաջինը: Ինչո՞ւ. պարզ է, ժամանակակից ընկերութիւնը խարսխուած է նիւթին վրայ. մարդ կը գնահատուի ոչ թէ իր ազգային, բարոյական, հոգեմտաւոր արժանիքներով, այլ՝ նիւթական կարողութեամբ: Չեն հարցներ՝ ո՞վ ես, ի՞նչ կրթութիւն ունիս, կը հարցնեն՝ ի՞նչ ունիս, որքա՞ն ունիս: Եւ ըստ այդմ կը դատեն ընկերային դիրքը, արժէքը եւ տեղը: Ահա թէ ինչու նոր սերունդէն ոչ ոք կը ձգտի Մարտի 9-ին նշել իր սօնը՝ ուսուցչաց սօնը. երկրորդ ծնողքին օրը: Աւելին, նորափթիթ երիտասարդներ, երբ կը տեսնեն իրենց ուսուցիչներուն վիճակը՝ չնչին վարձատրութեամբ կամ գործազուրկ տունը նստած, ինչո՞ւ պիտի բաղձան իջնալ նոյն թակարդը. ծուղակուիլ միամտաբար: Օրինակ, Կիպրոսի մէջ հայոց պատմութեան ուսուցիչ մը անգործ չմնալու եւ օրապահիկ վաստակելու համար տարիներ աշխատած է գործարանի մը մէջ, համեստագոյն կարգավիճակով՝ հաւաքարար կամ բանուոր իր «աշակերտ»ն ու մօտիկը ունենալով թօմին՝ այսինքն՝ գործարանին սլքտացող, միշտ քաղցած ու մլաւող կատուն...: Կամ՝ ինծի մատնացոյց

ըրէք խնդրեմ հայ տնօրէն մը, ուսուցիչ մը, հայերէն լեզուի դասատու մը, որ իր գաւկին յորդորած է հետեւիլ իր ուղիին՝ դառնալ մանկավարժ, այլոց երկրորդ ծնողքը: Մտաբերելով տնօրէններս եւ ուսուցիչներս, կը նկատեմ որ բոլորին գաւակներն ու թոռները հեռու մնացած են հայ դպրոցի մէջ ծառայելու գայթակղութենէն, կամ՝ յաճախած են օտար վարժարաններ եւ ապա օտարացած...: Այս լեզի փաստը խորհիլ չի՞ տար շատերու, որ ուսուցչութիւնը ապերախտ, անհրապօք եւ վանողական ոլորտ մըն է: Ուրեմն, ինչո՞ւ նշել Մարտի 9-ը՝ ուսուցչաց սօնը: Երկրորդ ծնողները ի պատուի՞ են արդեօք:

Ի պատուի են՝ խօսքով եւ Մարտի 9-ին մի քանի ծափահարութիւններով. սին խոստովանելու շուրջանքներով:

Բայց, ո՞ւր է երկրորդ ծնողքին մեծագոյն հրճուանքը, հոգեկան սփոփանքն ու բարոյական վարձատրութիւնը. ի հարկէ՞ այն սերունդները՝ որոնք շրջանաւարտ, թէ թերաւարտ կը տողանցեն կեանքի տարբեր բնագաւառներուն մէջ՝ իրենց համեստ ուսուցիչէն կտոր մը

Շար.ը էջ 13



**ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿՐ ԶԻՒՐՆԿԱԼԷ ԵՒ Կ՝ՈՂՋՈՒՆԷ  
ԵՐԵՔ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ**



Սիրելի անդամներ եւ բարեկամներ Պոլսահայ Միութեան  
Համայնքը հրաւիրուած է ներկայ ըլլալու համայնքային կարեւոր Հաւաքի  
Դրսեւորելու Հայ երեք Գլխաւոր Կուսակցութիւնները

Կիրակի, Մարտ 16, 2014ին երեկոյեան ժամը 6:00ին, Պոլսահայ Միութեան կեդրոնին մէջ  
19726 Sherman Way, Winnetka, CA 91306

Միութիւնը պիտի հիւրընկալէ Հայ երեք կուսակցութիւններու ներկայացուցիչները

**Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն, Տիար Գրիգոր Խոտանեան  
Արեւմտեան Ամերիկայի Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն,  
Ատենապետ՝ Դոկտ. Վիգէն Յովսէփեան  
Ռամկավար Ազատական Կուսակցութիւն, Դոկտ. Մինաս Գոճայեան**

**Բարի գալուստի խօսք՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան  
Հոգաբարձու եւ ատենապետ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի**

**Հարցումներ պիտի առաջադրուին բանավէճը վարող հետեւեալ անձերուն**

Իրաւաբան Էտվին Մինասեան, Ատենապետ Պոլսահայ Միութեան Հոգաբարձութեան  
Տիար Միսն Աճիլաջօղլու, Ատենապետ Պոլսահայ Միութեան Ընդհանուր Ժողովի  
Իրաւաբանուհի Տիկին Ժայիտ Չէքքինեան-Չընար, Ատենապետուհի Պոլսահայ Միութեան  
Կրթաթոշակի Յանձնախումբի

Սոյն հաւաքին նպատակն է բարձրացնել իրազեկութիւնը եւ խրախուսել քաղաքացիական ներգրաւուածութիւնը տրամադրելով տեղեկատուութիւն, երեք արեւելական կուսակցութիւններու պատմական ծագման ու ձեռքբերումներուն մասին, ինչպէս նաեւ անոնց ծրագիրներուն եւ քաղաքականութիւններուն, քննադատական ժամանակակից մարտահրաւերներու վերաբերեալ, որոնք կ'ընդդիմանան հայ ազգին:

Կը քաջալերենք բոլորը մասնակցելու սոյն ձեռնարկին  
Մուտքը ազատ - Հիւրասիրութիւն  
Եթէ որեւէ հարցում ունիք կրնաք հետաձայնել  
Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանին (818) 800-1976

# Massis Weekly

Volume 34, No. 9

Saturday, March 15, 2014

## Young Activists Continue Protests Against Controversial Pension System Reform



YEREVAN -- Hundreds of mostly young people scuffled with riot police in Yerevan on Friday in continuing protests against a controversial reform of Armenia's pension system initiated by the government.

The police used force against the protesters and detained three of them after they blocked a street adjacent to the Armenian Ministry of Finance. All three men were set free later in the day.

The crowd organized by the Dem Em (I Am Against) pressure group demonstrated outside the ministry building in the city center to condemn Finance Minister Davit Sargsian for his warnings issued to public and private employers.

Sargsian said last week that the employers will face fines if they fail to enforce the reform requiring workers aged 40 and younger to save for retirement, despite its suspension by the Constitutional Court in late January. The court is scheduled to open on March 28 hearings on the constitution-

ality of the unpopular measure challenged by Armenia's four main opposition parties.

Opponents of the reform say that tax authorities are therefore not allowed to deduct 5 percent of workers' gross wages at least until a ruling on the case. Government officials, including Sargsian, claim the opposite.

"The minister has become a person extorting money," Davit Manukian, a Dem Em leader, shouted through a megaphone outside the ministry building. Manukian and other protesters demanded that Sargsian come out of the building and meet them in public.

The 36-year-old minister refused to do that, sending instead the chief of his staff, Karen Tamazian, to talk to the angry protesters. "This is demagoguery," Tamazian told them. "This is not an offer of dialogue."

Tamazian also said that Sargsian is ready to receive representatives of

Continued on page 4

## Five Candidates Qualify for June Special Municipal Election

GLENDALE, CA -- Glendale's City Clerk announced today that five candidates had qualified for the ballot in the upcoming June 3, 2014 Special Municipal Election. Seven individuals had expressed interest in running but only five submitted papers to qualify. The City Clerk's office confirmed that all five candidates who returned their papers had the requisite 100 signatures from registered Glendale voters to qualify each candidate for the ballot. The order of candidates to appear on the ballot will be determined by a randomized alphabets drawing that is conducted by the California Secretary of State on March 13, 2014.

These are the candidates who have qualified (List is alphabetical by last name. Actual order will be determined on 3/13/14):

- Rick Barnes Business Owner / Realtor
- Paula Devine Retired Teacher
- Vartan Gharpetian Business Owner
- Chahe Keuroghelian Small Business Manager



• Mike Mohill Retired Businessman

The June 3, 2014 Special Municipal Election was triggered by the election of then-Councilmember Rafi Manoukian to the office of City Treasurer in April 2013. The resulting vacancy was filled by retiring Councilmember Frank Quintero who was appointed by the City Council until such time that a special consoli-

Continued on page 4

## Switzerland Appeals ECHR Ruling

BERN, SWITZERLAND -- The Swiss Government announced today it will appeal the ruling of the European Court of Human Rights (ECHR) on December 17, 2013, overturning the conviction of Dogu Perinçek for denying the Armenian Genocide.

The decision was made by the Swiss Federal Office of Justice to ask the ECHR's Grand Chamber to review the ruling in order to clarify the scope available to Swiss authorities in applying the Swiss Criminal Code to combat racism. The anti-racism law was created in 1995 in order to comply with the UN Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination.

In 2007, Mr. Dogu Perinçek was convicted under the Swiss anti-racism law for publicly denying the Armenian Genocide. He failed to win two appeals in Swiss courts, then appealed to the ECHR. On December 17, 2013, the ECHR overturned this conviction on the grounds of freedom of speech.

The International Association of Genocide and Human Rights Studies (A Division of the Zoryan Institute) (IIGHRS) and the Switzerland-Armenia Association (SAA) have worked



together since December, along with a team of scholars and experts in international human rights law, major Armenian organizations and individuals, as a strategic team to inform and educate Swiss public opinion.

IIGHRS produced a full-page informational advertisement that appeared in Switzerland's leading German and French language newspapers *Neue Zürcher Zeitung* on March 6 and *Le Temps* on March 7. The advertisements were the product of collaboration between the Switzerland Armenia Association and the IIGHRS.

The purpose of these ads was to raise awareness with the Swiss public that the December 17, 2013 ruling of the Perinçek vs. Switzerland case by the European Court of Human Rights,

Continued on page 4

## Jailed Turkish-Armenian Writer Forced to Sleep on Floor, Not Allowed Showers

ISTANBUL (Hurriyet Daily) -- Turkish-Armenian linguist and writer Sevan Nisanyan, who was jailed on charges of illegal construction, is being forced to sleep on the floor in his cell and is being prevented from taking showers, activists have told Turkish media.

Nisanyan was moved from an open to a closed prison last week after he wrote a letter to the public explaining how an investigation was opened against him after he denounced a guard who stole his credit card.

A group formed in solidarity with the outspoken linguist, comprised of fellow writers, journalists and activists, has expressed its concerns regarding the conditions of his imprisonment.

"Our state persists in giving Nisanyan a hard time, even now when it faces turmoil. Nisanyan has been forcedly exiled to the Buca closed prison facility. The Torbali open prison was already marked by ill-treatment of an intellectual who has added a lot of value to this country. We are ashamed on their behalf," said Sait Çetinoglu, a writer and member of the solidarity group.

According to Internet news portal T24, the group said Nisanyan had been forced to sleep on the floor on the



grounds that there were no available beds, describing this as "torture." It added that it was now preparing to publicize the treatment of Nisanyan to the international public.

Nisanyan was handed a two-year sentence approved by the Court of Appeals on Jan. 2, on charges of illegally constructing buildings in Sirince, a village in the western province of Izmir that he has contributed to promoting across the world.

He had completed the construction of a house after a court ruled that the area was a natural site, rejecting the ruling as an "arbitrary decision."

In a separate case, Nisanyan was also condemned to a 3.5-month prison term for committing blasphemy against the Prophet Muhammad in a blog post.

## President Sarkisian Denounces Turkey and Azerbaijan for “Xenophobic Policies”

DUBLIN -- President Serzh Sarkisian denounced Turkey’s long-running economic blockade of Armenia and accused Ankara of pursuing a “xenophobic policy” towards his nation, as he addressed a summit of the European People’s Party in Dublin late on Thursday. He went on to implicitly accuse Europe of tolerating “manifestations of fascism” in Azerbaijani leaders’ public statements on the Nagorno-Karabakh conflict.

“It is incomprehensible and unacceptable to us, when any manifestations of fascism are being tolerated, when evident hate speech of the President of Azerbaijan, a Council of Europe member State, is pretended to go unnoticed. For the Eastern Partnership to work effectively we should employ straight and honest talk on the issues of reciprocal concern,” said the Armenian president, as quoted by his press service.

He also reminded that Turkey, a member of the EU Customs Union, has not lifted the blockade of Armenia, even though last December the European Union made a decision to provide Armenia with an opportunity to benefit from the enhanced Generalized Scheme of Preferences.

“Nowadays, when humankind gets ready to mark the centennial of the World War I and the horror it unleashed, Turkey continues its policy of denial, attempts to bury the memory of more than one million victims of the Armenian Genocide and disregard demands of a nation that was deprived of its homeland, refuses to repent for what had been done and thus pursues a xenophobic policy that at its roots is aimed at harming Armenia and Armenians,” he said.

Sarkisian also addressed the crisis in Ukraine. “The Ukrainian events are a matter of serious concern to all of

us. We regret profoundly that numerous human lives’ losses were registered in Kiev. Under the existing circumstances it is necessary to take all possible measures in order to ease the tension and find reasonable solutions by the means of a dialogue,” the Armenian president said.

Sarkisian did not comment further, avoiding any mention of Russia’s military intervention in Ukraine’s autonomous republic of Crimea that has been strongly condemned by the West.

Sarkisian also reaffirmed his stated commitment to closer partnership with the European Union but implied that it must be “compatible” with Armenia’s forthcoming membership of a Russian-led alliance of ex-Soviet states.

Sarkisian remained careful not to use the term “European integration” as he addressed the summit, he spoke instead of his government’s “policy of complementing and harmonizing interests” of Armenia’s key foreign partners.

“We appreciate the assistance that the European Union and its member States have been backing Armenia in its social-economic and institutional development, strengthening of our government agencies, reform of the public sector, fight against corruption and reduction of poverty,” said Sarkisian. “About two weeks ago the National Security Council of Armenia approved an action plan for cooperation between Armenia and the EU in 2014 and 2015.”

“We are committed to continue our efforts at seeking effective cooperation mechanisms with the EU, which will both reflect the essence of the preceding discussions we had with the EU and are compatible with the other cooperation formats,” he added in a clear reference to the Customs Union of Russia, Belarus and Kazakhstan.

## Parliament Majority Blocks New Probe into March 2008 Killings



YEREVAN – The National Assembly blocked on Monday the launch of a new parliamentary inquiry into the 2008 deadly post-election violence in Yerevan that was demanded by its opposition minority.

Only 46 members of the 131-seat Armenian parliament backed the initiative put forward by the opposition Armenian National Congress (HAK) and backed by three other minority factions. Sixty-six other deputies, most

of them members of the ruling Republican Party of Armenia (HHK), voted against.

An HAK bill circulated last month envisaged the creation of an ad hoc commission tasked with investigating the March 1-2, 2008 street clashes between security forces and opposition protests, which left ten people dead. The HHK promised to agree to such a probe in late 2012 but effectively reneged on that pledge after-

## Key Suspect in Hrant Dink Murder Trial Released



ISTANBUL -- A Turkish court released Erhan Tuncel on Friday, who had previously been acquitted of all charges related to the 2007 killing of Hrant Dink, the late editor-in-chief of the Turkish-Armenian weekly Agos, but was then arrested during the retrial of the murder case, Turkish Today’s Zaman Daily reports.

The Istanbul 14th High Criminal Court began a review of the trial late last year after the Supreme Court of Appeals overturned the Istanbul court’s ruling from Jan. 17, 2012, which had dismissed the involvement of an organized criminal network in the murder.

Tuncel was released as part of a bill reducing the maximum period of arrest to five years, which was signed into law by Turkish President Abdullah Gül on Thursday night. The court ruled that Tuncel’s detention period as a suspect had exceeded the maximum, as he had been under arrest for five years and five months.

Tuncel, who worked as an informant for the Trabzon Police Department, was sentenced to 10 years in prison for his role in the 2004 bombing of a McDonald’s restaurant in the Black Sea town of Trabzon but was acquitted of all charges relating to the Dink murder, including prosecutors’ claims in the first trial that he was the one who had ordered Yasin Hayal, the man who was given a life sentence for soliciting Dink’s shooter, to murder him.

Tuncel, along with all the other defendants, were cleared of membership of a terrorist organization in an earlier ruling of a local court.

Dink was shot and killed in broad daylight on Jan. 19, 2007, by an ultranationalist teenager outside the offices of his newspaper in Istanbul. Evidence discovered since then has led to claims that the murder was linked to the “deep state,” a term referring to a shadowy group of military and civilian bureaucrats believed to have links with organized crime.

## Armenian FM Meets with Minsk Group Co-Chairs in Moscow

MOSCOW -- Armenian Foreign Minister Edward Nalbandian on Tuesday held a meeting in Moscow with Co-Chairs of the OSCE Minsk Group Igor Popov (Russia), Jacques Faure (France), James Warlick (USA) and the OSCE Chairman-in-Office’s Personal Representative Andrzej Kasprzyk.

According to the Armenian Foreign Ministry’s official website, during the meeting the sides continued discussions “around taking forward the negotiating process for a peaceful settlement of the Karabakh problem.”

The co-Chairs briefed the Armenian Foreign Minister on the results of their meeting with Azerbaijani Foreign Minister Elmar Mammadyarov in Paris,

the previous day.

“Talks with FM Nalbandian in Moscow confirm that Armenia seeks a peaceful settlement in Nagorno-Karabakh,” James Warlick tweeted after the meeting.

On Tuesdya, the U.S. Co-Chair James Warlick expressed hope that the presidents of Armenia and Azerbaijan will meet again this month in a further attempt to revive the Nagorno-Karabakh peace process.

In a series of tweets, Warlick, Washington’s chief Karabakh negotiator, at the same time cited fears that the crisis in Ukraine could heighten tensions in the Armenian-Azerbaijani conflict zone.

wards, setting last-minute conditions that were rejected by the HAK.

Speaking during parliament debates on the matter held in late February, HHK lawmakers questioned opposition assertions that the proposed commission could help to solve at least some of the killings. The ruling party’s parliamentary leader, Galust Sahakian, officially rejected the opposition initiative shortly before Monday’s vote. “Those who think they can organize shows on one or another issue are wrong,” he said.

The motion was voted down after a warning issued by Levon Zurabian, an HAK leader. Zurabian

said that the parliament majority would share responsibility for the 2008 bloodshed and what he called “obstruction of justice” by the Armenian authorities.

The authorities have said in the past that the violence resulted from former President Levon Ter-Petrosian’s attempt to forcibly seize power in the wake of the February 2008 presidential election in which he was the main opposition candidate. Ter-Petrosian, who leads the HAK, and his associates insist that the authorities deliberately used lethal force to enforce the results of blatant vote rigging.

## Catherine Ashton visits Armenian Cathedral in New Julfa



TEHRAN — The EU High Representative for Foreign Affairs and Security Policy Catherine Ashton visited the Armenian Holy Savior Cathedral in New Julfa, Iran on March 10.

Ashton first paid a visit to 350-year old St. Joseph of Arimathea Church of the All Saviour's Cathedral, which is famous for its spectacular frescos. "Komitas" choir performed hymns conducted by Armen Amirkhanian. The EU High Representative and other members of her delegation listened to the hymns and watched the picturesque frescos of the church, which introduce the whole history of the Old and New Testaments, commandments of the Church, the passions of St. Gregory the Illuminator, as well as Paradise and Hell.

Primate of the Armenian Diocese of Isfahan, Bishop Papken Charian

expressed gratitude to the European Union for recognizing the Armenian Genocide and referred to the ECHR ruling on Armenian Genocide denial case.

He praised the constant support of the Iranian authorities to the maintenance of the Armenian Churches and cultural values, and reminded a few years ago neighboring Azerbaijan demolished the Armenian cross-stones in Old Julfa, which was a cultural genocide. The Primate voiced hope that the European Parliament will condemn the vandalism to prevent the reoccurrence of such genocides elsewhere in the future. Catherine Ashton assured she would pursue the protection of human rights.

At the end of the visit Ms. Ashton left a note in the memory book of the museum.

## Challandes: Armenia Has Great Chance of Advancing to Euro-2016 Finals

YEREVAN — The newly appointed head coach of the Armenian national football team Bernar Challandes believes that the Armenian squad has a great potential and could realize its dream to participate in Euro 2016. Challandes was chosen from among 49 coaches the Armenian Football Federation negotiated with.

"The Armenian squad will not win today but it could win tomorrow. I have studied all the games of the last season. The team has a great potential and could realize its dream", – said Challandes during an introductory press conference.

The new head coach said he was impressed by Armenia's performance against Italy in a FIFA World Cup qualification match. "I never thought I would head that team, and when the offer came, I didn't think long."

"I'm here to win," Challandes said. "I'm well aware what I have come here for. If I win, I stay, if I lose, I go. That's an unwritten rule whether here, in Switzerland or Brazil."



The 62-year-old has signed a two-year contract to lead the team during UEFA EURO 2016 qualification. Challandes started his coaching career in 1977 and was at the helm of FC Yverdon-Sport, BSC Young Boys and Servette FC among others before being recruited by the Swiss Football Association (SFV-ASF) in 1995. He took charge of the Switzerland Under-21 team in 2001 and led them to the semi-finals of the UEFA European U21 Championship in 2002.

He moved on to FC Zürich in 2007 and was named Switzerland's coach of

## Monastery of Bardzrakash St. Gregory Among 'Europe's Most Threatened Heritage'



YEREVAN -- The Monastery of Bardzrakash St. Gregory in Dsegh, Armenia is among the 11 monuments and sites shortlisted for 'The 7 Most Endangered' 2014 program of the leading European heritage organization Europa Nostra and the European Investment Bank

This monastic complex, dedicated to St. Gregory, the first official head of the Armenian Church, dates from the 10th to the 13th centuries. Situated in the cultural landscape of the village of Dsegh, deep in a verdant gorge, the stone structures of the main buildings lie in ruins, without roofs, and encroached on by vegetation.

The rehabilitation of the monument would help establish Dsegh as a centre for tourism and boost the local economy. However, it can only be accomplished with international expertise and support. The Ministry of Culture of the Republic of Armenia nominated the monument for 'The 7 Most Endangered' 2014.

This year, civil society organizations and public bodies from all over Europe submitted their nominations. Eleven sites were shortlisted by an international panel of specialists in History, Archaeology, Architecture, Con-

servation and Finance. The final list of 7 sites will be selected by the Board of Europa Nostra. 'The 7 Most Endangered' for 2014 will be unveiled at a press conference on 5 May at the House of Europe in Vienna by high-level representatives from Europa Nostra and the EIB Institute.

11 European sites shortlisted for 'The 7 Most Endangered' program. These sites are

- Monastery of Bardzrakash St. Gregory, Dsegh, Armenia;
- Stage Machinery of the Bourla Theatre, Antwerp, Belgium;
- Thracian Sanctuary in Mishkova niva area, Bulgaria;
- Historic neighborhoods of Dolcho and Apozari, Kastoria, Greece;
- Citadel of Alessandria, Italy;
- Roman Archaeological Site of Golemo Gradište, Konjuh, Former Yugoslav Republic of Macedonia;
- Paço de Vilar de Perdizes in Montalegre, Portugal;
- Carillons of the Mafra National Palace, Portugal;
- Wooden Churches in Southern Transylvania and Northern Oltenia, Romania;
- Color Row Settlement in Chernyakhovsk, Russia;
- Synagogue in Subotica, Serbia

## World Famous Dmitry Sitkovetsky to Perform with the State Youth Orchestra of Armenia

On March 13 the State Youth Orchestra of Armenia will perform with world famous violinist Dmitry Sitkovetsky. During the concert the audience will enjoy Violin Concerto by Johannes Brahms and Symphony No.6, "Pastorale" by Ludwig van Beethoven.

Sitkovetsky has performed as a soloist with many of the world's leading orchestras including the Berlin, New York, LA Philharmonic, Concertgebouw in Amsterdam. He has performed at a number of high-profile festivals. In 2003, Sitkovetsky was appointed Music Director of the Greensboro Symphony Orchestra.

"This is my first visit to Armenia and the first cooperation with the State Youth Orchestra of Armenia, and I'm

very glad about this. I have had concerts in more than 50 countries and have played with over 300 orchestras. I'm well aware of what's happening in the field of classical music. I can say that the youth orchestras are the most interesting and the most viable today," Dmitry Sitkovetsky told reporters in Yerevan.

"This country has an ancient and rich culture. I have had an opportunity to communicate and study with brilliant Armenian artists. I have performed works by Aram Khachaturian and a good of friend of mine, contemporary American Armenian composer Yakov Yakulov. Someone once called Yakov "a walking Holocaust," because his ancestors are Armenian, Jewish and Gypsy," the violinist said.

the year in 2009 after guiding them to a 12th championship. He followed that by claiming the Swiss Cup with FC Sion in 2011 before working at Neuchâtel Xamax FC and FC Thun.

Armenia were drawn in the UEFA

EURO 2016 qualifying Group I alongside Portugal, Denmark, Serbia and Albania. They begin their campaign in Denmark on 7 September with their first home game against Serbia to follow on 11 October.

## "Armenian Genocide Survivors and the Woven Art" Conference at CSUN

NORTHRIDGE, CA -- The Armenian Studies Program at California State University, Northridge (CSUN) will host a conference on the theme of Armenian Genocide Survivors and the Woven Art. The event will take place at the Oviatt Library conference room on Saturday, March 29, from 1:00-5:00 p.m. It is cosponsored by the Armenian Rugs Society and the United Armenian Council of Los Angeles.



This conference aims to illuminate the Armenian Genocide from the perspective of the woven art in its widest scope: rugs, embroideries, lace work, handkerchiefs, textiles, and so on. The artists were widows and orphans, survivors who from the massacres in the mid-1890s through the decades following World War I maintained their sanity and dignity by keeping busy with gainful occupations. In a sense, traumatized as they were, they mocked life's unfairness and cruelty by producing what was beautiful and ennobling. Their manufactured articles reached Europe, the United States and elsewhere. People purchased them out of humanitarianism, but by doing so they also enriched themselves with valueless artworks.

The following speakers will participate: Gevorg Nazaryan, "Armenian Weaving Centers in the Ottoman Empire on the Eve of the Genocide";

Harold Bedoukian, "Armenian Orphans and Orphanages: Their Contribution to the Carpet Weaving World"; Vahram Shemmassian, "The Industries at the Armenian Refugee Camp of Port Said, 1915-1919"; Hratch Kozibeykian, "The Revival of an Ancient People and Their Crafts in Post-World War I Aleppo, Syria"; Susan Lind-Sinianian, "Stitching to Survive: Handcrafts of Armenian Widows and Orphans, 1896-1930"; Bared Maronian, "The Newly-Discovered Hajin Orphan Rug." Dr. Hasmig Baran will introduce the speakers.

CSUN is located at 18111 Nordhoff Street, Northridge, California. The parking structure is B3 at Darby and Prairie streets (the information booth for parking tickets is on Prairie). For further information, contact vahram.shemmassian@csun.edu or (818) 677-3456.

## Young Activists Continue Protests

Continued from page 1

the protesters in his office. The crowd rejected the offer before throwing coins at the building and blocking the street. Police officers swiftly used force to unblock it.

The scuffles followed an attempted self-immolation by an elderly man who joined the demonstration. Nikolay Aghabekian, 67, poured gasoline over himself and tried to set himself on fire. Police officers were quick to stop him doing that.

Moments before the apparent suicide attempt Aghabekian urged the much younger people to keep up their campaign, brandishing his Soviet-era bank savings books. He said the life-long savings were wiped out by hyper-

inflation in the early 1990s.

Hundreds of thousands of other Armenians suffered similar financial losses at the time. The fate of those cash deposits is one of the main arguments of workers opposed to the reform. They say that they may similarly be unable to retrieve their pension savings after retirement.

Government officials counter that the two private pension funds chosen to handle their money are owned by renowned European asset management firms. One of them is a joint venture between Austria's C-QUADRAT Investment and Germany's Talanx Asset Management. The other, Amundi-ACBA, is a subsidiary of the French banks Credit Agricole and Societe Generale.

## Five Candidates Qualify

Continued from page 1

dated election could be held to fill the vacancy. The City Council voted to hold a Special Municipal Election consolidated with the State Primary which will be conducted by the County of Los Angeles.

"Although we will not be conducting this election, we will be working closely with the County of Los Angeles's Elections Division to provide as much information as possible to our city's residents," said Ardy

Kassakhian, City Clerk. "It will be a unique election in that most people are not accustomed to voting for city council in June, so we need everyone's help in getting the word out to participate."


The City of Glendale plans on updating its popular GlendaleVotes.org website with information about the election and the candidates vying for the open seat. The winner of the June election will have to participate in the April 2015 regularly scheduled biennial municipal election.

## Prof. James Russell to Speak on "An Armenian Eccentric: The Life and Times of Kara Darvish"

FRESNO -- Dr. James Russell, Mashtots Professor of Armenian Studies at Harvard University will speak on "An Armenian Eccentric: The Life and Times of Kara Darvish" at 7:30 PM on Thursday, March 20, 2014, in the University Business Center, Alice Peters Auditorium, Room 191, on the Fresno State campus.

The lecture is part of the Armenian Studies Program Spring Lecture Series and is co-sponsored by the Armenian Students Organization at Fresno State and the National Association for Armenian Studies and Research. The Spring Lecture Series is funded through the Leon S. Peters Foundation.

Kara Darvish (Hakob Genjian) was an Armenian Futurist poet who lived and worked mainly in Tiflis, Georgia, before and after World War I. He wrote several novels and manifestoes, but is best known for the "postcard" poems he distributed at cafés and outside cinemas which proclaim his cosmopolitan and revolutionary credo and experiment with odd typefaces and experiment with incantatory nonsense words in Armenian, dipping also into the Armenian mythological past. (His Russian Futurist colleagues named this technique zaum', i.e., transrational language.) Among his friends and associates were the poets Osip Mandelstam and Yeghishe Charents; and Kostan Zarian evokes the poet and his turbulent surroundings in



the novel Nave Ieran vra ("The Ship upon the Mountain").

Dr. James R. Russell is the Mashtots Professor of Armenian Studies in the Department of Near Eastern Languages and Civilizations at Harvard University. Professor Russell has authored over one hundred scholarly articles, many of which have been collected in his Armenian and Iranian Studies (2004). He is most recently the author of a study on and translation of the collected poems of Bedros Tourian entitled Bosphorus Nights (2006).

The lecture is free and open to the public. Free parking will be available, using a parking code, in Lots P5 and P6 adjacent to the UBC the night of the lecture. For more information on the lecture please contact the Armenian Studies Program at 278-2669.

## Enrollment Approaching for Armenian Virtual College Spring Term

Spring registration for AGBU's Armenian Virtual College (AVC) will begin on March 14, 2014. The free AVC chess course is back by popular demand for the third consecutive term, in addition to AVC's for-credit classes in Armenian language, history and culture.

The AVC chess course was met with widespread praise when it first launched in the fall, most notably from Armenia's President Serzh Sarkisian. President Sarkisian and his delegation visited the AVC booth at the annual Digitec Expo, which draws thousands of individuals and international businesses to Yerevan. There, AVC founder and ABGU Central Board member Dr. Yervant Zorian demonstrated the chess program's user-friendly features, including exercises, puzzles and quizzes—the product of an ongoing partnership with the Armenian Chess Federation. The state delegation welcomed the course as a way to further promote chess in public schools, keeping in line with the Ministry of Education's mis-

sion.

Dr. Zorian, who saw the program's enrollment increase after its pilot semester, remarked on its quality: "We are pleased that the AVC chess course was so well-received in the fall and winter terms. Through events such as the Digitec Expo, and our growing community of online subscribers, we've shown that AVC is truly at the forefront of the e-learning movement. We look forward to continuing to expand our reach, and connecting with even more chess talents, in the spring."

The AVC spring term will run from April 21 – June 24, 2014. To register for the AVC chess course and other AVC classes, email enrollment@avc-agbu.org. Or, visit the AVC portal at www.avc-agbu.org to create your login and submit your enrollment application.

The chess course is offered free of charge. Standard rates apply for all other AVC courses.

## Switzerland Appeals ECHR Ruling

Continued from page 1

promotes racism and violence against Armenians in Turkey and elsewhere. The statement further argued that the Swiss government has a moral responsibility to appeal this ruling and defend its laws against racism.

Le Temps (Geneva), in covering this story, wrote, "Armenian associa-

tions in Switzerland are highly mobilized in collaboration with The International Institute for Genocide and Human Rights Studies, which took a full-page advertisement in newspapers, including "Le Temps." A petition that has more than 10,000 signatures was also sent to the Minister of Justice and Police, Simonetta Sommaruga, for Switzerland to appeal."

### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

15 դարեր առաջ Հայ միտքն ու հոգին ընդդիմացաւ թշնամիի հրահանգին, պայքարեցաւ եւ կռուեցաւ՝ պարտադրելու համար իր կամքը, դէմ դնելով պարսիկ հսկայ զօրքին, գիտակից մահով անմահացաւ՝ բոլորին տալով օրինակը կամքի ազատութեան անգիջելիութեան:

Այս է պատճառը, որ հազար հինգհարիւր եւ աւելի տարիներէ ի վեր կը տօնենք եւ կը կազմակերպենք, Վարդանանց հերոսներու չի-

Հինգշաբթի, Փետրուար 28, 2014ի առաւօտեան երկրորդ դասարանի աշակերտները զարդարուած դիմակներով, առաջնորդութեամբ իրենց ուսուցչուհի՝ Մարի Թիւթեյեանի, ներկայացուցին Բարեկենդանը, կարդացին անոր իմաստը եւ անոր առնչուած հայկական սովորոյթը, որուն համար դպրոցի բոլոր կարգերը նախօրօք պատրաստած էին զանազան տեսակի դիմակներ եւ սորված բարեկենդա-



շատակին նուիրուած հանդիսութիւններ, որպէսզի Աւարայրի նահատակներու ճամբով մեզի հասած պատգամը՝ կամքի ազատութեան անխափանելիութիւնը, փոխանցենք սերունդէ սերունդ, տալով անոնց կամքի աննկունութեան օրինակը, կրօնական եւ ազգային սկզբունքներուն կառչած մնալով՝ պահելու մեր ազգային ինքնուրոյն դիմագիծը:

Այս նախանձախնդրութենէ մղուած՝ Հայ Քոյրերու Վարժարանը այս տարի եւս մեծ շուքով տօնեց Վարդանի եւ Ընկերներու մղած կրօնքի պատերազմին յիշատակը:

Ամբողջ ամիս մը աշակերտները սորվեցան Վարդանանց քաջերու մասին, հայոց պատմութեան դասերը յատկացուեցան հինգերորդ

նի, աւանդական երգերուն ու սովորութիւններուն մասին:

Նոյն առաւօտեան ժամին տեղի ունեցաւ աշակերտական Սուրբ Պատարագ եւ Վարդանանց ճակատամարտի նահատակներուն յիշատակին հոգեհանգիստ: Օրուան պատարագին էր Կլէնտէյլի կաթողիկէ Ս.Գրիգոր Լուսաւորիչ Աթոռանիստ եկեղեցու ժողովրդապետ՝ Հայր Անտոն Նորատունկեանը, որ Վարդանանցի խորհուրդը նշեց իր քարոզին մէջ եւ շեշտեց, որ հայ ժողովուրդը իր հաւատքին համար զոհուեցաւ տալով առաջին օրինակը, անոր հետեւեցան հայոց պատմութեան ընթացքին յաջորդող Սերունդներու նահատակութիւնը ի սէր կրօնքի ու հայրենիքի, ինչպէս՝ 1915ի մեծ եղեռնի նահատակները եւ տուած օրինակ-



դարու Հայաստանի իրավիճակին եւ քաղաքական կացութեան, իսկ հայերէն դասերուն՝ անոնք սորվեցան Վարդանանց պատերազմի նուիրուած դասական գրականութենէն ընտրանիներ, որոնք բոլորը ներկայացուեցան Վարդանանց տօնակատարութեան օրը, հանդիսաւոր կերպով, վարժարանիս «Դանիէլեան» սրահին մէջ ներկայութեամբ՝ աշակերտութեան, ծնողներու, ուսուցչական կազմին եւ հիւրերու. օրուայ հանդիսութեան գլխաւոր ներկայացումը եղաւ թատրոնը՝ խաղարկութեամբ երրորդ դասարանի աշակերտներուն եւ պատրաստութեամբ ուսուցչուհի Մարօ Գուլումճեանին:

ներով հասաւ մինչեւ մեր օրերուն Սուրբիոյ մէջ հաւատքի համար նահատակուող Քրիստոնեայ եւ հայ մեր եղբայրներուն: Պատարագի ընթացքին Սուրբ խորանին կը ծառայէին ութերորդ դասարանի աշակերտները, նաեւ Վարդանանց քաջերու յիշատակին եղած աղօթքներն ու ընթերցուածները ստանձնած էին ութերորդ դասարանի աշակերտ աշակերտուհիները:

Նոյն օրուան յետմիջօրէն տեղի ունեցաւ պաշտօնական հանդիսութիւն նուիրուած Վարդանանց ճակատամարտին: Օրուան հանդիսավարն էր ուսուցչուհի Մարօ

Շաբ.ը էջ 19

### ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՄԼԵԱՆ ԹԱԹԻԿԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ 80 ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ



80 տարիներ, աննախընթաց յաջողութիւններ, անհաւատալի իրադարձութիւններ, քաղաքացիական պատերազմ, տարբեր մարտահրաւէրներ, վերելագրումներ...

Եւ տակաւին կանգուն կը մնայ մեր սիրելի վարժարանը եւ կանգուն մնալու համար ներկայիս մեր վարժարանը աւելիով կարիք ունի օժանդակութեան:

Հայ Աւետարանական Շամլեան Թաթիկեան Երկրորդական Վարժարանի Շրջանաւարտից Միութեան անդամներս սրտի գոհունակութեամբ եւ ուրախութեամբ կը յայտնենք, որ կազմակերպած ենք 80 ամեակի ճաշկերոյթ-պարահանդէս մը, որ տեղի պիտի ունենայ Մարտ 29ին Կլէնտէյլի Phoenicia Restaurant Banquet Hall-ին մէջ Հալլին մէջ ժամը 8:00ին: Կը փափաքինք, որ մեր վարժարանի լոս անձելըսաբնակ շրջանաւարտները ներկայ գտնուին սոյն հաւաքին եւ ճոխացնեն զայն, միանալով եւ փառաւոր կերպով տօնելով մեր վարժարանի այս անկրկնադարձը:

Սոյն հանդիսութեան համար Քալիֆորնիա պիտի ժամանէ վարժարանին տնօրէնուհին՝ Օրիորդ Վարդուկ Պալըքճեանը եւ պիտի փոխանցէ դպրոցին մասին վերջին տեղեկութիւնները եւ անոր դիմագրուած դժուարութիւնները, պիտի ցուցադրէ մեզի համար պատրաստուած տեսաներիզը, ծանօթացնելով մեզի մեր սաներուն աւօրեայ կեանքը եւ յստակացնելու դպրոցին դիմագրուած մարտահրաւէրները:

Երախտապարտօքն ներկայ գտնուինք սոյն հաւաքին, ուր առիթը պիտի ընծայուի վերջիշելու մեր աշակերտական տարիները, որոնց ընթացքին ստացած ենք մեր հոգեմտաւոր կրթութիւնը եւ թրծուած՝ իբրեւ հայ քրիստոնեայ անհատներ:

Մեր փափաքն է որ առնուազն ձեր ներկայութեամբ նեցուկ կանգնիք մեր վարժարանին:

Հայ Աւետարանական Շամլեան Թաթիկեան Երկրորդական Վարժարանի Շրջանաւարտից Միութիւն Լոս Անճելըս

### ՊԱՐԳԵԿԱՏՐՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան նախագահ՝ Բակօ Սահակեանը Նոյեմբերի 6, 2013-ին հրամանագրով՝ «Երախտագիտութեան» մետալով է պարգևատրել ազգային-հասարակական գործիչ, բարերար, իրանահայ Միութեան անդամ՝ Վարուժան Կիւրեղեանին Արցախում բարեգործական բազմաթիւ ծրագրերի իրականացման համար:

Նշելի է որ Վարուժան Կիւրեղեանը Հայաստանի անկախացումից եւ Արցախի ազատագրումից յետոյ նուիրուել է հայրենիքին եւ հայրենաբնակ ժողովրդին նիւթապէս եւ բարոյապէս օգտակար լինելու նուիրական աշխատանքներին:

Գնահատանքի մետալի յանձնման արարողութիւնը տեղի է ունեցել սոյն տարուայ Փետրուարի 13-ին, Ղարաբաղի նախագահական պալատում, իսկ երեկոյեան մեծարման հանդիսութիւն-ընթրիք է կազմակերպուել, որին ներկայ են եղել Արցախի Արտաքին գործերի նախարարը եւ մի շարք այլ բարձրատիճան պաշտօնեաներ: Ապա Փետրուարի 26-ին, նոյն առիթով Թեհրանի իրանահայ Ազգային Մշակութային միութեան կենտրոնում կազմակերպուել է մեծարման երեկոյ նուիրուած նոյն միութեան հիմնադիրներից՝ Վարուժան Կիւրեղեանին իր պարգևատրման առիթով:

Ն.Բ.

### ԵՐԿՐՈՐԴ ԾՆՈՂՆԵՐԸ Ի ՊԱՏՈՒԾ

Շաբունակուած էջ 8-էն

յիշատակ կրած, փոքրիկ կայծ մը ստացած, սէր ու զգուանք վայելած, գիտելիք եւ ոգի ըմբռնած:

Հո՛ս է միակ եւ անչափելի հոգեկան գոհունակութիւնն ու բաւարարութիւնը. մա՛րդ կերտած ըլլալու անկողողպտելի բերկրանքը:

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
 SERVING BATON ROUGE SINCE 1979

# ԺԻՐԱՅՐ ԹՈՐԻԿԵԱՆԻ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՍԿԶԲԱՏՈՂԵՐՈՒ ՑՈՒՑԱԿ ԳՐՔԻՆ ՅՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԹԻ

**ԳՐԻԳՈՐ ՓԻՏԵՃՅԱՆ**  
(Երևանի Կոմիտասի Անուան  
Պետական Կոնսերվատորիայի)  
Պատուոյ Փրոֆէսոր  
(Շարունակումնախորթ թիւէն)

1915-ի հրէշտանի ցեղասպանութեան պատճառով Արեւմտահայաստանի եւ ժողովուրդին կորուստովը, ապա Արեւելահայաստանը ինչպէս ճանաչողական անաստուած վարչակարգի ցանցին մէջ, հոն եւս անհնարին դառնալով հոգեւոր երաժշտութեամբ զբաղելը շարականագիտութիւնը անյատարացաւ հայ երաժշտական մշակութիւն, մինչեւ այն դժուարին տարիները, 1950-ականները, երբ շնորհիւ-ես կը կոչեմ ազգային մշակութի հերոսներ... մեծ երաժշտագետներ Քրիստափոր Քուշնարեանի, Ռոբերթ Աթաջեանի եւ Նիկողոս Թահմիզեանի բոլորանուէր ճիգերուն, տաղանդներուն ու աշխատանքներուն հայ երաժշտական մշակութիւնն անոր մարմին առաւ ու հաստատուեցաւ միջնադարագիտութիւնն ու կէսդարեայ իր կեանքով այսօր կը տեսնենք թէ՛ անոր քան մեծ ճամբայ կտրած է, երաժշտագիտական հարուստ գրականութիւն մը մէջտեղ բերած է եւ շատերուն՝ նորերուն, ինչպէս միջնադարագետներ Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի փրոֆէսոր՝ Դոկտ. Աննա Արեւշատեան, փոխ ունկտոր՝ դոցենտ Մհեր Նաւոյեան, հրատարակչական բաժնի տեսուչ՝ Ն. Թահմիզեանի, ուսանողուհի՝ երաժշտագիտուհի Գոհար Շապուգեան, Լուսինէ Սահակեան եւ ուրիշներ, իրենց մտաւեճերուն մէջ անոր վրայ հրաւիրելով, անոնք ալ իրենց արժէքաւոր աշխատանքներով մեծ լոյս սփռած են եւ կը սփռեն այլապէս մութին մէջ մնացած մեր հոգեւոր ու ազգային երաժշտական արժէքներուն եւ գանձերուն վրայ, ներառեալ շարականները:

Յիրաւի ուրախալի երեւոյթ էր, որ Հայաստանի մէջ 301 թուին քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման եւ Ս. Էջմիածնայ Տաճարին օծման (303 թ.) 1700 ամեակներուն ստղծած խանդավառութիւնն ու ոգեւորութիւնը հոգեւոր վերագարթնութիւնի առիթ հանդիսացաւ հայ ժողովուրդին համար: Գրուեցան եւ հրատարակուեան ուսումնասիրութիւններ ու աշխատանքներ Հայց. Եկեղեցւոյ շարունակ ժառանգութեան մասին, յօրինուեցան երաժշտական գործեր՝ պարզ երգերէ մինչեւ օրաթորիներ, մշակուեցան եւ գործիքաւորուեցան շարականներ, եւայլն: Մեր ներկայացուցած նիւթը հանդիսացող Շարականի բնագաւառէն ներս, այլ նիւթերուն շարքին, Գալիֆորնիոյ մէջ ներկայացուեցաւ Եփրեմ Արք. Թապաբեանի գրաբարէն աշխարհաբարի վերծանած լման Շարականը, տիտանական աշխատանքը, որուն երրորդ սպազորութիւնը կը հրատարակուէր շարականներու որպէս անուն սկզբնատողերու այբենական ամբողջական ցանկագրութեամբ մը: Յետոյ երկու հատորներով, կրկին Գալիֆորնիոյ մէջ, հրատարակուեցան Գէորգ Սրկ. Փանոյեանի ցանկագրական աշխատանքները՝ իմբատուրով շարականներու ըստ եղանակներու եւ հեղինակներու: Մնալով այս բնագաւառէն ներս, յոյժ

օգտակար աշխատանք է նաեւ Գանատարանի Պրն. Յարութիւն Փալանճեանի պատրաստած եւ հրատարակած «Շարականի Բնագրին Բառացանկ, Word-Index To The Armenian (Sharakan)» գիրքը, ուր այբբենական կարգով կը ներկայացուին Շարականի բովանդակած բոլոր բառերը իրենց գործածուած էջաթիւերով:

Իսկ այսօր ալ, ահաւասիկ Ֆրանսաբնակ Պրն. Ժիրայր Թորիկեան ընթերցողին եւ յատկապէս շարականագիտութեամբ զբաղողի սեղանին կը բերէ նոր ու այլ բնոյթի ցանկագրական աշխատասիրութիւն մը, գոր այս գրութեամբս կը ներկայացնեմ զայն հանրութեան:

Պրն. Ժիրայր Թորիկեանի հարուստ բովանդակութեամբ եւ պերճ ու որակաւոր կազմով գիրքը կը բացուի եւս յետոյ հետեւեալ յայտարարութեամբ.

«Այս հատորին հրատարակութիւնը կարելի դարձաւ շնորհիւ Տոլորէս Զոհրապ Լիպման հիմնադրամին առատաձեռն օժանդակութեան»:

Ապա, գործին սատարողներուն ուղղուած շնորհակալական էջէն յետոյ կը գտնենք հայագետ Ֆրանսացի Հայր Շ. Ռընտի գնահատագիրը, որմէ ետք պրն. Թորիկեանի խնդրանքով Միխիթարեան Ուիտէն հեղինակութիւն եղող գիտնական՝ Հայր Լեւոն Զէքիեան գրած է արժէքաւոր «Նախաբան» մը վերաբերյալ կատարուած աշխատանքին՝ վերլուծական ցանկագրութեան արժէքը որպէս առաջնորդող գործիք, եւ յոյս յայտնած, որ այս հրատարակութիւնը «առիթ կ'ընձեռնէ՝ նաեւ այս եւ նման ուղղութիւններով մշակուած նոր հետազոտութիւնները»: Յետոյ խօսելով շարականագրութեան պատմական ծագման ու զարգացման, անոնց բանաստեղծական, գեղագիտական եւ բարձրարուեստ արժէքներու մասին խօսքը կ'աւարտէ ըսելով.

«Քանի որ շարականները «հրատառ մատեան»ն են մեր հայրերուն հաւատքին, ինչպէս կը բնորոշէր գանոնք իր «Շարական» քերթուածին մէջ Միխիթարեան հոգեւոր միաբան Չ. Վահան Յովհաննէսեանը: Պիտի ուզէի այս սողերը փակել այդ քերթուածին խօսքերով՝

«Հրատառ մատեան իմ հայրերուս հաւատքին, երկաքաղիք շարական, Որքան քաղցր է հիմ երգերուդ մեղեդիին, Լուսահառաջ, ողբական»:

Մերք փրփրած, արցունքներու ալիքով, Կը փոքորկիս, կը ցածնաս, Ու խորքիդ մէջ ազգ մ'իր ամբողջ յոյսերով կ'ալիկոճուի համապագա»:

Յաջորդ չորս էջերով գրքին յարգելի հեղինակը՝ Պրն. Ժիրայր Թորիկեան կը պատմէ թէ՛ ինչպէս սկսաւ այս գործը, ինչպէս կազմեց զայն եւ թէ՛ նպատակներէ մին էր եղած, ինչպէս ինք կը գրէ. «Այս աշխատութիւնը գիտաշխատողին հնարաւորութիւն կ'ընձեռնէ վեներտիկի (1907) եւ Երուսաղէմի (1936) - Անթիլիասի (1997) Շարականացնելուն մէջ ընդգրկուած որեւէ տուն գտնելու եւ դիւրութեամբ ճշգրտուանոր միակ թէ՛ բազմակի գործա-

ծութիւնը: «Յետոյ, խօսելէ ետք գիրքը կազմելու մեթոտաբանութեան մասին, ընթերցողին իրազեկ կը դարձնէ թէ՛ վեներտիկի (1907 թ) Շարականի կանոններուն եւ տօներուն խորագիրներուն ֆրանսերէն թարգմանութիւնները կատարուած են Հայր Ռընտի եւ Պեռնար Իթիֆի կողմէ, իսկ Անգլերէնները՝ շարականագետ եւ ծիսագետ Ժիրայր Մ. Վրդ. Թաշճեանի (Երուսաղէմի միաբան) եւ յայտնի հայագետ փրոֆ. Փիթըր Քաուրի կողմէ եւ կ'աւարտէ իր խօսքը հետեւեալ փափաքով. «Ամենամեծ ցանկութիւնս այն է, որ այս աշխատութիւնը օգտակար դառնայ բոլոր անոնց, որոնք կը փափաքին աւելի լաւ հասկնալ կառուցը հայկական Շարականին, եւ, անդին, այն շարականացներուն, որոնցմէ ներշնչուած կրնար ըլլալ ան, կամ որոնք կրնային ներշնչուած ըլլալ իրմէ»:

Հուսկ ցանկագրուած աշխատանքը հեշտութեամբ հասկնալու համար հինգ էջերով պատրաստուած են յատուկ կրճատմաներու, գործածուած գոյներու, տարագներու եզրերու, բանալիներու երկար ցանկ մը, որմէ յետոյ այլեւս կու գայ աշխատանքին բուն մարմինը:

Պրն. Ժիրայր Թորիկեան ցուցակագրական իր թեմայի շրջածիրին եւ սահմաններուն մէջ մնալով մանրագնիին կերպով եւ խզմտօրէն կատարած երկար տարիներու աշխատանքով, բաղդատական ցանկագրութեամբ ընթերցողին կը ծանօթացնէ երկու եկեղեցիներուն՝ վեներտիկի (Միխիթարեան Միաբանութեան) եւ Երուսաղէմի ու Անթիլիասի (Հայց. Առաքելական Եկեղեցւոյ) կողմէ հրատարակուած եւ գործածուած շարականներուն միջեւ եղած եւ նմանութիւններու եւ տարբերութիւններու մասին, որով շարականներու ուսումնասիրութեամբ հետաքրքրուողներուն համար այս գիրքը կը դառնայ մեծապէս օգտակար:

Պրն. Թորիկեան բացատրելէ յետոյ այս աշխատանքին բերած օգուտը Շարականացներու բաղդատականով ծանօթանալու անոնց ներքին կառուցին, կանոններուն եւ տօներու հերթականութեանը, Շարականի մէջ գտնուած անոր տեղին եւ Շարականացները իրարմէ տարբերող յատկանիշներուն մասին, գիտաշխատողներու ուշադրութեան, որպէս ուսումնասիրութեան առարկայ, կը բերէ Երուսաղէմ-Անթիլիաս Շարականացներուն մէջ գոյութիւնը «Տրդատայ Թագաւորին Շարականը» շարականին որ վեներտիկի Շարականի մէջ գոյութիւն չունի: Յիրաւի, ահաւասիկ հետաքրքրական նիւթ մը, թէ ինչո՞ւ այս տարբերութիւնը:


Այժմ, կ'ուզեմ հետեւեալ երեք կէտերուն մասին խօսիլ:

1. Պրն. Թորիկեան շարականները տեսակաւորելու համար հաստատած է սիւնակներու դրութիւն մը, որոնցմէ մին կոչած է «տուն» երկու սիւնակ ցոյց տալու համար իրենց տեղը շարականներու շարքին վրայ: Այստեղ «տուն» եզրը գործածուած է որպէս բանաստեղծութեան տուն, բնագրային տուն: Սակայն, այս գործին մէջ այս կերպ մօտեցումը շարականներուն, շատ լաւ գաղափար ըլլալով հանդերձ ամբողջական չի կրնար ըլլալ առանց կողքին աւելցնելու «Պատկեր»-ներու յատուկ սիւնակ մը: Բացատրեմ թէ ինչո՞ւ:

Շարականագրութեան մէջ քիչ անգամներ հեղինակները իրենց մտքերը, գաղափարները կամ նիւ-

թերը արտայայտած են առանձին տուններով: Հիմնականին մէջ, սկզբնական շրջանին, շարականները պէտք է երեք տուններով գրուէին, երեք որպէս «Ս. Երրորդութիւն»-ի խորհրդանիշ ու երեք տուններն ալ պէտք է երգուէին մէկ եղանակով, առաջին տան եղանակով, մէկը որպէս «Մի Աստուածութիւն»-ի խորհրդանիշ, թէեւ շուտով խախտեցաւ երեք տուններով յօրինելու այս օրէնքը, սակայն ստով հանդերձ, դարերու ընթացքին, նոր տեսակի կառուցային ոճերու կողքին միշտ մնաց եւ շարունակուեցան եռատուն ոճը: Բայց տունները մէկ եղանակով երգելու ոճը մնաց անփոփոխ:

Ուրեմն, շարականներուն տունները առանձին ու ամբողջական միաւորներ չեն. պատկերներն են միաւորները: Ըստաւոր աւելի դիւրութեամբ հասկնալու համար բերեմ Ս. Աստուածածանայ վերափոխման կանոնի մէկ պատկերէ բաղդացած «Տէր Յերկնից» եռատուն շարականը, որ նուիրուած է Ս. Երրորդութեան.



Եթէ նկատեցիք, շարականին իւրաքանչիւր տունը նուիրուած է Ս. Երրորդութեան մէկ անդամին. այսպէս իւրաքանչիւր տան վերջին նախագասութիւններուն նայելով կը կարդանք.-

Ա. տուն - «Օրհնեալ ես Հայր անսկիզբն Աստուած»:

Բ. տուն - «Օրհնեալ ես Որդի միածին Աստուած»:

Գ. տուն - «Օրհնեալ ես Հոգիդ ձգմարիտ Աստուած»:

Ինչպէս կը տեսնէք, իւրաքանչիւր տուն մէկ մասնիկն է ընդհանուր, ամբողջական գաղափարին նուիրուած Ս. Երրորդութեան: Հետեւաբար, գաղափարական միաւորը տունը չէ, այլ՝ պատկերը: Ի բաց առեալ այբբենական կարգով «ակրոստիկոսով» յօրինուած «անձինք» կոչուած շարականներէն (Անձինք կոչուած են, որոնք յօրինուած են հետեւողութեամբ Դրդ դարու մեծ իմաստասէր ու երաժիշտ կաթողիկոս՝ Կոմիտաս Աղցեցիի Հուսիսիմեանց եւ Գայանեանց կոյսերուն նուիրուած շարականին, գրուած իւրաքանչիւր շարականին - ոտքերու կառուցուած քային ոճով: Այս գործը ոչ միայն շարականագիտութեան մէջ դարձաւ չափանմուշ, այլ՝ հիմքը հանդիսացաւ հայ բանաստեղծութեան: Նաեւ բացի այն շարականներէն, որոնց տուններուն սկզբնատուները կապուած են անուններու, ինչպէս Ս. Ներսէս Շնորհալիի յօրինած Սրբոց Վարդանանց նուիրուած «Նորահրաշ պատկաւոր» տասը տուններէն բաղկացած ռազմաշունչ շարականը, որուն իւրաքանչիւր տան սկզբնա-

### ՉՈՒՋԵՑԻ ԿՈՒԼ ԳՆԱԼ ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԻՆ...

#### Ռ. ԿՈՐԻԻՆ

Ջարմանալի հայեր կան՝  
 Հայրենասերից հայրենասերը:  
 Ազգասերից ազգասերը:  
 Գիտնականից գիտնականը:  
 Քաջերից քաջը:  
 Հերոսներից հերոսը:  
 Կուռղներից կուռղը:  
 Ժողովրդասերից ժողովրդասերը:  
 Նուիրեալից նուիրեալը:  
 Հաւատարիմից հաւատարիմը:  
 Վանառականից վանառականը:

Օտարից էլ օտարականը եւ այլ բնորոշումներ, բայց այս մէկի մասին որ գրում եմ, ինձ համար նորութիւն է, չիմացայ ինչ մակերևորով կոչել նրան, թողնում եմ ընթացողն որոշի, հաւանաբար՝ անգէտից անգէտը: Նրան հանդիպեցի Լոս Անջելէսեան քաղաքում հանրակառքի կանգառում:

Գարնան մտալուտ օր է, առաւօտեան ոչ կանուխ, արեւաշող երկինք, ոչ էլ այնքան ցուրտ, քայլում եմ դէպի հանրակառքի կանգառը, տեսնում է միայն մէկ հոգի այնտեղ կանգնած, մտնում եմ սեւեռուներով նրա դէմքին, հասկացայ, որ հայ է, արդէն իսկ հայը հեռուից մատնում է իր ինքնութիւնը: Երիտասարդ չէր, հաւանաբար եօթանասունը անց հայ մարդ: Բարի լոյս ասելով սպասեցի պատասխանի, բայց ինչ պատասխան, շրթունքների տակ հազիւ շնչաց ակամայ ասելով.

-Բարի լուս:  
 Ճիշտն ասաց չհաւանեցի ժանգոտած երկաթի ձայնի պէս «Բարի լուս»ը, սակայն չհրաժարուեցի հետը գրոյց անելուց, «Բարի լուս» արտայայտութիւնից կուսհեցի մեր սիրելի հայաստանցիներից է:

-Հայաստանցի եղբայր կարող ես ասել, թէ ինչո՞ւ էք հայաստանից արտագաղթել այս օտար ափերը:

Սպասում էի, ինչպէս բոլոր արտագաղթողները, սա եւս արդարանայ ասելով՝ դժուարութիւնների եւ գոյապրուստի պատճառով, սակայն այս մէկը տարօրինակօրէն բացատրուեց:

-Չուզեցի կուլ գնալ բարբարոսներին:

Ողջ կեանքումս այսպիսի բառակապակցութեամբ խօսք չէի լսել, յանկարծակիի գալով ուշադրութիւնս լարուեց թէ.

-Չհասկացայ, ո՞ւմ էք ակնարկում:

-Մեր հարեւան թուրքերին:  
 Նրա այս խօսքի վրայ աւելի շատ լարուեցի եւ անյապաղ հարց տուի.

-Ինչպէս թէ թուրքերին:

-Թուրքերը Հայաստանը կը գրաւեն եւ եղած հայերին իրենց կարողացածին չափ կը կոտորեն եւ մնացածին էլ կրօնափոխ անելով կը ձուլեն իրենց մէջ: Լքեցի Հայաստանը, որ չձուլուեմ նրանց մէջ, եկայ էստեղ, որ ձուլուեմ քաղաքակիրթ ժողովրդի մէջ:

Շճեցուցի պատասխան, չէի հաւատում ականջներինս, հայից այս-

պիսի անտեղեակութեան եւ յուսահատական խօսք, փոթորիկ անցաւ միջովս, հայեացքս կոպտացաւ, խէթ նայելով իրեն ասացի:

-Եթէ քեզ նման որոշ քանակով հայեր ունենանք, իսկապէս հայ ժողովրդի վերջը եկած կը լինի, բարեբախտաբար դու մէկն ես եւ մէկն էլ կը մնաս: Ո՞վ իր ազգութիւնը եւ հաւատքը ուրանայ, ոչ թէ իր ժողովրդին, այլ՝ այլոց մօտ նոյնպէս անարգ մէկը կը նկատուի:

-Առաջինը չես, որ այսպէս խստօրէն հակադարձում ես ինձ, այսպէս որ առաջ գնանք այդ օրին էլ կը հասնենք:

Հէնց այդ խօսակցութեան թէժ պահին հանրակառքը եկաւ, պղտորուած արիւնով բարկ հանրակառք բարձրացայ: Չէի հանդարտուում, էութիւնս արեւոտում էր, խոր ցաւ էի գգում, որ հայութեան մէջ այսպիսի մտածող է գտնուում: Ճիշտ է, հայութեան կեանքի ճամբան տատակոտ է եղել, դարեր շարունակ օտարների տիրապետութեան տակ կեղեքուել, թալանուել, տանջուել ու տառապել են մեր պապերը, հեռու յուսահատութեան եւ թուլամորթութեան մտքերից աշխատասիրութեամբ կեանք են ապրել սիրագործութիւններով լի սպասելով այն յուսալի օրուան, որ իրենք եւս շնորհիւ քաջ եւ կորովի զաւակների արժանի կը դառնան ազատ եւ անկախ հայրենիքի, բարօր եւ խաղաղ կեանքի: Հայրենիքն ազատ է, Արցախն ազատ է՝ հերոս ազատամարտիկների գէնքի ուժով: Անկասկած կը գայ այն օրն էլ, որ կը տեսնենք Արարատն էլ ազատագրուած, աշխարհում ոչ մէկ անկարելի բան չկայ:

Թող որեւէ հայ մտահոգութեամբ չտարուի, որ Հայաստանը կուլ կը գնայ, քանի որ հանապազ հայ ժողովուրդը ամբողջութեամբ եւ միասնական պաշտպանելու է թէ՛ Հայաստանը եւ թէ՛ Արցախը ու ամէն տեսակ ոտնձգութիւն յետ է մղելու թշնամուն տալով մեծ կորուստներ:

Պէտք է ճշմարտութիւնը շատել, այո՛, հայրենիքում դժուարութիւններ կան, որոնք առաջացել են երկրաշարժի, պատերազմի, շրջապատման, փախստական արդէտեալների եւ մի շարք իշխանաւորների աններելի սխալների հետեւանքով: Այսօրուայ դրութեամբ ուրտեղ դժուարութիւններ չկան, տեսէ՛ք, Սուրբոյ ժողովուրդը ինչ տառապանքի մէջ է, սիրիահայութիւնն էլ այդ ժողովրդի մէկ մասնիկը համբերատարութեամբ դիմանում է յոյս ունենալով վաղուայ խաղաղ եւ ապահով կեանքի:

«Յոյս ոչ ամաչեցուցանէ», սակայն ոչ միայն յոյսին ապաւինելով, այլ՝ Սփիւռք ու Հայաստան մէկ խորհուրդ ու միասնական յանուն հայրենի պետականութեան անսասանութեան, բանակի հզօրացման, ժողովրդի բարօրութեան, ազգային ռազմավարութեան անսակարկ տնօրինման եւ հայ մշակութի նկատմամբ պետական նախանձախնդիր քաղաքականութեամբ իրականացնելու են պահանջատիրութիւնը՝ մեր նահատակների տեսլականները:

### ԿԱՐԴԱԼՈՎ ԽԱԼԻԼ ԺԵՊՐԱՆԸ

#### ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Կարդալով Խալիլ Ժըպրանը հետեւեալ ասոյթները քաղած եղայ: Ահա այդ փունջը ձեզի կը նուիրեմ սիրելի ընթերցողներ, ճաշակեցէ՛ք, զի քաղցր է, զի հանճարէ կուգայ.-

1. Կրնա՞ք բու մը երգել տալ երբ ան միայն կունչալ գիտէ:
2. Գաճաճը բարձրահասակի ձեւեր կ'առնէ:
3. Հաւը թեւեր ունենալուն թռչիլ կը փորձէ:
4. Մացառը կնձնի ծառին կը նախանձի:
5. Խրտուիլակը ինքզինք դրօշակ կը կարծէ:
6. Մարդն ալ որոգայթ կը լարէ թռչուններուն դէմ:
7. Գետերը ծով կը փնտռեն:
8. Մէկը սուրը կը պաշտէ, ուրիշ մը խաղաղութիւնը:
9. Խլուրդներու պեղած ճամբան ձեզ տեղ չի հասցներ:
10. Խուլին խրատ տալը ջուրին վրայ գիծ քաշել կը նշանակէ:
11. Մայրի ծառը մեռած ալ ըլլայ, իր բոյրը կը տարածէ:
12. Թռչունը ցորենի արտէն երբ երկու հատիկ կտցէ, երրորդը հողին կը թողու:
13. Պանդուկը մէկ հոգիի համար չէ, տեղ կուտայ բոլոր, բոլորին:
14. Եթէ անձրեւես, հողը պարտացուր:
15. Կեանքը երեւակայելու փոխարէն, ապրէ՛ կեանքը:
16. Հոռմը այնքան երկիրներ նուաճեց որ այդ պատճառաւ մեռաւ:
17. Թուրքիան ճերմակ կմախքներով պիտի ծածկուի:
18. Գերիներու ուժով կրկանաւ մը թիավարողը տեղ չի հասնիր:
19. Երբ բաւարար գինի չունիս տանդ մէջ, մարդ մի հրաւիրեր:
20. Ոսկին պահելով շահի չես

- հասնիր:
21. Երբ մէկը հալածես շատ, զայն գորացուցած կ'ըլլաս:
  22. Կոտորուած սրինգէն ճիշդ երգ չես լսեր:
  23. Առանձնակի մարդը հզօրագոյն մարդն է:
  24. Յիշատակներով բեռնաւորուածը խոր լուծիւն կը փնտռէ:
  25. Անթիւն երբ կողքի անթիւն իր ողջ ունեցածը կու տայ, ինք իր կողմէ տալու գոհունակութեամբ կը կշտանայ:
  26. Սահմանները փլել պէտք է յանուն բարի դրացնութեան:
  27. Արմատախիլ ինկած ծառերը չեն պողաբերեր:
  28. Մարդ կրնա՞յ իր ցաւէն բաժնուիլ:
  29. Ծով դուռն անսահման ես, ես ալ կաթիլ մը քեզմով մեծ կ'ըլլամ:
  30. Մայրամուտս ճշմարտութեան մէջ արշալոյս կ'ըլլայ:
  31. Մինչեւ բաժանուի պահը սէրը իր խորութիւնը չի կրնար գիտնալ:
  32. Մեզմէ մի՛ հեռանար, մեր վերաջալոյսին՝ միջօրէ մըն էիր:
  33. Երբ սէրը հրաւիրէ ձեզ՝ հետեւեցէ՛ք:
  34. Եթէ սէրը ձեզ թագաւորէ, նաեւ պիտի խաչէ:
  35. Սէրը բաւարար է սիրոյ համար:
  36. Քովէ քով կեցէք բայց ոչ շատ մօտ, զի տաճարի սիւներն ալ իրարմէ հեռու կը կենան առաստաղը լաւ բռնելու համար:
  37. Մայրին ու նոճին իրարու շուքին մէջ չեն կրնար աճիլ:
  38. Տուէք ձեր սրտերը, բայց մի փորձէք զայն բանտարկել:
  39. Սլացող նետ սիրողին աղեղը հաստատուն պէտք է ըլլայ:
- Ձգացիք արդէն որ բոլոր այս ասոյթները մարդոց համար են: Արդէն գրողը ինք իր համար չէ, որ կը գրէ, մարդոց համար կը գրէ: Բարի վայելում:

Armenian Youth Association of California  
 Youth advisory committee Presents  
**Ararat Dream Team 2013**  
 ԱՐԱՐԱՏ ԵՐԱՋ ԽՈՒՄԲ 2013  
 Արարատ Լեռ Բարձրանալու, Անի Եւ Աղթամար Այցի Վաւերագրական Տեսաերիզ Եւ Հանդիպում  
 Mount Ararat is the tallest mountain located in historical Armenia. An inactive volcano capped year round with ice and snow, reaches 5165 m. Mount Ararat has fascinated mountaineers ever since Khachadour Abovian climbed it in 1829.  
 The Dream Team 2013 will present a documentary of their spectacular climb to Mount Ararat, their pilgrimage to Ani, Akhtamar and will share their challenges and rewarding experience.  
**Sunday March 23rd 2014 at 6:00pm at the AYAC Khachadourian Hall.**  
 Admission is free. Reception following the program  
 1811 S. Glendale Ave. GLENDALE, CA 91205 / Tel.: (818) 552-2922 Fax: (818) 507-7545  
 Email: ayac@sbcglobal.net www.ayacalifornia.org

### ԻՆՉՊԵՍ ՉԳՐԵԼ ՊԱՏՍՈՒԲՈՔ

#### ՆՈՐԱՅՐ ԱԴԱԼԵԱՆ Գրական Թերթ

Նայում եմ երկաթբետոնէ բազմալարկ շէնքի ութերորդ յարկի իմ բնակարանի խուլ փակուած պատուհանից դուրս եւ տեսնում միջօրէի բարկ արեւից շիկացած քաղաքը: Չեղաւ: Մնց որ պատմուածքի սկիզբ լինի: Բառերը գծոտում եմ նոյն սեւ թանաքով: Չէք պատկերացնում, որքան եմ ցանկանում պատմուածք չգրել, զգուշ եմ բոլոր պատմութիւններից, որոնք մեծ մասամբ այնքան ճշմարիտ են, որ թւում են բացարձակապէս սուտ ու դատարկամիտ: Վէպից էլ եմ խորշում, այսքան վիպական ժամանակի մասին՝ ինչ վէպ ու բան, չիմարութիւն չէ՞, նմանապէս եւ դրամայից, նայէք իմ հայեացքի ուղղութեամբ՝ ինչպիսի ողբերգական կեանք, մարդը մեռնում է տակաւին չծնուած, մեռած մօր փորում: Ճիշտը չգրելն է, այլ, զուցէ, անձայն խօսելն ինքը քեզ հետ:

Փողոցով անցնում է Դանեմարքայի տիրամած ու դալուկ իշխանը: Կանգնեց «Սիլաչի» հիւրանոցի շքամուտքի առջեւ: Երկամտում է՝ մտնե՞լ ներս, թէ՞ չմտնել: Հայեացքն ընկաւ պատուհանիս: Տեսնելով ինձ՝ աւելի տիրեց: Սիրտն անսահման կարօտից լաց եղաւ: Կարծեցի՝ ես ուրիշն եմ, ցանկացած մարդ, բայց ոչ ես, որ վճռականօրէն որոշել է պատմուածք չգրել եւ ոչ էլ վէպ կամ դրամա: Երկար մտածում եմ՝ ո՞վ եմ ես, հագիւ մարմինս ծածկած այս գովաստուն գգեստի մէջ: Վերջապէս հասկանում եմ անհասկանալին. ես իշխանի հօր ուրուականն եմ, որին եղբայրը սպանեց, կարծեմ, նրա քնած ժամանակ աջ թէ՛ ձախ ականջի մէջ մահաբեր թոյն կաթեցնելով, որպէսզի բազմի նրա թագաւորական գահին: Սակայն, թերեւս աւելի, տիրանայ նրա գեղեցիկ ու հրապուրիչ կնոջը:

Ապակու ետեւից շարունակելով նայել քաղաքին՝ թիկունքով զգում եմ կնոջս տաք շնչառութիւնը, ձեռքը հպուած է աջ ուսիս, որին դեռ կայ շատ հին վիրահատութեան չորացած բիծ, այն երբեմն նււում է անձրեւի ժամանակ: Առանց շրջուելու տեսնում եմ՝ նա չէ, ոչ ոք: Գուցէ նա խոհանոցում է կամ մէջքի վրայ մերկ պառկած է ննջարանում՝ սառնորակ ջրով ցնցուղ ընդունելուց յետոյ, չէ՞ որ անսովոր շոգ ամառ է, ուզում ես մաշկդ էլ դէն նետել եւ մնալ ջերմութեանն անտարբեր ոսկորներով: Աչքերիս երեւակայութեամբ դեգերում եմ բնակարանում եւ չեմ գտնում նրան: Այնքան միայնակ եմ, կարծես ես էլ չկամ, քաղաքն է եւ տիեզերքը: Եւ բառարանից էլ լուռ բառեր:

Մի՛ իմացէք իմ անունը, նմանապէս՝ հասարակութեան որ խաւն եմ ներկայացնում, կուշտ եմ թէ քաղցած, մագերիս գոյնը, բարի եմ թէ չարակամ, հեռախօսիս համարը, կնամով եմ թէ կնամեծար, ինչ եմ ուզում այս աշխարհից եւ ուզում եմ արդեօ՞ք, հասկացէ՞ք՝ այս եւ նման բաների մասին թէկուզ հպանցիկ տեղեկութիւնը ձեւաւորում է կերպար, հետեւաբար եւ՝ պատմուածք, վէպ կամ դրամա, որոնցից փախչում եմ աւելի, քան աստանայից: Անկեղծօրէն ասեմ միայն՝ մարդ եմ, եւ վերջ: Ես մարդ եմ: Դու մարդ ես: Բայց մարդիկ այնքան քիչ են, որ քեզ

Դիողենեսի լապտերն է անհրաժեշտ՝ նրանց տեսնելու համար:

Փողոցում դանդաղ շարժւում են տանկերը, մէկ, երեք, հինգ տանկ: Նրանց ծանր քայլերից եւ խլացուցիչ հռնդիւնից բնակարանս ցնցւում է: Մի ուղղմական ինքնաթիռ սուրաց շէնքի գլխավերեւով: Ջինոուորական փողային նուագախումբը դոփոփում է շոգից ծորացող ասֆալտը: Կարծում եմ, սա Երկրորդ Աշխարհամարտի շարունակութիւնն է կամ երրորդի սկիզբ: Մտքիս եկաւ կամաւոր գնալ ուղղմականապէս եւ ոչ մի թշնամի չսպանել: Թող նրանք սպանեն ինձ: Աշխարհում գոյութիւն ունի՞մ մի մարդ, մի արիւնարբու գագան, մի կոկորդիլոս, որ ցանկանայ իմ մահը: Անշուշտ: Այս մութ եւ դաւադիր կեանքում ինչպէ՞ս կարող է նա չլինել: Աշխարհը ոչ միայն ես եմ, այլեւ, գուցէ աւելի, նա՝ եւ հողին, որ չի քնում գիշեր թէ ցերեկ:

Անցած գիշեր կինս տանը չէր, ասաց՝ մնալու է ընկերուհու մօտ: Մեր երկտեղեայ մահճակալին գիշերն անցկացրի միայնակ, կնոջս փոխարէն նրա մետաքսէ ծածկոցով բարձր գրկած, որից նրա ծաղկաւէտ շունչն էի առնում: Այս առաւօտ սուրճ պատրաստելիս գանգեցի ընկերուհուն, իմանալով՝ երբ է կինս վերադառնալու, կարօտել էի նրան: Ընկերուհին ասաց՝ քո հարցին Աստուած էլ չի կարող պատասխանել, եւ խորամանկ ժպտաց: Ես չգիմեցի Աստծուն՝ բա որ խօսքը կտուրը գցի՞, ինձ շղարշելով կատարեալ անորոշութեամբ: Ես սուրճը խմեցի ինձ հետ: Ինչպէս տեսնում էք, այս իրողութիւնը կայ նուրբ պատմուածքի հետ, եւ ես մարմնական ու հոգեղէն բաւարարութիւն եմ զգում, որ ինձ, առայժմ, յաջողում է պատմուածք չգրել: Պատմուածքին անյարիր է նաեւ իմ հետեւեալ կասկածանքը: Ասե՛մ, թէ՞ չասեմ: Բանաւոր ասեմ, որպէսզի չգրեմ, յանկարծ ու իմ կամքին հակառակ ոտքս մտնի պատմուածքի փշոտ դաշտ: Չէք պատկերացնում՝ ընկերուհին որքան գեղեցիկ է եւ սիրառատ, իսկ կինս՝ աւելի, այսպէս եմ կարծում գուցէ այն պատճառով, որ նա իմ սեփականն է, նրանով հպարտանում եմ եւ ինձ ամէն պահ զգում հարուստ ու երջանիկ: Նրանցից սէր է կաթում, ինչպէս քաղցրութիւնից ճաքած նուրբ: Վերջերս մտքովս անցաւ՝ նրանք լեսբուհիներ են, առաջին անգամ չէ, որ գիշերը միասին են լուսացնում, հնարաւոր է, ցանկասէր շոյանքներ չանեն իրար: Ես առանձնապէս չմտահոգուեցի, այդ սէրն էլ է Աստծոյ պարգեւ, այ, եթէ ընկերուհին յանկարծ տղամարդ դառնայ նոյն Աստծոյ կամօք, իսկական տղամարդ, ինչպէս ես, հաւատացէք, երկուսին էլ կը սպանեմ:

«Սիլաչի» հիւրանոցի շքամուտքի կարմիր մարմարէ աստիճանին նստած մուրացկանը մի քիչ տղամարդ է, մի քիչ՝ կին, ներս ու դուրս անողներից ձեռքը պարզած փող է մուրում: Բոլորն անցնում են նրա հանդէպ անտարբեր ու արհամարհանքով, մինչեւ իսկ մի լիոնատէրերը, մէկ էլ, աչքերիս հաւատա՞մ, թէ՞ չհաւատամ, Դանեմարքայի իշխանը վրից հանում է իր թագաւորութեան ոսկէ շղթայով ոսկեկուռ գինանշանը եւ հագցնում մուրացկանի խորշումած պարանոցին: Ես մի սխալ ու յիմար, սխալը

կարող է նաեւ խելացի լինել, նախադասութիւն եմ մտածում, բայց, հասկանալի է, չեմ գրում թղթին, քարի վրայ կամ պատին, նոյնիսկ բարձրաձայն չեմ ասում ուրիշներին եւ ինձ, նոյնիսկ սիրելի կնոջս, թող ոչ ոք չլսի. ամենամեծ հարատւութիւնը աղքատութիւնն է, երբ բնաւ չես մտահոգուում, թէ քեզ կը կողոպտեն ու կը սպանեն, հարուստը երջանիկ չէ, դժբախտ է նա: Աղքատն է երջանիկ: Ես նախանձալից նայում եմ մուրացկանին, որը վրից հանում է ոսկին եւ զգում աղբարկղը՝ դարձեալ աղքատ դառնալով: Ես հարուստ եմ իմ կնոջով, հետեւաբար, շատ դժբախտ, մի՞թէ անհաւանական է այս գող աշխարհում, որ մի օր կարող են նրան ինձից գողանալ:

Փողոցում ետ ու առաջ քայլում է ծաղրածուն, նա հանճարեղ է, ուրիշներին ծաղրելով՝ մահացու աստիճանի ծաղրում է իրեն: Ես ճանաչում եմ մի մարդու, ով այնքան մեծամիտ է եւ նարցիսսավարի ինքնասիրահարուած, որ կարծում է՝ բոլորը փողոցային ծաղրածու են, ոչնչութիւն, ինքն է հանճարեղ ու անմահ: Մի գիշեր, երբ կինս էլի տանը չէր, քունս չէր տանում, էլեկտրոնային խաղալիքի նման քանդեցի նրան մինչեւ վերջին աննշան պտուտակիկը, ամբողջը տարածեցի ճաշասեղանին եւ, ինձ համար էլ անսպասելի, անսիրտ-անհոգի պատկեր տեսայ, ընդհանուր հաճոյքի խաղալիք: Կարծում էք՝ խղճացի՞ նրան: Ո՛չ: Ես ինձ խղճացի, որ գգայուն մարդ եմ ծնուել երեսուներթ տարի առաջ:

Պատմուածքի ոճահոգեբանական գոյնին չբռնող մի ինքնախոստովանանք անեմ օդի մէջ, ինդրում եմ, փակէք ականջներդ, եթէ յանկարծ ձայն լսէք, շատ եմ ինդրում, մոռացէք իսկոյն, չէք լսել, չի եղել: Երբ կասկածը կրկնուելով խորացաւ կնոջս ու նրա ընկերուհու փոխադարձ սիրագեղումների մասին, ցանկացայ գոնէ մէկ անգամ լինել նրանց հետ, շոյել նրանց չքնաղ մարմինները, համբուրել, տիրանալ՝ երջանկացնելով ինձ եւ նրանց սիրոյ տիեզերական գործողութեամբ: Եթէ չգիտէք, իմացէք, ես բարոյական մարդ եմ եւ սպրում եմ աւանդական որոշ չափանիշներով ու աստուածատուր պատուի-

րաններով: Շատ չանցած՝ ես, խոստովանեմ, ամաչեցի ինձնից եւ, բաւականին դժուարութեամբ, հանգրի իմ այդ կրակ-բոց ցանկութիւնը: Անցաւ որոշ ժամանակ: Կինս շարունակում էր ոչ ամէն օր գիշերել տանը: Հոգուս նոր կասկածանք եկաւ: Եթէ ես հրաժարուեցի լինել երկու կանանց միջեւ, արդեօք անամօթ աշխարհում չի՞ գտնուի մի լկտի տղամարդ, ով այնտեղ յայտնուի իմ փոխարէն: Կասկածանքն այնքան տրամաբանական էր, որ թուաց աւելի իրական, քան ես: Չղջացի, որ ծիծաղելի բարեպաշտութեամբ նրան եմ զիջել ինձ արժանի տեղը: Ես ինձ չհարցրի՞ ո՞վ է նա, ցաւալի էր, որ նա ես չէի:

Հեռուում գծագրում էին մեռած գործարանների ծխնելոյզները: Մի ճերմակաթեւ աղաւնի է մոլորուել արեւաշող երկնում: Անձրեւ չի գալիս, բայց քաղաքի հորիզոնում կամար է արել սեւ ծիածանը: Ես խճճուել եմ իմ զգացմունքների սարդոստայնում: Փողոցի կարգապահութիւնն իրականացնող շանաւար ոստիկանը գօտկատելից հանում է ատրճանակը եւ կրակում աղաւնու վրայ: Թափում է սպիտակ փետուրների ձիւնախառն անձրեւ:

Ես հաշտուեցի կնոջս յաճախակի բացակայութիւնների հետ, որովհետեւ այդ ժամանակ էլ նա սրտիս մէջ էր: Իմ սրտով ես զգում էի նրա սրտի երգը: Բարոյական նկատառումով չէի ուզում նրա հետ ամուսնանալ, բժշկական համալսարանում նա իմ ուսանողուհին էր եւ ինձնից փոքր տասնհինգ տարով: Բայց նա ասաց եւ բազմիցս կրկնեց՝ քեզ սիրում եմ: Վեցամեայ համատեղ ամուսնական կեանքը, կարծես, ջնջեց մեր տարիքային տարբերութիւնը, թւում էր՝ նոյն թուականին ենք ծնուել, նոյն օրը, նոյն մօրից: Ես երիտասարդացել էի, իսկ նա փոքր-ինչ մեծացել՝ դառնալով աղջկական հմայքներով լիակատար կին: Անկողնում աւելի սիրառատ էր, քան ես, դա վերագրում էի իմ նկատմամբ նրա բուռն սիրուն: Լինում էր, եւ ոչ հագուադէպ, հաւատացէք, ես էի նրան ենթարկում ինձ՝ հասցնելով

Շաբ.ք էջ 20



**ԸԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՅ ԵՂԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆ**

**ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ ԲԱՐԵՆՆԱՍ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԵՐ ՅՈՎՆԱՆ ԱՐԲ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ ԸՈՎՈՒԿԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ԿԼԵՆՏԵՅԼԻ ԵՂԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ**

**206 WEST CYPRESS ST, GLENGALE, CA. 91204**  
**ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ՄԱՐՏ 24, 2014ԻՆ,**  
**Կ.Վ. ԺԱՍԸ 7:00ԻՆ**  
**ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ՝ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՍԲ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ**

**ԸՐԱԲԵՐ**

### ՀԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՄՕՏ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԸ ԱԵԼԻ ԲԱՐՁՐ Է

Արդեօք հարուստները աւելի կը գնահատեն երաժշտութիւնը քան աղքատները: Այս հարցին գիտական պատասխան տալու համար կոլտսմիթց համալսարանի հետազոտական խումբը կատարած է հետաքրքրական ուսումնասիրութիւն մը, որ կը նկատուի երաժշտութեան հոգեբանութեան ծիրին մէջ կատարուած ամէնէն ճշգրիտ եւ ընդարձակ հետազոտութիւնը:

Աւելի քան 147,000 մասնակիցներով, գիտնականները կը բացատրեն թէ իրենց կատարած ուսումնասիրութեան արդիւնքները այդքան ալ զարմանալի չեն, որովհետեւ ընդհանրապէս նիւթապէս ապահով մարդիկ աւելի հաւանականութիւն ունին հովանաւորելու երաժշտական համերգներ, հետեւելու երաժշտութեան դասընթացներու եւ խորանալու երաժշտութեան ճիւղին մէջ: Այս բոլորին իբրեւ արդիւնք, անոնք կրնան աւելի լաւ հասկացողութիւն ձեռք բերել երաժշտութեան նկատմամբ:

Գիտնականները նաեւ կը շեշտեն, թէ երաժշտութեան զարկերը ճիշդ ըմբռնող եւ երաժշտութեան

զեղեցկութեան զարդանքները իմացող մարդիկ ընդհանրապէս աւելի կը գնահատեն երաժշտութիւնը:

Այս ուսումնասիրութիւնը կատարուած է Միացեալ Թագաւորութիւններուն մէջ, ուր հետազոտներ յայտնաբերած են թէ երաժշտութիւնը ամէնէն շատ գնահատուած է երկրի ամէնէն հարուստ շրջաններուն մէջ, ինչպէս՝ Գէմպրիճը, Օքսֆորտը, Եորքը, Լոնտոնը եւ Ջէրուէլը:

Հետաքրքրական է, որ այս հետազոտութեան ընթացքին գիտնականները յայտնաբերեցին նաեւ թէ երաժշտութեան գնահատութիւնը իր գազաթնակէտին կը հասնի պատասնելութեան վերջին տարիներուն:

Հետազոտներ կ'առաջարկեն, որ նման ուսումնասիրութիւններ կատարուին նաեւ այլ երկրներու մէջ, որպէսզի արդիւնքները դառնան վստահելի: Անոնք մտադիր են իրենց յառաջիկայի ուսումնասիրութիւններուն շնորհիւ յայտնաբերել երաժշտութեան գնահատութեան եւ նիւթական ապահովութեան կապին միջամուխ եղող գործոնները:

### ՖԵՅՄՊՈՒՔԻ ՅԵՏ ԿԱՊՈՒԱԾ ԱՆՁԿՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Ֆէյսպուքը ներկայիս կը վայելէ համաշխարհային ճանաչում եւ միլիոնաւոր անձեր ներկայիս բաժանորդ են Ֆէյսպուքի կայքէջին, ուր անոնք կրնան զետեղել նկարներ, եւ ընդհանուր առմամբ արտայայտել իրենց միտքերն ու զգացումները: Այլ խօսքով, Ֆէյսպուքը ներկայիս դարձած է ընկերային յարաբերութիւններու արտացոլացման նոր կեդրոնը:

Ինչպէս բնական կեանքի պարագային, Ֆէյսպուքի պարագային եւս ընկերային յարաբերութիւնները կրնան ըլլալ՝ առողջ եւ վնասակար: Բնական կեանքի մէջ պատահած ընկերային վարմունքները եւ դէպքերը ներկայիս փոխադրուած եւ աւելի բացայայտ դարձած են Ֆէյսպուքի վրայ: Ոմանք սկսած են իրենց ընկեր-ընկերուհիներուն հետ կեանքի մակարդակի բաղդատութիւնները շարունակել Ֆէյսպուքի կայքէջին վրայ: Այս բաղդատութիւններուն հետեւանքով յատկապէս պատանիներու մօտ ստեղծուած է մրցակցութեան միջոցով մը, որուն հետքերը յաճախ կը յայտնուին անձին հոգեբանութեան վրայ: International Journal of Eating Disorders ամսաթերթը վերջերս հրատարակած է հետաքրքրական յօդուած մը Ֆէյսպուքի օգտագործման հոգեբանական հետեւանքներուն մասին: Ֆէյսպուքի միջոցով զարգացած

մրցակցութիւնը կարգ մը մարդոց մօտ կրնայ ստեղծել անձկութիւն, իսկ ուրիշներու մօտ այս անձկութիւնը կրնայ չափազանցուիլ հատելով առողջապահութեան սահմանները:

Ըստ յօդուածին, կիներ, որոնք շատ ժամանակ կը տրամադրեն Ֆէյսպուքի վրայ, աւելի մտազբաղ կ'ըլլան իրենց արտաքին տեսքով: Այս կիներուն համար շատ մեծ նշանակութիւն ունին ֆէյսպուքի միջոցով կատարուած գնահատանքները, գովասանքները եւ անշուշտ «Like»-երը:

Սակայն, անձկութիւնը կամ նոյնիսկ չափազանց անձկութիւնը հոգեբանական միակ հետեւանքները չեն: Միացեալ Թագաւորութեան մէջ կատարուած հետազոտութեան մը արդիւնքները ցոյց տուած են թէ Ֆէյսպուքի շնորհիւ ստեղծուած անձկութիւնը կրնայ առաջնորդել ուսելու հետ կապուած հոգեկան անհանգստութիւններու:

Ի դէպ, ուսելու հետ կապուած անհանգստութիւնները, ինչպէս՝ Anorexia Nervosa-ն, Binge Eating Disorder-ը եւ Bulimia Nervosa-ն կրնան վատ ազդեցութիւն ունենալ անհատին առողջութեան վրայ: Յոռեգոյն պարագային այս անհանգստութիւնները նաեւ կրնան առաջնորդել անձնասպանութեան: **ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ**

### ՍԻՐԵԼԻ ՍԸ ԿՈՐՈՒՄՏԸ ԿՐՆԱՅ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՄՐՏԻ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԿՐԱՅ

Լոնտոնի St. George համալսարանի հետազոտները կատարած են ուսումնասիրութիւն մը, որուն շնորհիւ յայտնաբերած են թէ սիրելիի մը կորուստէն ետք մարդոց մօտ կը բարձրանայ առողջապահական հարցեր դիմագրաւելու վտանգը:

Ըստ հետազոտներուն, հոգեբանական անհանգստութեան եւ վիշտի կողքին, կորուստը կրնայ յաւելել ճնշուածութիւն ստեղծել մարդոց մօտ: Այս ճնշուածութեան պատճառով, մարդիկ կը մոռնան հետեւելու իրենց առողջապահա-

կան սովորութիւններուն: Գիտնականները կը բացատրեն թէ մարդիկ կորուստէն ետք վիշտի ընթացքին կրնան մոռնալ հետեւելու իրենց բժշկական բուժումներուն, մարմնի մաքրութեան եւ ընդհանուր առմամբ կը թերանան առողջապահական կենցաղը շարունակելու:

Ուսումնասիրութեան արդիւնքները ցոյց կու տան թէ կողակիցի կորուստէն ետք 30 օրուան տեւողութեամբ անձի մը մօտ կրնայ կրկնապատկուիլ սրտի կամ ուղեղի կաթուածէ տառապելու հաւանականութիւնը:

### ԶՂԱՅԻՆ ՊՈՌՓՈՒՄՆԵՐԸ ԿՐՆԱՆ ՎԱՏԹԱՐԱՑՆԵԼ ՄՐՏԻ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Զղայնութիւնը որքան ալ անխուսափելի ըլլայ եւ որքան զայն ընդունինք որպէս կեանքէն անբաժանելի մաս մը, չենք կրնան ժխտել անոր ժխտական հետեւանքները: Չափազանց զղայնութիւնը կրնայ ենթադրուածէն աւելի վտանգաւոր ըլլալ կարգ մը մարդոց առողջութեան համար: Զղայնութեան հետեւանքները կը վերաբերին ոչ միայն հոգեկան առողջութեան, այլ նաեւ՝ ֆիզիքականին:

Այս ծիրին մէջ նոր կատարուած հետազոտութեան մը շնորհիւ փորձագէտները յայտնաբերած են թէ մարդիկ որոնք յաճախ կ'ունենան զղայն պոթկոմներ կը գտնուին արտանօթային հարցերէ տառապելու վտանգին մէջ:

Զղայնութեան ընթացքին մարմնին մէջ տեղի կ'ունենան նշմարելի փոփոխութիւններ: Օրինակ, զղայն անձը կը դառնայ աշխուժ, ուղեղին մէջ կ'արտադրուին յատուկ հորմոններ, կ'արագանան սրտին զարկերը, կը փոխուի արեան ճնշումը եւ այլն: Սակայն զղայնութիւնը կառավարելով մարդիկ կրնան կանխարգիլել աւելի վտանգաւոր հետեւանքները:

Հարվըրտ համալսարանի բժշկական բաժանմունքի աշխատակիցներէն՝ Տոքթ. Միթլմէն կ'ըսէ թէ զղայն պոթկոմներու հետեւանքները մանաւանդ գոյուցիւն ունին նախապէս սրտի հարցերէ տառապող անձերու պարագային: Այս անձերը զղայն պոթկոմէն ետք երկու ժամուան ընթացքին մեծ վտանգ կ'ունենան դիմագրաւելու

սրտի կամ ուղեղի կաթուած: Հետազոտները կը շեշտեն, որ զղայնութեան կողքին ծխախոտը, արեան բարձր ճնշումը, շաքարախտը, գոլեսթրոլը եւ մարմնի աւելորդ կշիռը գործօններ են, որոնք կրնան նպաստել արտանօթային առողջապահական հարցերու: Ամերիկեան

Centers for Disease Control and Prevention հաստատութեան համաձայն, աշխարհի մէջ տարեկան մօտաւորապէս 17 միլիոն անձ կը մահանայ արտանօթային հարցերու, յատկապէս՝ սրտի կամ ուղեղի կաթուածի հետեւանքով:

Այս ուսումնասիրութեան մասին անդրադարձած է European Heart Journal ամսաթերթը, որուն հրատարակած յօդուածին մէջ նշուած է թէ զղայն պոթկոմները կրնան 4.74 անգամ բարձրացնել սրտի կաթուածի հաւանականութիւնը: Զղայն պոթկոմներու հետեւանքով կը պակսի սրտի եւ ուղեղի թթուածինի (oxygen) քանակը, որ կրնայ լուրջ հարցեր ստեղծել արդէն իսկ սրտի հարցեր ունեցող անձերուն մօտ:

American Heart Association-ի համաձայն, արտանօթային հարցերը կանխարգիլելու լաւագոյն միջոցը առողջապահական կենցաղի որդեգրումն է: Ըստ ընկերութեան մանագէտներուն, մարզանքը, առողջապահական անդակաւորներ եւ զղայնութեան կամ ճնշուածութեան (stress) յարմարելու ռազմավարութիւնները կրնան կանխարգիլել կամ նուազեցնել առողջապահական հարցերը:

### ՀՈԳԵԿԱՆ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԲԱՐՁՐ Է ՏԱՐԻՔՈՎ ՄԵԾ ՀԱՅՐԵՐՈՒ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՄ ՄՕՏ

Ծնողքի տարիքին եւ գաւակի առողջութեան միջոցով կապը քննող ամէնէն ընդարձակ ուսումնասիրութիւնը, որ տեւած է տասնեակ տարիներ, վերջերս հասած է իր աւարտին: Հետազոտները վերլուծելով այս ուսումնասիրութեան արդիւնքները կ'եզրակացնեն թէ տղամարդոց պարագային միջին տարիքի ընթացքին գաւակ ունենալը կրնայ մեծ ուրախութիւն պատճառել իրենց, սակայն ունի հետեւանքներ:

Վերջին տարիներուն գիտնականներ տարբեր արդիւնքներու հասած են, երբ փորձած են յայտնաբերել ծնողքի տարիքին եւ գաւակի հոգեկան առողջութեան միջոցով կապը: Այս նոր ուսումնասիրութիւնը, որ կատարուած է Շուէտի մէջ եւ որուն մասին անդրադարձած է JAMA Psychiatry ամսաթերթը, ցոյց կու տայ, թէ տարիներու ընթացքին տղամարդոց սերմնահեղուկը կ'ենթարկուի փոփոխութիւններու: Այս փոփոխութիւններու արդիւնքով մէջ տեղ եկած փոփոխակներն են, որ հետազոտային գաւակը հակամէտ կը դարձնեն հոգեկան անհանգստութիւններու:

Միջին տարիքի մէջ հայր դարձող տղամարդոց գաւակներուն մօտ

կրնայ բարձր ըլլալ յատկապէս Autism-է, Schizophrenia-է, ADHD-է եւ Bipolar Disorder-է տառապելու հաւանականութիւնը:

Այս ուսումնասիրութիւնը կատարուած է գլխաւորութեամբ Ինտիանա Համալսարանի հետազօտ Պրայքըն Տոնֆրիտի, որ 1973 թուականէն մինչեւ 2001 թուական հետեւած է 2.6 միլիոն շուէտացիներու բժշկական գրառումներուն: Այս ձեւով Տոնֆրիտի հետազոտական խումբը յաջողեցաւ բաղդատել նոյն հօրմէն ծնած փոքրերու առողջութիւնը:

Ըստ գիտնականներուն 45 տարեկանէն ետք հայր դարձող տղամարդոց գաւակներուն մօտ կրնայ կրկնապատկուիլ Schizophrenia-ի հաւանականութիւնը, ինչպէս նաեւ անոնք երեք անգամ աւելի հաւանականութիւն կրնան ունենալ տառապելու Autism-է եւ 13 անգամով կրնայ բարձրանալ ADHD-ի վտանգը: Հետաքրքրական է, որ այս երեխաներուն մօտ նաեւ բարձր կրնան ըլլալ ակադեմական ձախողութեան եւ թմրամոլութեան հաւանականութիւնները: Այս բոլորը բաղդատած 20-էն 24 տարեկանի մէջ հայր դարձող գաւակներու հոգեկան առողջութեան:

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Ave Pasadena, CA 91104  
Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
հեռաձայնել՝ (626) 398-0506

### ՊԱՏԵՐԱԶՍ ԵՒ ... ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏԵՐԱԶՍ

Շարունակում է 6-էն

քի իրաւունք կը վերապահէր գերմանական հրամանատարութեան, սակայն գործնականին մէջ ոչինչ կը փոխէր հրամանատարական կառուցումներէն: Սուլթանը անուանապէս կը մնար որպէս գերագոյն հրամանատար, բայց խորքին մէջ այդ անձը ռազմական նախարար էնվերն էր եւ անոր հետ խումբ մը գերման ժեներալներ ու ծովակալներ, որոնք հայերուն հանդէպ ծայրահեղ թշնամական կեցուածք ունէին: Այս ամբողջը շատ ճշմարտացի ներկայացուցած է գուլիցերիացի պատմաբան Քրիստոֆ Տինքելը: Էնվերի շուրջ խմբաւորուած սպաներու այս խառնախումբը ամէն ինչ կ'ընէր, որպէսզի գերմանական ռազմական առաքելութեան անուան տակ աջակցի հայերու ցեղասպանութեան եւ ասիկա ճշմարտութիւն է:

Աւելի ճիշդը, անլուր քաղաքական սրիկայութեան փոքր հատուած մը միայն, որ հնարաւոր է ներկայացնել մամուլի սուղ էջերէն...

#### ԱՆԳԼԻԱ

Դեռեւ 1833-ին կնքուած ռուս-թուրքական պայմանագրէն ետք անգլիացի պետական գործիչ ու դիւանագետ (1859-1865՝ վարչապետ) Հենրի Ճոն Փալ Մերսթոնը կը գրէ. «Օսմանեան կայսրութեան ամբողջականութիւնն ու անկախութիւնը անհրաժեշտ են Եւրոպայի մնացած մասին մէջ անդորր, ազատութիւն եւ ուժերու հաւասարակշռութիւն պահպանելու համար»:

Իսկ թուրքիոյ մէջ Մեծ Բրիտանիոյ դեսպան Հ. Լէյարտը, 1877-ին կառավարութեան ղեկավարին՝ Տերպիին ղրկուած գաղտնի գեկուցագրին մէջ կը գրէ. «Եթէ Ռուսիան գրաւէ Հայաստանը, ատիկա խիստ կը վնասէ Անգլիոյ շահերուն եւ Արեւելքի մէջ անոր ունեցած ազդեցութեան: Այս հաւանական զարգացումը խոչընդոտելու նպատակով մենք պէտք է դիմենք բոլոր անհրաժեշտ միջոցներուն: Այս առիթով մենք պէտք է դիմենք իւրաքանչիւր եւրոպական տէրութեան օգնութեան ու աջակցութեան»:

Անգլիոյ մէջ իր հակահայ (նաեւ հակառուս) կեցուածքով աչքի կը զարնէր պետական ու քաղաքական գործիչ, պահպանողական կուսակցութեան պարագլուխ ու գաղափարախօս Պենճամին Տիգրայէլին (1804-1881), որ նախ Մեծ Բրիտանիոյ Ելեւմտական նախարարն էր, իսկ 1868, 1874-1880 թթ.՝ վարչապետը: Ի դէպ, այս անգլիացի գործիչը անգլիկանութիւն ընդունած հրեական ընտանիքէ սերած է: Տիգրայէլին իր գլխաւոր խնդիրներէն մին համարած է Ռուսիոյ դէմ պայքարը եւ թուրքիոյ մէջ Անգլիոյ դիրքերուն ամրապնդումը:

Ի դէպ համիտեան ջարդերու ժամանակ է, որ ի պատասխան հայերու օգնութեան խնդրանքին, Անգլիոյ վարչապետ Սոլսպերին բացառիկ սրիկայութեամբ կ'ընէ իր յայտնի լիտի արտայայտութիւնը. «Աշխարհի եւ ոչ մէկ նաւատորմ, նոյնիսկ անգլիականը, չի կրնար բարձրանալ Տաւրոսի լեռները, որպէսզի պաշտպանէ հայերը»:

Այս խօսքերը հայկական հարցի մէջ անգլիացիներու նուաստ ներկայութեան իւրօրինակ ամփոփումն են, որմէ անոնք առ այսօր ապարդիւն կը փորձեն ձերբազատուիլ:

20-րդ դարասկիզբին Անգլիոյ գաղտնի ծառայութեանց ու աշխատակիցներուն արդէն յայտնի էր, որ հայ էթնոսը պէտք է ոչնչացուի: Այդ կ'ապացուցեն Կ. Պոլիս Մեծ Բրիտանիոյ դեսպան Դ. Լոութրիի 1910-ի Մայիս 29-ին գրած նամակ-գեկուցագիրը՝ հասցեագրուած Մեծ Բրիտանիոյ արտաքին գործերու նախարար Չ. Հարտինկին: Դեսպան Դ. Լոութրիին Լոնտոն ղրկուած իր նամակ-գեկուցագրին մէջ կը գրէ, թէ սալոնիկեան (երիտթուրքական) շարժման աղբիւրը հրեաներն են եւ հրեական դրամագլուխի ու երիտթուրքերու միջեւ կայ ուղիղ դաշինք, որ հրեաները երիտթուրքերու գլխաւոր ոգեշնչողներն են եւ այլն: Հայոց ցեղասպանութեան կազմակերպիչներ թալեաթն ու ճաւիտ պէյը կը ներկայացնէ որպէս «Միութիւն եւ յառաջադիմութիւն» կոմիտէի գաղտնի ուժերու պաշտօնական ներկայացուցիչներ:

Հարցը կը հասնի հոն, որ նոյն գեկուցագրի փաստաթուղթերէն մէկուն մէջ Կ. Պոլսոյ բրիտանական դեսպանատան գլխաւոր թարգման Հ. Ֆիցմորիսը երիտթուրքական կոմիտէին «Միութեան ու յառաջադիմութեան» հրեական կոմիտէ կ'անուանէ:

«Թալեաթ պէյը ներքին գործերու նախարար դառնալէն մօտ մէկ տարի առաջ, պատասխանատու պաշտօնները միայն կոմիտէի հետ կապուած մարդիկ սկսան ստանալ»: Իր նամակ-գեկուցագրին մէջ դեսպանը ուշագրաւ տեղեկութիւններ կը հաղորդէ նաեւ 1913-1916 թուականներու Օսմանեան կայսրութեան Մեծ վեզիր (վարչապետ) եւ հայոց Մեծ եղեռնի կազմակերպիչներէն մէկուն՝ Սայիտ Հալիմի մասին, նշելով, որ ան նիւթապէս աջակցած է «Միութիւն եւ յառաջադիմութիւն» կոմիտէին ու անձամբ մասնակցած անոր գործունէութեան:

Տ. Լոութրը նաեւ կը նշէ, թէ «երիտթուրքերը կապ հաստատեցին միայն օսմանցի եւ արտասահմանցի հրեաներու հետ: Անոնց օտարումը միւս ժողովուրդներէն ակնյայտ դարձաւ», իսկ քիչ ետք կը յաւելէ. «Յատակ է, որ հրեան, իր տնտեսական բարձր գիտակցութեամբ, ծուղակը ձգեց թուրքը»: Նոյն փաստաթուղթին մէջ դեսպանը կը յայտնէ, որ Սալոնիկի կոմիտէի ազդեցիկ գործիչներէն մէկը՝ դոկտոր Նազըմը եւս հրեական ծագում ունի:

Իսկ Ատանայի ջարդերուն ծրագրաւորման փորձը կար եւ "յաջողութիւն" երաշխաւորուած էր: Եւրոպական ոչ մէկ երկիր կառավարութեան մակարդակով չփորձեց ձայն բարձրացնել ի նպաստ հայերու, ոչ ոք ուզեց լսել հայոց ձայնը եւ ոչ ոք փորձեց կեցնել սպանդը: Եւրոպական մամուլը եւս կը լռէր կամ հակահայկական յօդուածներ կը տպագրէր՝ թուրքերը պաշտպանելով: Թուրքերը կը պաշտպանէր կամ կը լռէր, որովհետեւ շատ թերթերու տնօրէններ ու թղթակիցներ մեծ գումարներ կը ստանային հրեաներէն հակահայկական, ինչպէս նաեւ թուրքասպաստ յօդուածներ տպագրելու համար: «Ռուվիլ տ'օրիան», «Պերլինըր թակեպլաթ», «ժուռնալ տը Տեպաթի», «Քէօլիչէ Յայթունկ» եւ այլ թերթեր, որ հրեաներուն կը պատկանէին, կապուած էին թուրքական դեսպանատուններու հետ եւ անոնց պատուէրով հակահայ յօդուածներ կը գրէին, որոնց մէջ կը

### ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

#### ԲԱՐՁՐԱՑԱԾ ԱՂՍՈՒԿԸ

Շարունակում է 7-էն

Պիլալ. Անոնք հարցուցած են, ես հասկցայ, որ ան կրնայ վերցնել միայն 10 միլիոն եւրօ:

Էրզողան. Ինչ որ է, ասով մի խօսիր (հեռախօսով):

Պիլալ. Լաւ, ուրեմն, կը դասաւորենք:

Էրտողան. Լաւ, ըրէ ատիկա: Ես չեմ կրնար գալ այս գիշեր:

Պիլալ մնամ Անգարա:

Հինգերորդ հեռախօսազանգը, 2013 թուականի Դեկտեմբեր 18-ին, ժամը 10:58-ին:

Էրտողան. Որոշեցի զանգահարել, տեսնել որեւէ նորութիւն կա՞ց:

Պիլալ. Ոչ, ոչ մէկ բան: Աստուծոյ օգնութեամբ աւարտեցինք մեզի տուած պարտականութիւնները:

Էրտողան. Ամէ՛ն ինչ վերացած է:

Պիլալ. Ամբողջութեամբ...: Ինչպէ՞ս ըսեմ: Ես ունիմ Սաման - տիրայի եւ Մալթեփիի գումարը՝ 730 հազար տոլար եւ 300 հազար թրքական լիրա:

Ասոնք եւս կը կարգաւորեմ: Մենք պարտք ենք 1 միլիոն թրքական լիրա Ֆայիք Իշկին. ես ատիկա կու տամ անոր եւ կ'ըսեմ, որ մնացածը փոխանցէ ակադեմիային:

Էրտողան. Բացէ ի բաց մի՛ խօսիր:

Պիլալ. Չընե՛մ:

Էրտողան. Ոչ, հասկացա՞ր:

### ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱՅՍՕՐ ՊԱՏԱՍԽԱՆ Է ՏԱԼԻՍ

Շարունակում է 7-էն

Հայաստանը, որի մի մասը, ինչպէս արդէն նշեցինք, յանձնեց Վրաստանին, իսկ մյուս՝ զգալի մասի վրայ ստեղծեց Ատրպէյճան անունով պետութիւնը, որը եւս պէտք է պատուհաս դառնայ նրա գլխին եւ արդէն իսկ սկսում է դառնալ: Չհաշուած այն հանգամանքը, որ 1990-ականներին պատերազմ եղաւ այստեղ՝ ԽՍՀՄ սխալների պատճառով, ամէն դէպքում դա դեռ քիչ էր: Այսօր Ատրպէյճանն սկսում է վարել անկախ քաղաքականութիւն եւ չի բացառում նաեւ, որ կակի հակադրուել Ռուսաստանին, որի սաղմերն արդէն երեւում են: Այս դէպքում Ռուսաստանին մնում է մէկ քայլ, քանի որ նրա մօտ բանակցութիւններն այդքան էլ լաւ չեն ստացուում, մտնել այս տարածաշրջան եւ ռազմական գործողութիւններ իրականացնել՝ Նախիջեւանը, Արցախը եւ այլ հայկական

մեղադրէին հայերը եւ սուլթանը կը գովերգէին: Այս պայմաններում մէջ 1915-ի Ապրիլին երիտթուրք պարագլուխներու (Թալեաթ, էնվեր, ձեմալ, Նազըմ) հրամանով Արեւմտեան Հայաստանի ամբողջ տարածքին կը սկսին հայերու զանգուածային աքսորն ու ջարդերը, որ կը շարունակուի մինչեւ 1918 թուական: 1919-1922 թթ. գործը աւարտին հասցուց նոյնպէս հրեական ծագումով Քեմալ Աթաթուրքը...

Յ.Գ. Այս ամբողջը, անշուշտ, բնաւ չըսուի թուրք բարբարոսին ոճրագործ ու սեւ դերակատարութիւնը մեղմելու համար:

Այդ դերակատարութեան մասին դեռ կը խօսինք: Այս ճշմարտութիւնները առաւելաբար մեզի՝ հայերուս պէտք են, որովհետեւ երբեմն-երբեմն մեր մէջ շատ հա-

Պիլալ. Լաւ, հայրիկ: Էրտողան. Ես նկատի ունեմ, որ քու մօտը ոչինչ պահես, ըլլայ ատիկա Սամանտիրա կամ այլն... դրկէ այնտեղ, ուր որ պէտք է, ինչո՞ւ կը պահես մօտը:

Պիլալ. Լաւ, հայրիկ, բայց ես կը կարծեմ, որ մենք հակողութեան տակ ենք:

Էրտողան. Այն, ինչի մասին ես քեզի կ'ըսէի սկիզբէն...:

Պիլալ. Բայց անպատանգութեան աշխատակիցները մեզի կը հետեւին, հայրիկ:

Էրտողան. Տղաս, քեզի կը գաղտնալսեն:

Պիլալ. Բայց անոնք նաեւ կը տեսահսկեն մեզի:

Էրտողան. Կրնայ ճիշդ ըլլալ: Հիմա, մենք որոշ բաներ ըրած ենք Սթամպուլի ոստիկանական վարչութեան մէջ:

Այնուհետեւ լրացուցիչ ձայնագրութիւններ ի յայտ եկած են, որոնց մէջ Էրտողան եւ անոր որդին կը խօսին թուրք գործարարի մը առաջարկած 10 միլիոն տոլարի կաշառքը մերժելու մասին, բաւարար չըլլալուն պատճառով:

Էրտողան կրնայ կորսնցնել ոչ միայն վարչապետի իր պաշտօնը եւ մօտ ապագային նախագահ դառնալու հնարաւորութիւնը, այլ նաեւ կրնայ ենթարկուել երկարատեւ ազատագրկման իր յանցագործութիւններուն համար:

տարած քներ, վերջնականապէս Հայաստանի մաս դարձնելու ու ճանաչելու:

Բայց Ռուսաստանի առաքելութիւնն Ատրպէյճանով չի աւարտուելու, քանի որ ԽՍՀՄ-ն ի հակադրութիւն Ռուսաստանի զարգացրել է մէկ այլ պետութիւն եւս: Դա թուրքիան է, որին եւս հայկական տարածքների հաշուին ԽՍՀՄ-ը հզօրացրեց՝ յոյս ունենալով, թէ նա պէտք է Արեւմուտքում կոմունիզմ տարածի ու դառնայ համաշխարհային լեղափոխութեան դրօշակակիրներից մէկը: Թէ ինչ եղաւ, բոլորս էլ գիտենք, հետեւաբար Ռուսաստանն ստիպուած կը լինի այս սխալը եւս ուղղել:


Դէ ինչ, սպասենք քաղաքական գործընթացների հետագայ զարգացմանը եւ յուսանք, որ ԽՍՀՄ սխալները շտկելիս Ռուսաստանը լուրջ խոչընդոտների չի հանդիպի եւ կը կարողանայ այն մինչեւ վերջ իրականացնել:

Լակնոտ եւ պարծենկոտութեան աստիճանի տգէտ յօդուածներու կը հանդիպինք, ուր հայերուս հլու հնազանդ մորթութելու մասին կը գրեն: Կը գրեն առանց դոյզն իսկ հակնալու, թէ իրականութեան մէջ ինչ ուժեր կը դիմակալէր Արեւմտահայաստանի լեռները եւ հայ ժողովուրդը ընդհանրապէս, երբ ձեռք-ձեռքի տուած էին բրիտանական աղուէսային քաղաքականութիւնը, գերմանական հաշուենկատ ու անխափան գործող ռազմական մեքենան, թուրք բարբարոսն ու հրեական անհաշիւ դրամագլուխը:

Թուրք պարագլուխներուն հրեական ծագման եւ հրեական գումարներու "բացայտութեամբ"-ը նոյնպէս մաս կը կազմէ անգլիական քաղաքանութեան, սակայն, այդ մասին յաջորդիւ...:

### ՄԱՐԱԶԴ

Ի Տէր յանգչեց Տ. Շնորհք ծայրագոյն վարդապետ Գասպարեանը



Խոր ցաւով տեղեկացնում ենք, որ մարտի 3-ին ԱՄՆ Բելտիլ Իլլինոյի հիւանդանոցում ի Տէր յանգչեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի հոգեւոր սպասաւոր Հոգեշնորհ Տ. Շնորհք ծայրագոյն վարդապետ Գասպարեանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մայր Աթոռի միաբանութիւնը առ Աստուած աղօթքով բարեկիշատակ Հայր Սուրբի հոգու հանգստութեան համար՝ սգում են Հոգեշնորհ Տ. Շնորհք ծայրագոյն վարդապետ Գասպարեանի մահը:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

#### ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Տ. Շնորհք (աւագանի անունը՝ Արամ) ծայրագոյն վարդապետ Գասպարեանը ծնունդ է 1929 թուականին Եգիպտոսի Ալեքսանդրիոյ քաղաքում:

Նախնական կրթութիւնն ստացել է Ալեքսանդրիայի ազգային վարժարանում, ապա ուսանել Անգլիական դպրոցում:

1959 թ. աւարտել է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանը եւ ձեռնդրուել սարկաւագ: Միաժամանակ ուսանել է Մարգեթի համալսարանում: Տիրապետել է ինը լեզուներին:

1961 թ. ձեռնադրուել է Եգիպտոսի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մամբրէ Արք. Սիրունեանի կուսակրօն քահանայ է ձեռնադրուել Կահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում:

1962 թ.-ից հովուական առաքելութեամբ մեկնել է Բրազիլիա՝ Սան Պաուլոյ, ուր վարդապետութեան մասնաւոր աստիճան է ստացել տեղի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Ապատեանի կողմից:

1963 թ.-ին նշանակուել է Բրազիլիայի եւ Ուրուգուայի առաջնորդական փոխանորդ:

1969 թ. երջանկալիշատակ վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից Գեղարքեան հոգեւոր ձեռնարանի տեսչի հանգամանքով հրաւիրուել է Ս. Էջմիածին:

1974 թ. Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի կողմից ստացել է ծայրագոյն վարդապետի աստիճան:

1979 թ. Թուրքիայի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Շնորհք Արք. Գալուստեանի կողմից նշանակուել է Պատրիարքի օգնական:

1996 թ. Երուսաղէմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի կողմից հրաւիրուել է Երուսաղէմ՝ իբրեւ ձեռնարանի պատասխանատու եւ դասախօս:

Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմում հովուական պաշտօններ է վարել մի շարք շրջաններում: Հովուական ծանր պարտականութիւնների հետ մէկտեղ հետեւել է Քրիստոսաբանութեան, Ծիսական աստուածաբանութեան, հովուական խորհրդատուութեան եւ լեզուաբանութեան դասընթացներին:

Հանգստեան կոչուելուց յետոյ Հոգեշնորհ Հայր Սուրբը որպէս այցելու հովիւ իր ծառայութիւնն էր շարունակում բերել Հիւսիսային Ամերիկայի եւ Կանադայի մի շարք ծուխներում:

### ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 13-էն

Գույումձեան, հանդիսութիւնը պաշտօնապէս սկսաւ աշակերտութեան կողմէ «Նորահրաշ» շարականի եւ Հ.Հ. քաղերգի երգեցողութեամբ, շարունակուեցաւ տնօրէնուհի Քոյր Լուսիայի օրուան խուրհուրդ ներկայացնող պատգամով եւ Մարօ Գույումձեանի բացման խօսքով, երկու խօսողներն ալ իրենց շեշտը դրին Քրիստոնէական կրօնքի հանդէպ հայ ժողովուրդի անսակարկ հաւատարմութեան ու գոհողութեան վրայ եւ ներկայացուցին պատմական դէպքն ու ճակատամարտը ու անոր յաջորդող նոյնանման առանցքային դէպքեր մեր ժողովուրդի պատմութեան ընթացքին, եւ այս բոլորէն դրսեւորուած պատգամը՝ հաւատարիմ մնալ կրօնական եւ ազգային արժէքներուն, որոնք որպէս աւանդ ժառանգած ենք մեր նախնիներէն:

Բանախօսութեան բաժինը աւարտած էր, հանդիսութիւնը ստանձնեցին աշակերտները, որ շարունակուեցաւ երգերով, արտասանութիւններով եւ թատրոնով:

Մանկապարտէզի աշակերտներէն սկսեալ իւրաքանչիւր դասարան բեմ բարձրացաւ եւ ներբողեց Վարդանի ու իր ընկերներու անձնագրահովութիւնն ու նուիրումը. հայոց պատմութեան այդ շրջանի դերակատարները եկան տողանցեցին հանդիսութեան տեղողութեան, աշակերտներու մտքերուն մէջ դրոշմուելով որպէս պատգամ եւ զանոնք առաջնորդելու իրենց ազգային կեանքի ուղեւորութեան ընթացքին:

Հանդիսութեան վերջին բաժնով ներկայացուեցաւ Վարդանանց ճակատամարտը սկսելով Յազկերտ Բ. ի, որ կը ներկայացնէր ԱրՓիար Հարմանտձեանը,

Քրիստոնէութիւնը ուրանալու հրահանգէն մինչեւ ճակատա-

մարտը եւ Աւարայրի արծիւներու նահատակութիւնն ու հայ ժողովուրդի բարոյական յաղթանակը:

Աշակերտները՝ թէեւ երրորդ դասարան, բայց այդքան լաւ կերպով հասկցած էին 15.5 դար առաջ պատահած այդ պատմական դէպքը, որ կատարեալ կերպով ներկայացուցին իրենց վաստակած դերերը. պատմականը ստանձնած էին աղջիկները իրենց սահուն եւ հասկնալի հայերէնով բացատրեցին դէպքերը, Վարդանը՝ Ալէք Բագարեան, լրիւ տիրապետած էր բեմահարթակին եւ մեծ վճռականութեամբ հրահանգներ կը փոխանցէր հայ նախարարներուն տոգորուած հայրենասիրութեամբ,

Ղեւնդ Երէց՝ Մուրատ Տէր Պետրոսեան, իսկական Հայ Քահանայի հանդարտութեամբ կ'աղօթէր օրհնելով զինուորները պատերազմի նախօրեակին... եւ տակաւին Վարդանի աղջիկը՝ Սթելլա Շիպաթ, նախարարները, հայ գիւղականները եւ Վարդանի իմաստուն ու քաջ մայրը՝ Մարի Պասմաճեան, որ Շաւարշանա դաշտին վրայ, նահատակներուն մէջէն իր հերոս գաւկիս դիակը կը փնտռէր, մինչ երրորդ դասարանի աշակերտուհի՝ Լուսիան Հայք իր մեղմադձոտ ձայնով կ'երգէր «Լուեց Ամպեր»-ը, ստեղծելով այնպիսի մթնոլորտ մը որ կարելի էր չչլուզուել եւ պահ մը չփոխադրուել Աւարայր:

Հանդիսութիւնը փակուեցաւ Տէրունական աղօթքի երգեցողութեամբ:

Վարձքը կատար բոլոր աշակերտներուն, ուսուցիչներուն եւ ծնողներուն, որոնց միացեալ աշխատանքով անգամ մը եւս հայ դպրոցի գոյութիւնը իմաստաւորուեցաւ եւ իր առաքելութեան հաւատարիմ իրականացուց պատմական օր մը՝ որպէս հայակերտման դարբնոց:

Լինտա Գանտիլեան

ARMENIAN GENOCIDE CENTENNIAL COMMITTEE - WESTERN USA  
PRESENTS  
**GALA EVENT**  
KEYNOTE SPEAKER: MR. HAYK DEMOYAN  
DIRECTOR OF THE ARMENIAN GENOCIDE MUSEUM INSTITUTE IN YEREVAN, ARMENIA  
FULL COURSE DINNER & ENTERTAINMENT  
THURSDAY, MARCH 20, 2014  
7:00 PM



ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES  
117 S LOUISE ST,  
GLENDALE, CA 91205  
DONATION: \$100  
STUDENTS WITH CURRENT SCHOOL I.D.: \$50

Օրվա Բանախոս:  
Պրն. Հայկ Դեմոյան  
Հայոց Յեղապալուարի Ռանգարան-Ինստիտուտի Տնօրէն  
Գեղարվեստական Ծրագիր

ARMENIAN GENOCIDE CENTENNIAL COMMITTEE - WESTERN USA  
104 N. Belmont St., Suite 205, Glendale CA 91206  
Tel: 818.646.1166

## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

### ԻՆՉՊԵՍ ՉԳՐԵԼ ՊԱՏՄՈՒԲՈՒՄ

#### Շարունակում է 16-ին

երջանիկ ուշաթափութեան: Ես գուրդ եմ խանդի զգացմունքից: Նոյնիսկ երբ ընկերներս հաճոյախօսում էին նրան, ոմանք էլ համբուրում այտը, գոնէ սպիտակփամփլիկ ձեռքը համբուրէին, բայց ոչ՝ մետաքս այտերը, որոնք ասես Բոտիչելլին նկարած լինէր, ես չէի խանդում, այլ ապրում էի ներքին հպարտանք: Եթէ որեւէ մէկը, այդպիսիք հաստատ կը գտնուեն, այս կէտում ինձ չիմար համարի կամ հաւասարման նշան կը դնի իմ եւ Դոստոեւսկու Ապուշի միջեւ, մագաչափ չեմ աւարկի:

Աչք եմ ածում այս պարբերութեանը եւ շփոթում. իսկը՝ պատմուածք: Տողերն այնպէս եմ գծոտում-աղաւաղում, որ տակից ոչ մի տառ ու կետադրական նշան չընթերցուի. ո՛չ գրել եմ, ո՛չ խօսել եւ ո՛չ իսկ մտքով անցկացրել:

Հիւրանոցի առջեւ ամբոխը պարային թատրոն է խաղում: Հատուկենա ազնիւ մարդիկ կուռում են շարքերի, սատանաների, դեւերի բազմութեան դէմ: Միտտանի սեւ սատանաները, պողաւոր դեւերը, կաղ շարքերը պարելով փորձում են ազնիւներին սպանել՝ հասնելու համաշխարհային տիրապետութեան: Այս տեսարանից այնքան եմ յուզուած, որ չեմ լսում հեռախօսի երկար զանգերը: Կինս է, այս գիշեր էլ տուն չի գալ: Թատրոնը շարունակում է, ես էլ եմ դրան մասնակից: Սատանաներից մէկն ինձ հրում է խոր փոսի չատակը, բայց, իմ խելքի ու ճարպկութեան շնորհիւ, նա է յայտնուում այնտեղ: Այդուամենայնիւ, քանի որ այս գիշեր էլ կնոջս չեմ սիրելու, գուցէ նաեւ վաղն ու շատ օրեր, ինձ պարտուած եմ գտնում, կեանքի անկարգութիւնը մշտակայ է, երբեք չի լինի տիեզերական ներդաշնակութիւն, հեռու չէ այն ժամանակը, երբ արեւը կծագի արեւմուտքից, մարդը կը մոռանայ իր անունը, ինչպէս ես:

Գրադարակից վերցնում եմ «Ժամանակակից պատմուածքներ» ստուարածաւալ ժողովածուն եւ կարդում գործերի ցանկը: Կագմողն իմ այս գրութիւնը դրանում չի գետեղել, հիանալի մասնագէտ, հասկացել է, որ իմը պատմուածք չէ, այ, եթէ պիեսները գիրք կագմեր կամ վէպերի տասնատորեակ, ինձ գուցէ այնտեղ ներգրաւէր:

Ինձ համար Աստուծոյ իւրաքանչիւր օրը Չորեքշաբթի է, ինչպէս այն երեկոյ, երբ կինս տնից գնաց ու չվերադարձաւ: Միայն երբեմն գանգուլմ էր, իմանալու՝ չօքաղցած չե՞մ:

Պարային թատրոնն աւարտուել է: Այժմ երեխաները «Միլաչիի» առջեւ ընդարձակ պատառ են պարգել. «Արդարութիւն: Հաց: Ազատութիւն Նիկոլո Մաքիավելլին»: Աղանասպան ոստիկանը խլում է պատառը, պատառոտում, կրակի տալիս եւ մահակով ծեծում-քշում ցուցարարներին, հայհոյում՝ «Ես ձեր հէրն ու մէրը...»: Մի աղջնակ թքում է նրա վրայ եւ ենթարկում մահացու ծեծ-Չարդի:

Այդ ուշ գիշերին նայում էի հեռուստացոյցը եւ ոչինչ չէի տեսնում ու լսում, կարծես կոյր ու խուլ լինէի, երբ հեռախօսը բարձրաձայն գնաց, թէ բղաղեց: Միտտ վեր ու վար եղաւ. կարծեցի՝ կինս է: Նա չէր, այլ՝ ընկերուհին: «Բարեւ, Համլետ»: «Ես Համլետ չեմ, ո՛չ կեանքում, ո՛չ էլ պատմուածքի

մէջ»: «Կատակի գիշեր չէ»,- ասաց նա: «Ո՞վ ես,- թէեւ ձայնից ճանաչեցի նրան, Միւզին էր՝ կնոջս ընկերուհին: -Ի՞նչ ես ուզում»: «Լաուրան ամուսնացել է»: «Լաուրան ո՞վ է»: Չարախնդաց: «Դաւաճան կինդ»: «Ինչի՞նչ ես ինձ ասում այդ մասին»: «Նա ինձ էլ դաւաճանեց»: «Ես չեմ ուզում քեզ հետ խօսել, ցտեսութիւն»,- հեռախօսն անջատեցի: Դարձեալ զանգեց: «Լսիր, Լաուրդ ամուսնացել է այն տղամարդու հետ, ով մասնակցում էր մեր կապոյտ գիշերներին: Ես սիրեցի նրան, մենք պատրաստուած էինք ամուսնանալ, բայց Լաուրը նրան ինձնից ստորաբար խլեց»: «Հիմա վրէժ ես լուծում նրանից»: «Իսկ ինչո՞ւ ոչ»,- ասաց նա: «Օձի կծած ես, Միւզի»: «Ինձ հետ ամուսնացիր, Համլետ, երգում եմ քեզ հաւատարիմ լինել մինչեւ կեանքիս վերջը»: «Ես Լաուրային եմ սիրում»: «Պոռնիկի՞ն»,- ասաց Միւզին: «Պոռնիկին էլ կարելի է սիրել եւ շատ»: «Դու մարդ չես, Համլետ, ես քեզ ստում եմ»: Չգացի՛ լաց է լինում:

Պարում է խելագար հողմը, ապակիներ փշրում, տապալում տանիքների թիթեղեայ ծածկերը, քաղաքի աղբը հանում երկինք:

Կնոջս պատահաբար հանդիպեցի Օդակաձեւ զբօսայգում, գարնանային մի խաղաղ ու պայծառ առաւօտ: Յղի էր, ձեռքին՝ մանուշակների փունջ: Շփոթուեց: Մանուշակներով ձեռքը դրեց ծաղկած փորին եւ շիկնելով ասաց. «Իմ երեխան է»: Ասացի. «Քո երեխան իմն էլ է»: Ժպտաց եւ մանուշակները մեկնեց ինձ: Նա աւելի գեղեցիկ էր, քան առաջ, ափսոս, այդ օրը աշխարհում չկար մի նկարիչ, որ յաւերժացնէր նրա ստուածային հմայքը: Եկայ տուն եւ մանուշակները դրեցի այն գաւաթի մէջ, որով նա սուրճ էր ըմպում: Առանց պատուհանից շրջուելու՝ ես տեսնում եմ մանուշակները, նրանք չեն թառամում, որքան ժամանակն անցնում է՝ նրանք ինձ նայում են աւելի կենդանի ու ժպտուն աչքերով:

Քամին դադարեց: Աղբը երկնքից դանդաղ իջնում է մարդկանց վրայ:

Ինձ հրաւիրեցին Փարիզ՝ մասնակցելու սրտաբանութեան հարցերին նուիրուած միջազգային գիտաժողովի: Իմ գեկուցումը համատարած ծիծաղ առաջացրեց. ես փորձում էի ապացուցել, որ մարդկային սիրտն արեան հոսքի խաչմերուկ չէ, այլ՝ բանաստեղծութիւն, ո՛չ պատմուածք, ո՛չ վէպ կամ պիես: Ի՛հ, թող միայնակ մնամ, բժիշկներն էլ են կաղապարուած եւ չեն ընդունում մտքի որեւէ ալլընտրանք: Ես Լաուրայի մահն իմացայ երեւան վերադառնալուց յետոյ, Միւզին հեռախօսով յայտնեց եւ չկարողացաւ խեղդել հեկեկոցը՝ «Նա իմ ամենալաւ ընկերուհին էր»: «Մեր սերնդի» հարբած վարորդը, որ Ազգային ժողովի պատգամաւորներից մէկի փեսան էր, յղի Լաուրային վրաերթի էր ենթարկել: Իհարկէ, նրան դատեցին՝ անսթափ վիճակում մեքենայ վարելու համար, եւ բաւարարուեցին դրամական տուգանքով, որն աները վճարեց կամ չվճարեց: Դատաւորն ամբողջ մեղքը ետմահու բարդեց Լաուրայի անզգուշութեան վրայ, որ նա, ծննդաբերելուց ընդամէնը մէկ շաբաթ առաջ, փորձանակ տանը նստելու, փողոց է ելել: Իհարկէ, Լաուրան անզգուշ էակ էր, ինձ հետ ամուսնանալուց առաջ եւ

#### Շարունակում է 14-ին

տառը վերցուցած, կ'ունենանք ՆԵՐՍԻՍԻ ԵՐԳ՝ հեղինակին անունը:

Պատկերներուն սիւնակը կարեւոր կը նկատեմ անոր համար, որ շարականները նա'եւ պատկերներու առաջին տուններուն սկզբնատողերով կը կոչուին եւ ուսուցումը այդ ձեւով կը կատարուի: Հմուտ շարականագէտն իսկ դժուար թէ մի առ մի չի չէ հազարաւոր տուններուն անունները: Եթէ մէկը գիտէ պատկերի միայն առաջին տան անունը, առանց ձեռքին մէջ ունենալու Շարակնոց մը, դիմելով Պրն. Թորիկեանի Աշխատանքին Ինչպէս անոր քանի տուն ըլլալն ու միւս տուններուն անունները պիտի իմանայ կարենալ ամբողջական տուեալներ հաւաքելու համար:

Կրկին վերի շարականը գործածելով որպէս օրինակ ըսեմ որ պիտի չկարենայ, որովհետեւ պիտի իմանայ միայն առաջին տան տուեալները (նայիլ Պրն. Թորիկեանի Աշխատանքին էջ 357ին): Առանց տեղեկանալու ինչպէս ուղղուիլ երկրորդ եւ երրորդ տուններուն հաւաքելու համար անոնց ալ տուեալները: (Երկրորդ եւ երրորդ տուններուն տուեալները կարելի է հաւաքել իւրաքանչիւր տան սկզբնատողերը գործածելով Աշխատանքին մէջ 445ին եւ էջ 358ին վրայ):

Այս պատճառներով կարեւոր կը նկատեմ «պատկեր»ներու սիւնակ ունենալը:

2. Կանոնի այն «Մանկունք» շարականները, որոնք միայն որպէս «Համբարձի» կը գրուէին, պարզապէս մագաղաթի, մեկնի ու աշխատանքի խնայողութեան պատճառներով չէին գրեր «Մանկունք»ը: Հետեւաբար, երբ Կանոնի մը մէջ «Մանկունք» շարականը գրուած չենք տեսնել այդ չի նշանակել, թէ այդ օրը «Մանկունք» շարական չէր գրուի: Այդ օրը այդ Կանոնի «Համբարձի» շարականը կ'երգուի որպէս Կանոնին «Մանկունք» շարականը եւս կամ փոխադարձաբար: Լաւ կ'ըլլար ունենալ այսպիսի բացատրական մը:

3. Պրն. Թորիկեան, շարականները ուսումնասիրողներուն առաւել եւս օգտակար կ'ըլլար, եթէ երբեք զանազան պատճառներով Երուսաղէմ-Անթիլիաս Շարակնոցին մէջ հարցեր չառաջացուցած երեւոյթները քիչ մը անհատական պրպտումներով լուսաբանուած ըլլային: Այսպէս, Զեռաց Շարակնոցի 371-373 էջերուն վրայ կը գտնենք Զատիկուայ Յինանի շրջանին երգուող վեց «ճաշու» շարականներ, որոնց առաջինին ձայնը նշուած է որպէս ԱԶ ձայն: Միւս հինգ «ճաշու»ներուն առջեւ ձայնի նշում չկայ: Շարականագիտութեան գիտակ անձի մը համար այս կը նշանակէ, թէ յաջորդ հինգ «ճաշու» շարականները եւս պէտք է

երգուին ԱԶ ձայնով, ինչ որ այս պարագային կը տեսնենք ԱԶ ձայնի նշումը վենետիկի Շարակնոցին մէջ:

Այս երկու շարակնոցներն ալ սխալ են ու այդպէս ալ արձանագրուած Պրն. Թորիկեանի Աշխատանքին Երուսաղէմ-Անթիլիաս Շարակնոցի բաժնին մէջ, հերթականութիւնը պահելով, 450րդ, 430րդ, 514րդ, 450րդ եւ 485րդ էջերուն վրայ, իսկ վենետիկի Շարակնոցին՝ 218րդ, 228րդ, 186րդ, 319րդ, 218րդ եւ 273րդ էջերուն վրայ:

Արագ ակնարկ մը այս վեց «ճաշու» շարականներուն խաղերուն վրայ պիտի նկատենք անոնց տարբերութիւնները: Այդ արդէն իսկ ահագնազ կը հնչեցնէ:

Մեզի հասած առաջին «ճաշու» շարականին այնքան պայծառ, գեղեցիկ եւ ցնծալի «Գովեա՛ Երուսաղէմ գՏէր. Յարեաւ Քրիստոս»ի եղանակէն, գոր կ'երգենք Զատիկուայ տօնին, եղանակը ոչ թէ կ'ընթանայ ԱԶ ձայնի մէջ, այլ՝ ԲԿ ձայնի կատարած ուսումնասիրութեամբ եկայ այն եզրակացութեան որ, այս վեց «ճաշու» շարականները յօրինուած են հետեւեալ ձայներով.

Առաջինը՝ ԲԿ ձայնով, Երկրորդը՝ ԱԶ ձայնով, Երրորդը՝ ԲԿ ձայնով, Չորրորդը՝ ԱԶ ձայնով, վեցերորդը՝ ԱԶ դարձուածք ձայնով:

Շարակնոցներուն մէջ այս վեց «ճաշու» շարականներուն ԱԶ-ով ձայնանշումը կատարուած է պարզապէս յարգած ըլլալու համար միշտ ԱԶ ձայնով տօնախմբուող Ս. Զատիկը:

Այս կէտերու նշումէն յետոյ կը վերջացնեմ ներկայացումս ըսելով.

Հայց. Եկեղեցույ Շարակնոցները, իրենց չափազանց հարուստ, այլազան տեսակի, բազմաթիւ եւ բազմաբնոյթ նիւթերու, բանաստեղծական ու երաժշտական գոյգ տարողութիւններու շարականներով հետազօտողին համար ուսումնասիրողին համար անսահման դաշտ է: Եւ Պրն. Թորիկեան, այս հսկայածաւալ եւ մնայուն աշխատանքով կու գայ հետաքրքրողին, հայ թէ օտար, տալու այն բանալին, որով պիտի կարողանայ աւելի դիւրութեամբ մտնել հայ ժողովուրդին հպարտութիւնը եղող, Հայց. Եկեղեցույ հայրեուն յօրինած աղօթք երգերուն՝ Շարակնոցներուն այնքան հմայիչ աշխարհէն ներս:

Գիրքը ստանալու համար կարելի է դիմել հետեւեալ հասցէին. Gerard Torikian (Musicologist) 16, Rue De L'Orme 95570 Attainville, France Tel. 33 (0) 139.91.25.48 E-mail, gtorikian@wanadoo.fr Այս առթիւ կու գանք շնորհակալական խոր զգացումներով շնորհաւորելու Պրն. Թորիկեանը եւ մաղթելով քաջաւորջութիւն ըսել՝ Վարձքերնիդ կատար:

րը: Միտտանի սատանայ, դեւ ու շարքեր: Ոստիկանը կը սպանի աղաւնուն: Քամին աղբը կը հանի երկինք:

Իմ դժուար քաղաք: Սա պատմուածքի տող չէ:

Սպասում եմ... Ուր որ է՝ փողոցում կ'երեւայ Լաուրան, կը նայի պատուհանիս եւ կը ժպտայ: Ես էլ՝ նրան:

Վերջ: Ես այս գրուածքը անձամբ յանձնեցի «Գրական թերթի» գլխաւոր խմբագրին եւ խնդրեցի չտպագրել:

յետոյ: Բայց ո՞վ ասաց, թէ անզգուշութիւնը բնաւորութեան թուլութիւն է կամ թերութիւն, զգուշաւորներից հեռու փախիւր, ովքեր զգուշանում են մինչեւ իսկ մի ճշմարիտ բառ ասելուց:

Միտտեց: Գնամ նստեմ հեռուստացոյցի առջեւ ու ոչինչ չտեսնեմ: Վաղն առաւօտից դարձեալ կը կանգնեմ պատուհանի մօտ: Ժանգոտ ծխնելոյզներից ծուխ չի ելնի: «Միլաչի» հիւրանոցից դուրս կը գայ Դանեմարքայի իշխան Համլետը, ով ինձ նման է միայն իր տխրութեամբ: Կը հռնդան տանկե-